ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2009

Զարգացումը
Կարգավորումը
Վերահսկողությունը

2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները 2009 թվականին 5

Վերահսկողությունը 2009 թվականին 19

Կադրերի վերապատրաստումը և համագործակցությունը այլ երկրների վերահսկողների հետ 2009 թվականին 22

ՀՀ ֆինանսական համակարգը 2009 թվականին 25

Առևտրային բանկեր 25

Ընդհանուր դրույթներ 25

Բանկային համակարգի կապիտալը 27

Բանկային համակարգի պարտավորությունները 29

Բանկային համակարգի ակտիվները 32

Բանկային համակարգի ֆինանսական արդյունքները 38

Բանկային համակարգի ֆինանսական ռիսկերը 41

Վարկային կազմակերպություններ 46

Ապահովագրական ընկերություններ 50

Արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցներ 59

Գրավատներ 62

Արտարժույթի առք ու վաճառքի փոխանակման կետեր, արժութային դիլերներ 62

Վճարահաշվարկային կազմակերպություններ 62

Վճարահաշվարկային համակարգ 65

Վերահսկողության զարգացման հեռանկարները 78

Հավելվածներ 87

Հավելված 1. Ֆինանսական համակարգի վերահսկողությունը և կարգավորումը *86*

Հավելվածներ 2 – 38. Աղյուսակներ *106*

ՆԱԽԱԲԱՆ

2009 թվականը ՀՀ ֆինանսական համակարգի համար լի էր ֆինանսատնտեսական ճգնաժամից բխող մարտահրավերներով: Համաշխարհային ճգնաժամի բացասական ազդակները Հայաստանի ֆինանսական համակարգ էին ներթափանցել դեռ 2008 թվականի չորրորդ եռամսյակից, երբ տնտեսական աճի տեմպերը զգալի նվազել էին իրական հատվածի գրեթե բոլոր ճյուղերում:

Իրականացնելով ՀՀ ֆինանսական համակարգի վրա համաշխարհային ճգնաժամի ազդեցության մեղմման քաղաքականություն՝ 2009 թվականին ԿԲ-ն դրամավարկային քաղաքականության գերակա խնդիր համարեց գների և ֆինանսական համակարգի կայունության հիմնահարցերի զուգորդումը: Ազգային արժույթի արժեզրկման ճնշումների, դրամային ավանդները դոլարայինով փոխարինելու հետևանքով բանկային համակարգում հավանական էր դարձել արտարժութային իրացվելիության և կապիտալի բավարարության հետ կապված ռիսկերի դրսևորում: Այդ ռիսկերը չեզոքացնելու նպատակով, ԿԲ-ն տարեսկզբին (հունվար և փետրվար ամիսներին) մեծացրեց միջամտությունն արտարժույթի շուկայում՝ փորձելով կայունացնել փոխարժեքը: Միաժամանակ, ԿԲ-ն բավականաչափ ակտիվ էր ֆինանսական շուկայում՝ հնարավորություն տալով բանկերին ամրացնել իրենց ֆինանսական դիրքերը և դիմագրավել համաշխարհային ճգնաժամից բխող ճնշումներին: Մարտի սկզբին, երբ ֆինանսական համակարգը բավարար կապիտալացված էր, իրացվելի և պատրաստ դիմակայելու ճգնաժամի հետագա մարտահրավերներին, ԿԲ-ն դադարեցրեց ակտիվ միջամտությունն արտարժույթի շուկայում: Արդյունքում՝ ազգային արժույթի փոխարժեքը մարտին ճշգրտվեց արժեզրկման ուղղությամբ, և տարվա կտրվածքով ՀՀ դրամի միջին անվանական փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվեց 18.8%-ով (իսկ 2009 թ. վերջին, 2008 թ. վերջի համեմատ՝ 19.4%-ով): Ազգային արժույթի զգալի արժեզրկումը, զուգորդվելով տնտեսական անկմամբ, ինչպես նաև տրանսֆերտների և գործոնային եկամուտների նվազմամբ, բանկային համակարգում որոշակի մեծացրեց ռիսկերով պայմանավորված ծախսերի մակարդակը: Հատկանշական է սակայն, որ ամբողջ տարվա ընթացքում ռիսկերը, այնուամենայնիվ, պահպանվել են կառավարելի շրջանակներում, և բանկային համակարգը իրացվելիության և անվճարունակության խնդիրներ չունեցավ: Միաժամանակ, ՀՀ բանկային համակարգը, չունենալով կարճաժամկետ արտաքին պարտավորություններ, չկանգնեց տնտեսությունից միջոցների արտահոսքի խնդրի առջև: Կենտրոնական բանկի և ֆինանսական ինստիտուտների կողմից իրականացված հակաճգնաժամային միջոցառումների արդյունքում Հայաստանում որևէ ֆինանսական հաստատություն (նաև ոչ բանկ) անվճարունակության խնդիր չունեցավ: ՀՀ ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակիցը բանկային համակարգն[1] է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 92%-ը:

Բանկային համակարգի զարգացումների առանձնահատկությունների տեսանկյունից՝ տարին կարելի է բաժանել երկու կիսամյակի: Տարվա առաջին կիսամյակը բանկային համակարգի համար հիմնականում նորաթափանց ճգնաժամի ռիսկերի գնահատման, դիրքերի ճշգրտումների և զսպման մեխանիզմների մշակման ժամանակահատված էր: 2009 թվականի առաջին կիսամյակի ընթացքում և՛ բանկային համակարգը, և՛ վարկառուները զգուշավոր վարքագիծ դրսևորեցին՝ պասիվացնելով վարկային շուկայի գործունեությունը: Արդյունքում՝ առաջին կիսամյակում արձանագրվեց տնտեսությանը տրամադրած վարկերի ծավալի 1%-ով նվազում: Հատկանշական է նաև, որ տարվա առաջին կեսին վատորակ վարկերի («հսկվող», «ոչ ստան-

[1] *Դիտարկվող ժամանակահատվածում բանկային համակարգը ներառում է 22 առևտրային բանկեր:*

դարտ» և «կասկածելի» դասերի վարկերը) տեսակարար կշիռը հասավ միևչև 10%-ի: 2009 թվականի երկրորդ կիսամյակից արդեն վարկային շուկան էապես աշխուժացավ (տարվա կտրվածքով ապահովեց տնտեսությանը տրամադրված վարկերի 14% աճ)՝ ինչին նպաստեցին բանկերի և վարկառուների շրջանում վարկառուների եկամուտների կայունության որոշակի սպասումների ձևավորումը, ԿԲ կողմից որդեգրված ընդլայնողական քաղաքականությունը և պետության աջակցությամբ իրականացվող տարբեր ծրագրերը: Տարվա երկրորդ կեսին էապես լավացավ նաև վարկերի որակը, և վատորակ վարկերի տեսակարար կշիռը նվազելով՝ տարեվերջին արդեն կազմեց 4.8%:

Վարկային շուկայում 2009 թվականի հատկանշական դրսևորումներից էր վարկերի կառուցվածքի փոփոխությունը, ըստ որի՝ 2009 թվականին վարկավորումը գերազանցապես տրամադրվել է իրավաբանական անձանց՝ մեծացնելով վարկային պորտֆելում վերջիններիս տեսակարար կշիռը, ինչն իր հերթին նպաստեց 2009 թվականի երկրորդ կիսամյակում տնտեսության ակտիվացմանը:

Կարևորվում է նաև այն հանգամանքը, որ 2009 թվականի ընթացքում բանկային համակարգի վարկային ներդրումների (ներառում է նաև լիզինգը, ֆակտորինգը, վարկային ռիսկ պարունակող այլ միջոցները) ծավալը գրեթե նույնչափ էր, որքան 2008 թվականին, և կազմում էր մոտ 970 մլրդ դրամ: Սակայն քանի որ նախորդ՝ 2007 և 2008 թվականների ընթացքում բանկային համակարգը արձանագրել էր վարկային ներդրումների կտրուկ աճ և, հետևաբար, 2009 թվականին, նախորդ տարվա համեմատ, բավականաչափ մեծացել էր վարկերի մարումների ծավալը, ապա հաշվետու տարվա ընթացքում վարկային ներդրումների աճը (տեղաբաշխված և մարված վարկային միջոցների տարբերություն) զիջեց 2008 թվականի համապատասխան աճին՝ կազմելով 156 մլրդ դրամ (2008 թվականին աճը կազմել է 202 մլրդ դրամ):

Տարվա առանձնահատուկ դրսևորումներից էր նաև դոլարայնացման մակարդակի կտրուկ բարձրացումը. բանկային համակարգի դրամային ակտիվների և պարտավորությունների տեսակարար կշիռները նվազել են 12.5-ական տոկոսային կետերով՝ համապատասխանաբար կազմելով 46.9% և 32.4%:

Ընդհանուր առմամբ, բազմապիսի մարտահրավերների ներքո 2009 թվականին ՀՀ բանկային համակարգը պահպանել է զարգացման ու աճի միտումները և ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում դրսևորել բարձր ճկունություն: Բանկային համակարգը ապահովել է ակտիվների 29.5% աճ, կապիտալի 18.2% աճ, ինչպես նաև, թեպետ ցածր, բայց այնուամենայնիվ շահութաբերության մակարդակ (շահութաբերությունն ըստ ակտիվների կազմել է 0.74%, ըստ կապիտալի՝ 3.43%):

Բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակը 2009 թվականին բավականին բարձրացել է, սակայն դեռևս զիջում է ԱՊՀ շատ երկրների նույն ցուցանիշին: Բանկային համակարգի ակտիվների աճին զուգընթաց, տնտեսությունում արձանագրվել է անվանական ՀՆԱ-ի նվազում, ինչի արդյունքում բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը 2009 թվականին ավելացել է 13.8 տոկոսային կետով՝ կազմելով 41.9%: Բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցությունն ավելացել է 5.3 տոկոսային կետով և կազմել 22.2%:

2009 թվականին ՀՀ կենտրոնական բանկը մի շարք միջոցներ է ձեռնարկել Հայաստանի ֆինանսական համակարգի վրա ճգնաժամի ազդեցության մեղմման ուղղությամբ: Կենտրոնական բանկը իրականացրել է բանկային, արժեթղթերի, ապահովագրության շուկաների ներդաշնակ զարգացմանն ուղղված բարեփոխումների շարունակական աշխատանքներ՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը, վճարահաշվարկային համակարգի կատարելագործումը և ֆինանսական համակարգի կայուն զարգացումը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2009 ԹՎԱԿԱՆԻՆ

Ներքին և արտաքին տնտեսությունների իրական և ֆինանսական հատվածների շարունակական զարգացումները ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի վերանայման և կատարելագործման անհրաժեշտություն են առաջացնում: 2009 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է ՀՀ ֆինանսական համակարգի գործունեությանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական բարեփոխումների իրականացման գործընթացը:

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները

Օրենսդրական փոփոխություններ

2009 թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ Կառավարություն ներկայացրեց ««Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և ««Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք նպատակաուղղված են ֆինանսական ճգնաժամի պայմաններում ֆինանսական համակարգը ցնցումներից զերծ պահելուն, ֆինանսական համակարգի կարգավորման դաշտը ԵՄ օրենսդրության չափանիշներին առավելագույնս համապատասխանեցնելուն:

««Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով բարձրացվել են երաշխավորված ավանդի չափերը: Մասնավորապես՝

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը երկու միլիոն հայկական դրամի փոխարեն չորս միլիոն դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը մեկ միլիոն հայկական դրամի փոխարեն երկու միլիոն դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը երկու միլիոն դրամից (մեկ միլիոն հայկական դրամի փոխարեն) ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը (մինչև չորս միլիոն հայկական դրամ).

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է երկու միլիոն հայկական դրամից (մեկ միլիոն հայկական դրամի փոխարեն), ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ երկու միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների լրացումներով նախատեսվել

է, որ այն դեպքում, երբ հատուցման դեպք առաջանալու պահին կարող է վտանգվել Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունությունը (իրացվելիությունը և/կամ վճարունակությունը), Կենտրոնական բանկը կարող է, ԿԲ խորհրդի կողմից սահմանված կարգով, պայմաններով և ժամկետներով Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին տրամադրել բյուջետային երաշխիքով ապահովված վարկեր:

2009 թվականին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շարունակել է նախորդ տարիներին իր կողմից մշակված, մասնավորապես՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին», ««Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Կանխիկ գործառնությունների սահմանափակման մասին», «Սնանկության մասին» ՀՀ օրենքներում և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունների, խմբերի, անհատ պատգամավորների հետ համատեղ լրամշակման աշխատանքները:

Ենթաօրենսդրական փոփոխություններ

2009 թվականի ընթացքում Կենտրոնական բանկի կողմից մշակվել և փոփոխվել են բանկային գործունեությանն առնչվող հետևյալ իրավական ակտերը.

- Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում: Մասնավորապես՝
  - Վերը նշված կազմակերպությունների կողմից ղեկավարների գրանցման համար ներկայացվող տեղեկությունների համար սահմանվել է միասնական ձև: Այն հնարավորինս պարզեցվել է՝ օգտագործողների համար առավել մատչելի դարձնելու նպատակով:
  - Առավել օպերատիվ կերպով տեղեկությունների տրամադրումն իրականացնելու նպատակով վերը նշված կազմակերպությունները ղեկավարների գրանցման համար միջնորդագիրը պետք է ներկայացնեն էլեկտրոնային եղանակով:
  - Այն դեպքերում, երբ ղեկավարների վերաբերյալ տեղեկությունները փոփոխվում են, ներկայացվում են միայն փոփոխված և նույնականացման տվյալները (անուն, ազգանուն, ծննդյան տվյալներ):
- Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում, որի համաձայն՝

- Պարտադիր պահուստավորման չեն ենթարկվում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի թիվ 717 Ա որոշմամբ հաստատված՝ տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի Բաղադրիչ 1-ի միջոցները, ինչպես նաև հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման նպատակով «Ազգային հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունից ներգրաված միջոցները:

- Բանկերի գործունեությունը կարգավորող նորմատիվային դաշտը համալրվել է ևս մեկ՝ արտարժույթի տնօրինման նորմատիվով: Վերջինս բաղկացած է երկու տարրերից՝ արտարժութային համախառն դիրք և ըստ առանձին արտարժույթների բաց դիրք: Արտարժութային համախառն դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը սահմանվել է 10 տոկոս: Ըստ առանձին արժույթների՝ յուրաքանչյուր արտարժույթի բաց դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը սահմանվել է 7 տոկոս: Արտարժույթի տնօրինման նորմատիվը հաշվարկվելու է օրական կտրվածքով: Նորմատիվն ուժի մեջ է մտնելու 2010 թվականի ապրիլի 14-ից:

- Սահմանվել է, որ երկարաժամկետ ստորադաս փոխառությունները, որոնք ներառվում են բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում, ենթակա չեն պարտադիր պահուստավորման:

- Կարճաժամկետ հատվածում Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերում արտարժութային երկար դիրքերի հետ կապված ռիսկերը զսպելու նպատակով Կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 300-Ն որոշմամբ սահմանվել է արտարժութային դիրքի հատուկ տնտեսական նորմատիվ, որը գործողության մեջ է դրվել 2009 թվականի հոկտեմբերի 26-ից՝ 6 ամիս ժամկետով: Նորմատիվը բաղկացած է երկու տարրերից.

  ա. յուրաքանչյուր արտարժույթի երկար դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցություն,

  բ. բոլոր արտարժույթների երկար դիրքերի հանրագումարի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցություն:

  Նորմատիվի առավելագույն չափը սահմանվել է.

  ա. յուրաքանչյուր արտարժույթի երկար դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև՝ 7 տոկոս,

  բ. բոլոր արտարժույթների երկար դիրքերի հանրագումարի և բանկի ընդհանուր կապիտալի միջև՝ 10 տոկոս:

- Ներդրումային ծառայություններ մատուցող անձ չհանդիսացող կազմակերպությունների կողմից արժեթղթերի երկրորդային շուկայում բոլոր տիպի բաժնային և պարտքային արժեթղթերով իրականացված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և վերահսկողական, վերլուծական ու վիճակագրական նպատակներով օգտագործման համար լրացումներ են կատարվել «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում և «Վարկային

կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ում, ինչի արդյունքում մեկական նոր հաշվետվության ձև է ընդգրկվել բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում: Նշված հաշվետվական ձևերը փոխարինել են «Պարտատոմսերի երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների մասին հաշվետվությունը և դրա ներկայացումը» կարգին:

- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման և տվյալների պահպանման կարգում», որի համաձայն՝ բանկերը պետք է ամսական պարբերականությամբ, մինչև հաջորդ ամսվա հինգերորդ աշխատանքային օրը, Կենտրոնական բանկ ներկայացնեն իրենց ավանդատուների վերաբերյալ տվյալների բազան: Ներկայացված տվյալների արժանահավատությունը պարզելու համար Կենտրոնական բանկում պահվող տվյալները տեղերում ստուգումների ժամանակ համեմատվելու են բանկում առկա ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի տվյալների հետ:

Ապահովագրական շուկայի կարգավորման նպատակով 2009 թվականի ընթացքում Կենտրոնական բանկի կողմից մշակված և փոփոխված հիմնական իրավական ակտերն են.

- «Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ը: Փոփոխության հիմնական նպատակը ՀՀ կենտրոնական բանկի կողմից վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների գրանցման ընթացակարգերի նույնականացումը և պարզեցումն է՝ գրանցման համար ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերի կրճատման և այդ փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու պահանջի միջոցով:

- «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 3/02-ը. բարձրացվել է մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվի (Ն5 նորմատիվ) առավելագույն սահմանաչափը, հաշվարկման կարգը և հաշվարկին մասնակցող տարրերի կազմը: Փոփոխությունների հիմնական նպատակն է հնարավորություն տալ ապահովագրական ընկերություններին Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու

դեպքում կնքել խոշոր ապահովագրության պայմանագրեր, որոնց գծով դեբիտորական պարտքը կարող է գերազանցել ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի 20%-ը, եթե բավարարված են ապահովագրական ընկերությունների վարկային ռիսկի զսպմանն ուղղված՝ կանոնակարգով սահմանված պայմանները: Հաշվի առնելով ապահովագրական շուկան բնութագրող հիմնական ցուցանիշների աճի նախապես կանխատեսված միտումների փոփոխությունը՝ պայմանավորված տնտեսական ճգնաժամի ազդեցությամբ, պարտադիր ապահովագրության ներդրման հետաձգմամբ, վերանայվել են ապահովագրական ընկերությունների ընդհանուր կապիտալի 2010 թվականի համար սահմանված սահմանաչափերը՝ ոչ կյանքի ապահովագրության բոլոր դասերի գծով կապիտալի նվազագույն սահմանաչափը սահմանվել է 1 մլրդ դրամ մինչև 2011 թ.: Իսկ 2011 թ. հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո պատասխանատվության, վարկի և երաշխիքի տրամադրման ապահովագրության դասերի գծով ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափը սահմանվել է 1.5 մլրդ դրամ:

- «Ապահովագրական ընկերությունների ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման և օգտագործման կարգը» կանոնակարգ 3/09-ում կատարված փոփոխությունների նպատակն է կարգավորել կանոնակարգի կիրառման հետ կապված խնդիրներն ու անհստակությունները (հստակեցվել է դասակարգման ենթակա ակտիվների կազմը, ավելացվել են որոշ սահմանումներ՝ հնարավոր երկիմաստություններից խուսափելու նպատակով), ապահովել դասակարգման ենթակա ակտիվների մասին ամբողջական և արժանահավատ տեղեկատվության ներկայացում, որը բավարար կլինի վերահսկողական, վերլուծական և վիճակագրական նպատակներով օգտագործելու համար:

- «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ում (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 08.09.2009թ. 271-Ն որոշմամբ) կատարված փոփոխություններով ավելացվել են նոր հաշվետվական ձևեր: Մասնավորապես, նոր հաշվետվական ձև՝ տարեկան պետական տուրքերի և ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի օգտին կատարված պարտադիր վճարների վերաբերյալ: Նշված փոփոխության նպատակն է ապահովել արդյունավետ վերահսկողություն՝ ապահովագրական ընկերությունների կողմից տարեկան պետական տուրքի, ինչպես նաև ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի օգտին վճարումների իրականացման նկատմամբ: Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների կազմը լրացվել է ևս մեկ նոր հաշվետվական ձևով, որի նպատակն է ապահովագրական ընկերությունների համար «Արտարժութային դիրքերի վերաբերյալ» հաշվետվության սահմանման միջոցով վերահսկողներին հնարավորություն տալ հեռակա վերահսկողության ընթացքում տեղեկատվություն ստանալ ապահովագրական ընկերությունների՝ արտարժութային ռիսկ պարունակող ակտիվների, պարտավորությունների, հետհաշվեկշռային հոդվածների, ինչպես նաև արտարժութային դիրքերի վերաբերյալ և այդ տեղեկատվության հիման վրա գնահատել և վերլուծել ապահովագրական ընկերությունների զգայունությունը արտարժութային ռիսկերի նկատմամբ: «Ապահովագրական ընկերությունների ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման և օգտագործման կարգը» կանոնակարգ 3/09-ում իրականացված փոփոխություններով պայմանավորված՝ փոփոխություններ են կատարվել ապահովագրական ընկերությունների կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում, որոնք ուղղված են վերահսկողական և վերլուծական գործընթաց-

ների արդյունավետության բարձրացմանը: Նոր հաշվետվական ձև և դրա ներկայացման կարգ է սահմանվել ապահովագրական ընկերությունների կողմից արժեթղթերի երկրորդային շուկայում իրականացվող գործարքների (անկախ արժեթղթերի տեսակից) վերաբերյալ: Նոր հաշվետվական ձևով հավաքագրվող տեղեկատվությունն օգտագործվելու է վերահսկողական, վերլուծական և վիճակագրական նպատակներով: Այս որոշմամբ հստակեցվել են մինչ որոշման ընդունումը գործող «Պարտատոմսերի երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների մասին հաշվետվությունը և դրա ներկայացումը» կարգում ընդգրկված հաշվետվությունների կազմը, որոշակի ընդլայնվել է դրանց շրջանակը՝ տարածելով դրանք նաև բաժնետոմսերի և մինչ այդ կարգում չներառված պարտատոմսերի վրա («Գ -»-ից ցածր):

- «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների գործունեության ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՌԱՄԵԼՍ) հաշվարկման մեթոդաբանությունը» կանոնակարգ 3/08-ում կատարված փոփոխությունների նպատակն է ՔԱՌԱՄԵԼՍ ամփոփ գնահատականի հաշվարկման մեթոդաբանության բարելավման (առկա թերությունների շտկում և հեռակա վերահսկողության արդյունքում հասանելի նոր տեղեկատվության հիման վրա նոր հարաբերակցությունների սահմանում) միջոցով բարձրացնել ՀՀ ԿԲ Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից ապահովագրական ընկերությունների նկատմամբ հեռակա վերահսկողության իրականացման արդյունավետությունը:

- Մշակվել և հաստատվել է «Ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգին ներկայացվող նվազագույն պահանջները» կանոնակարգ 3/10-ը (հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 02.06.2009 թ. 163-Ն որոշմամբ): Կանոնակարգի նպատակն է ապահովագրական ընկերությունների ներքին հսկողության համակարգերի նկատմամբ նվազագույն պահանջների սահմանման միջոցով նպաստել ՀՀ ապահովագրական ընկերություններում արդյունավետ ներքին հսկողության համակարգերի առկայության ապահովմանը, որն, իր հերթին, կհանգեցնի ապահովագրական ընկերություններում ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը՝ նպաստելով ՀՀ ապահովագրական շուկայի կայունությանը և զարգացմանը:

- Մշակվել և հաստատվել է «Երաշխիքի տրամադրման դասով ապահովագրական ընկերությունների գործունեության սահմանափակման և իրականացման հատուկ կարգ»: Ապահովագրական համակարգի ֆինանսական կայունության ապահովման, ռիսկայնության մակարդակի զսպման, ապահովադիրների և շահառուների շահերի պաշտպանության նպատակով սահմանափակվել է ապահովագրական ընկերությունների կողմից երաշխիքների տրամադրման դասով գործունեության իրականացումը, ինչպես նաև սահմանվել է այդ գործունեության իրականացման հատուկ կարգ:

Արժեթղթերի շուկայի կարգավորման նպատակով 2009 թվականին Կենտրոնական բանկի կողմից մշակված և փոփոխված նորմատիվային իրավական ակտերը.

- Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատու-

ցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» Կանոնակարգ 4/05-ում: Կատարված փոփոխությունների և լրացումների հիմնական նպատակներն են ՀՀ ԿԲ կողմից վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների գրանցման ընթացակարգերի նույնականացումը և պարզեցումը՝ գրանցման համար ԿԲ ներկայացվող փաստաթղթերի կրճատման և այդ փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու պահանջի միջոցով:

- Հաստատվել է «Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից իր ինտերնետային կայքում հրապարակվող տեղեկությունների ծավալը և հրապարակման կարգը» կանոնակարգ 5/06-ը, որը կբարձրացնի արժեթղթերի շուկայի թափանցիկության մակարդակը, ուստի և արժեթղթերի շուկայի նկատմամբ վստահությունը, ինչպես նաև կնպաստի արժեթղթերի շուկայի մասնակիցների կողմից ճիշտ որոշումներ կայացնելու գործընթացին:

- Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ում, որի արդյունքում բոլոր ներդրումային ծառայություններ մատուցող անձինք իրենց գործունեության (ներդրումային ծառայությունների մատուցման գծով) վերաբերյալ տեղեկությունները բացահայտում են մեկ միասնական կանոնակարգի միջոցով՝ միասնական մոտեցմամբ (նախկինում բանկերի, պետական գործակալների, դիլերների կողմից պետական արժեթղթերի երկրորդային շուկայում իրականացված և ռեպո գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում էին առանձին կանոնակարգով):

- Հաստատվել է «Հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/09-ը: Կանոնակարգով սահմանվել են այնպիսի չափանիշներ, որոնց առկայության պարագայում միայն հեղինակավոր, վստահելի, բարի համբավ ունեցող, հաշվետու թողարկողից անկախ աուդիտորական ընկերությունները կարող են իրականացնել հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը: Կանոնակարգի կիրառման արդյունքում կբարձրանա պոտենցիալ ներդրողների և այլ շահագրգիռ անձանց վստահությունը հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց, ուստի նաև հաշվետու թողարկողների նկատմամբ, որն էլ, իր հերթին, կբարձրացնի արժեթղթերում ներդրումներ կատարելու՝ ներդրողների վստահությունը:

- Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ում: Փոփոխվել են ներդրումային ընկերությունների ընդհանուր կապիտալի և կանոնադրական կապիտալի նվազագույն չափերը՝ համաձայն համապատասխան ծառայություններ մատուցելու՝ նրանց կողմից ձեռք բերված իրավունքների, ինչպես նաև սահմանվել է ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը: Ֆինանսական շուկայի երկու մասնակիցների՝ բանկերի և ներդրումային ընկերությունների պրուդենցիալ վերահսկողության համակարգերը հիմնականում ներդաշնակեցվել են, քանի որ ներդրումային

ընկերությունները իրենց գործունեության ընթացքում բախվում են միևնույն ռիսկերի հետ, ինչ որ բանկերը: Փոփոխություններ կրած Կանոնակարգ 4/02-ը թույլ կտա Կենտրոնական բանկին ընդլայնել ներդրումային ընկերությունների նկատմամբ պրուդենցիալ վերահսկողության շրջանակները, կբարձրացնի ներդրողների վստահությունը ներդրումային ընկերությունների նկատմամբ և, ընդհանուր առմամբ, կնպաստի ֆինանսական համակարգի կայունությանը:

- Համապատասխան լրացումներ են կատարվել «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ում, «Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ում, «Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ում, որոնց նպատակն է սահմանել տարեկան պետական տուրքի վճարման վերաբերյալ նոր հաշվետվական ձև, որը Կենտրոնական բանկի համար կապահովի ներդրումային ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տարեկան պետական տուրքերի գծով կատարված վճարումների մոնիթորինգի հնարավորություն:

- Փոփոխություններ և լրացումներ են կատարվել նաև.
  - «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների եւ օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ում,
  - «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ում,
  - «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ում:
  - «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» Կանոնակարգ 4/05-ում:

Նշված կանոնակարգերում փոփոխությունները և լրացումները հիմնականում պայմանավորված են բոլոր ֆինանսական կազմակերպությունների՝ որակավորման և գրանցման ենթակա ղեկավարների և աշխատակիցների համար միասնական որակավորման և գրանցման ընթացակարգ սահմանելու անհրաժեշտությամբ: Արդյունքում, այլ ֆինանսական կազմակերպություններին զուգահեռ, համապատասխան փոփոխությունների են ենթարկվել ներդրումային ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցման և լիցենզավորման կանոնակարգերը: Հիմնական լրացումները և փոփոխությունները հետևյալն են.

1. Սահմանվել է, որ թեկնածուների որակավորումը և մասնագիտական համապատասխանության քննությունն անցկացվելու է ԿԲ թեստավորման ծառայության կամ ԿԲ նախագահի որոշմամբ՝ այլ կազմակերպության կողմից:
2. Քննությանը մասնակցելու համար թեկնածուների հերթագրման կարգը, ինչպես նաև քննության անցկացման հետ կապված գործընթացների նկարագրությունը համապատասխանեցվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում որակավորման քննությունների կազմակերպման կարգի» պահանջներին և սահմանվել է, որ թեկնածուները քննությանը կարող են հերթագրվել միայն հեռախոսով կամ ինտերնետային կայքի միջոցով:
3. Սահմանվել է, որ քննության դրական արդյունք ապահոված բոլոր մասնակիցներին որակավորման վկայականները տրամադրվում են միայն թղթային տարբերակով, և կանոնակարգերից հանվել է որակավորված անձանց ցուցակը ԿԲ ինտերնետային կայքում հրապարակելու պահանջը:
4. Կանոնակարգ 4/05-ից հանվել է այն դրույթը, ըստ որի՝ ԿԲ-ն կարող է մերժել թեկնածուի մասնակցությունը որակավորման քննությանը, եթե վերջինս նախորդ երեք տարիների ընթացքում զրկվել է որակավորման վկայականից:
5. Հաշվի առնելով, որ ներկայումս ԿԲ-ն չի երկարաձգում ֆինանսական կազմակերպությունների գործադիր տնօրենների որակավորման վկայականի գործողության ժամկետը՝ առանց համապատասխան որակավորման ստուգում անցկացնելու, Կանոնակարգ 4/05-ից հանվել է նշված գործընթացը նկարագրող հատվածը:
6. Հաշվի առնելով «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի այն հոդվածը, ըստ որի՝ ֆինանսական կազմակերպությունները ֆինանսական հաշվետվությունները պետք է կազմեն և ներկայացնեն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման թեմաների ցանկում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
7. Սահմանվել է, որ ներդրումային ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի նախագահի և անդամների որակավորման համապատասխանության ստուգումը և գրանցումը իրականացվում է մեկ փուլով՝ ԿԲ խորհրդի նիստում հարցազրույցի միջոցով: Ընդ որում, խորհրդի նախագահին և անդամներին հնարավորություն է ընձեռվել գրանցվել ԿԲ-ում՝ առանց որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգում անցնելու, եթե ԿԲ խորհուրդը անհրաժեշտ չի համարում այդ հարցազրույցը:

8. ԿԲ կողմից լիցենզավորվող կազմակերպությունների լիցենզիաները փոստով տրամադրելու նպատակով սահմանվել է, որ լիցենզիա ստանալու նպատակով դիմող անձինք պահանջվող փաստաթղթերի հետ միասին պետք է ներկայացնեն նաև փոստային հասցեի վերաբերյալ տեղեկանք:

Միևնույն ժամանակ, Կանոնակարգեր 4/01, 5/01 և 5/02-ում կատարվել են լրացումներ, որոնց նպատակն է սահմանել ներդրումային ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ֆիրմային անվանումների գրանցման կարգը: Սա պայմանավորված է «Ֆիրմային անվանման մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների իրականացման հետ:

Ֆինանսական համակարգի այլ մասնակիցների գործունեության կարգավորման դաշտում 2009 թվականին մշակվել և փոփոխվել են հետևյալ իրավական ակտերը.

- «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի հիման վրա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվել է «Վարկային բյուրոների լիցենզավորումը, վարկային բյուրոների տարածքային, տեխնիկական, անվտանգության և ծրագրային հագեցվածության պահանջները» կանոնակարգ 9/01-ը: Կանոնակարգում նկարագրված են վարկային բյուրոների լիցենզավորման փուլում ներկայացվող փաստաթղթերի ցանկը, լիցենզիայի մերժման հիմքերը, վարկային բյուրոների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, ներառվող տեղեկությունները, վարկային բյուրոների տարածքային, տեխնիկական, անվտանգության և ծրագրային հագեցվածության պահանջները:
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին կամ այլ վարկային բյուրոյին վարկային բյուրոյի կողմից տվյալների բազայի փոխանցման կամ տրամադրման կարգը և պայմանները» կանոնակարգ 9/02-ը: Կանոնակարգով սահմանվել է, որ վարկային բյուրոն տվյալների բազան փոխանցում կամ տրամադրում է միայն Կենտրոնական բանկի սահմանված կարգով վարկային բյուրոյի լիցենզիա ստացած անձին կամ Կենտրոնական բանկին՝ եթե այլ վարկային բյուրոները հրաժարվում են տվյալների բազան ընդունելուց կամ ձեռք բերելուց: Վարկային բյուրոն ամբողջությամբ տվյալների բազան փոխանցելուց կամ տրամադրելուց առաջ պետք է ոչնչացնի իր տվյալների բազայի բոլոր կրկնօրինակները և որևէ տվյալ չպետք է պահպանի իր մոտ:
- Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ում, որոնց համաձայն՝
  - Վարկային կազմակերպությունների ղեկավարների գրանցման ընթացակարգերը պարզեցվել են և նույնականացվել ԿԲ կողմից վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների ընթացակարգերի հետ՝ գրանցման համար ԿԲ ներկայացվող փաստաթղթերի կրճատման և այդ փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու պահանջի միջոցով:

- Վարկային կազմակերպությունների խորհրդի նախագահին և անդամներին հնարավորություն է տրվել գրանցվելու ԿԲ-ում՝ առանց որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգում անցնելու՝ միաժամանակ սահմանելով, որ Կենտրոնական բանկը, անհրաժեշտության դեպքում, կարող է անցկացնել հարցազրույց՝ նշված անձանց որակավորման և մասնագիտական համապատասխանությունը ստուգելու համար:
- Սահմանվել է, որ վարկային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուների որակավորումը և մասնագիտական համապատասխանության քննությունն անցկացվելու է ՀՀ ԿԲ թեստավորման ծառայության կողմից: Որակավորման վկայականը թղթային ձևով տրամադրվելու է քննության դրական արդյունք ապահոված բոլոր մասնակիցներին, միաժամանակ որակավորված անձանց ցուցակը հրապարակվելու է ԿԲ ինտերնետային կայքում:

- «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կատարվել են հետևյալ փոփոխությունները.
  - Վարկային կազմակերպությունները պարտավոր են ունենալ երաշխիքի տրամադրման և սպասարկման գործառույթը կանոնակարգող ներքին իրավական ակտեր, որոնցում առնվազն պետք է նշված լինեն երաշխիքի տրամադրման և սպասարկման պայմանները:
  - Եթե վարկային կազմակերպության կանոնադրության համաձայն վարկային կազմակերպությունը հրապարակային օֆերտաների միջոցով չի ներգրավում փոխառություններ, ապա նրա կողմից մեկ անձին և նրա հետ փոխկապակցված անձանց տրամադրված՝ չմարված երաշխիքի (երաշխիքների) մեծությունը չի կարող գերազանցել վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի մեծությունը, իսկ բոլոր անձանց տրամադրված չմարված երաշխիքների մեծությունը չի կարող գերազանցել վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի եռապատիկը:

- Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել բանկերի, արտարժույթի փոխանակման կետերի, արժութային դիլերների լիցենզավորման ընթացակարգերը կարգավորող Կանոնակարգ 1-ում, Կանոնակարգ 10-ում և Կանոնակարգ 12-ում: Փոփոխությունները հիմնականում վերաբերում են որակավորվող անձանց որակավորման և համապատասխանության ստուգմանը, ինչպես նաև որակավորվող անձանց գրանցմանը: Մասնավորապես սահմանվել է, որ.
  - ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների որակավորման քննությանը թեկնածուները կարող են հերթագրվել միայն հեռախոսով կամ ինտերնետային կայքի միջոցով,
  - քննության դրական արդյունք ապահոված բոլոր մասնակիցներին որակավորման վկայականները տրամադրվելու են թղթային տարբերակով,
  - կանոնակարգերից հանվել է այն դրույթը, ըստ որի՝ Կենտրոնական բանկը կարող է մերժել թեկնածուի մասնակցությունը որակավորման քննությանը, եթե վերջինս նախորդ երեք տարիների ընթացքում զրկվել է որակավորման վկայականից,
  - Կանոնակարգ 12-ում սահմանվել է, որ արժութային դիլեր-բրոքերներն իրավունք չունեն գործունեություն ծավալել ԿԲ կողմից լիցենզավորված կազմակերպությունների տարածքներում, ֆինանսական

կազմակերպությունները, նրանց հետ փոխկապակցված անձինք, ֆինանսական կազմակերպությունների աշխատակիցները և ղեկավարները, ինչպես նաև մասնակիցները և նրանց հետ փոխկապակցված անձինք իրավունք չունեն լինել արժութային դիլեր-բրոքերների մասնակից կամ աշխատել այնտեղ:

- ՀՀ ԿԲ խորհրդի 2009թ. ապրիլի 7-ի թիվ 84-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի օգոստոսի 30-ի թիվ 444-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 11-ում, որով սահմանվել է բորսայի կողմից արտարժույթի առուվաճառքի վերաբերյալ հրապարակվող տեղեկությունների մանրամասն կազմը և հրապարակման կարգը: Նշված փոփոխության նպատակն է նվազեցնել արտարժույթի առևտրի շուկայի մասնակիցների միջև առկա տեղեկատվական դաշտի անհամաչափությունը, ինչպես նաև համապատասխանեցնել արտարժույթի առևտրի վերաբերյալ բորսայի կողմից հրապարակվող տեղեկությունների կազմը և կարգը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերով իրականացվող առևտրի վերաբերյալ տեղեկությունների հրապարակման կազմին և կարգին:
- Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ում և «Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 17-ում, որոնցով սահմանվել են վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից գյուղապետարաններում և կապի ծառայություն մատուցող օպերատորների տարածքում բացվող մասնաճյուղերին ներկայացվող պահանջներ, հստակեցվել են լիցենզավորման փուլում կազմակերպություններին ներկայացվող տեխնիկածրագրային և տարածքային պահանջները:

Սպառողների շահերի պաշտպանության և շուկայի վարվելակերպի ոլորտի կարգավորման դաշտում 2009 թվականին մշակվել են հետևյալ իրավական ակտերը.

- «Բանկային ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության (APY) հաշվարկումը» կանոնակարգ 8/02-ը, որը բխում է «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքից: Համաձայն այդ օրենքի՝ բանկերի կողմից ավանդների ներգրավման նպատակով կատարված ցանկացած հայտարարություն, որը կապված է տոկոսների հետ, պետք է ներառի տարեկան տոկոսային եկամտաբերության չափի վերաբերյալ նշում: Կանոնակարգ 8/02-ը սահմանում է տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կանոնները:
- «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փո-

խանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ը, որը սահմանում է բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, կենտրոնական դեպոզիտարիայի և վճարահաշվարկային կազմակերպությունների՝ իրենց ինտերնետային կայքում, մամուլում, տեղեկատվական ամփոփագրերում, զանգվածային լրատվության կամ այլ միջոցներով (գովազդ, պաստառներ…) տեղեկությունների հրապարակման կարգը:

- «Հաճախորդների բողոք-պահանջների քննության գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն պահանջներ» կանոնակարգ 8/04-ը: 2009 թվականի ընթացքում ընդունվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական նոր ակտ: Համաձայն այդ օրենքի՝ ֆինանսական կազմակերպությունները պարտավոր են ունենալ հաճախորդների բողոք-պահանջները կարգավորող ներքին իրավական ակտ: Կանոնակարգ 8/04-ը սահմանում է ֆինանսական կազմակերպություններին (բացառությամբ՝ արտարժույթի առքուվաճառքի սակարկությունների լիցենզիա և վճարային գործարքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի լիցենզիա ստացած անձանց) ուղղված հաճախորդների բողոք-պահանջների քննության գործընթացը կարգավորող իրավական ակտերի նվազագույն պայմանները և սկզբունքները:
- «Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05-ը, որը բխում է «Բանկային ավանդների ներգրավման մասին» և «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքներից: Օրենքներով սահմանվել են բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման նկատմամբ որոշակի պահանջներ: Կանոնակարգ 8/05-ով սահմանվել են վերոնշյալ կողմերի միջև մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կնքման ընթացքում և պայմանագրի հետագա սպասարկման ընթացքում հաղորդակցման, ինչպես նաև այդ փուլերում բացահայտվող տեղեկատվության նկատմամբ նվազագույն պահանջներ:

Սպառողների շահերի պաշտպանության նպատակով 2009 թվականի ընթացքում իրականացվել են նաև հանրության ֆինանսական և տնտեսագիտական իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներ՝

1. Գործարկվել է ինտերնետային կայք (www.abcfinance.am) ֆինանսական ոլորտի սպառողների համար: Կայքը նախատեսված է ֆինանսատնտեսագիտական կրթություն կամ աշխատանքային փորձ չունեցող անձանց և անհատ ձեռնարկատերերի համար: Կայքի նպատակն է տեղեկացնել, բացատրել և ուսուցանել յուրաքանչյուրին ֆինանսների աշխարհի մասին: Կայքում ներառված են գլխավորապես կրթական նյութեր, ֆինանսական կազմակերպությունների և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն: Կայքը շարունակաբար զարգանալու, համալրվելու և կատարելագործվելու է ՀՀ ԿԲ կողմից:
2. ՀՀ կենտրոնական բանկը, «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության հետ համատեղ, իրականացրել է «Տնտեսագիտություն և ֆինանսներ» թեմայով խաղ - մրցույթ, որի նպատակն է խթանել ֆինանսների և տնտեսագիտության ուսուցումը դպրոցականների շրջանում:

3. Մշակվել են ֆինանսական ծառայությունների վերաբերյալ հանրամատչելի տեղեկատվական բրոշյուրներ, ինչպես նաև ֆինանսական թեմաներով պատկերազարդ էլեկտրոնային նյութեր (CD), որոնք նախատեսվում է անվճար իրացնել 2010 թվականին:
4. Նկարահանվել է «Վճարային քարտի մասին» ուսուցողական ֆիլմը: Այն նախատեսված է ֆինանսական խորը մասնագիտական գիտելիքներ չունեցող մարդուն ներկայացնելու, թե ինչ է վճարային քարտը, վճարային քարտի ինչ տեսակներ գոյություն ունեն, որոնք են վճարային քարտի առավելությունները, ինչ իրավիճակներում և ինչպես այն կարելի է օգտագործել:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ 2009 ԹՎԱԿԱՆԻՆ

Ֆինանսական համակարգի մասնակիցների գործունեության ռիսկերի մակարդակների թույլատրելիության աստիճանի բացահայտման և կանխման, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանության, արժութային շուկայում սպեկուլյատիվ բացասական դրսևորումների կանխման և այլ նպատակներով Կենտրոնական բանկը մշտապես վերահսկում է ֆինանսական համակարգի մասնակիցների գործունեությունը: Կենտրոնական բանկի Ֆինանսական վերահսկողության վարչությունը իրականացնում է ֆինանսական հաստատությունների փաստաթղթային և տեղերում ստուգումներ:

2009 թվականին ֆինանսական վերահսկողության վարչության կողմից իրականացվել են 539 «տեղերում ստուգումներ»:

Աղյուսակ 1. Տեղերում վերստուգումները և վերահսկողության աշխատակիցների ծանրաբեռնվածությունը

	2007 թվական	2008 թվական	2009 թվական
Ֆինանսական վերահսկողության վարչության աշխատակիցների թիվը	74	74	82
Բանկերի, վարկային կազմ., ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի մասնակիցների և գրավատների ընդհանուր ակտիվները (տարեկան միջին)	674.5 մլրդ դրամ	964.3 մլրդ դրամ	1.25 տրլն դրամ
Ֆինանսական վերահսկողության վարչության մեկ աշխատակցի միջին ծանրաբեռնվածությունը	9.1 մլրդ դրամ	13.0 մլրդ դրամ	15.2 մլրդ դրամ
Տարվա ընթացքում իրականացված ստուգումների թիվը, այդ թվում՝	511	243	539
բանկերում՝ բոլոր ուղղություններով	5	7	5
բանկերում՝ նպատակային	40	10	5
բանկերում՝ Կանոնակարգ 1-ի 13-րդ գլխի պահանջներին համապատասխանությունը պարզելու նպատակով	-	-	14
վարկային կազմակերպություններում	5	5	3
վարկային կազմակերպություններում՝ Կանոնակարգ 13-ի 4-րդ և 10-րդ գլխի պահանջներին համապատասխանությունը պարզելու նպատակով	-	-	3
ապահովագրական ընկերություններում	8	4	4
ապահովագրական բրոքերային ընկերություններ	-	-	1
ապահովագրական գործակալներ	-	-	2
ապահովագրական ընկերություններում՝ Կանոնակարգ 3/01-ի 7-րդ գլխի պահանջներին համապատասխանությունը պարզելու նպատակով	-	-	4
արժեթղթերի շուկայի մասնակիցներ	18	1	8
ֆինանսական շուկայի այլ մասնակիցներ (արտարժույթի փոխանակման կետեր, գրավատներ, վճարահաշվարկային կազմակերպություններ և այլն)	435	216	490

Կենտրոնական բանկի Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից 2009 թվականին իրականացված փաստաթղթային և տեղերում ստուգումների հիմնական ուղղվածություններն են եղել.

- ռիսկերի կառավարման համակարգը,
- ներքին հսկողության համակարգը,
- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը,
- սպառողների շահերի պաշտպանությունը,
- կորպորատիվ կառավարման սկզբունքների ապահովումը,
- SS ոլորտը,
- ակտիվների որակի գնահատումը,
- թափանցիկության ապահովումը,
- ակտիվների և պասիվների կառավարման գնահատումը,
- կանոնակարգման դաշտի փոփոխություններին ընկերությունների գործունեության համապատասխանեցումը,
- վերաապահովագրության ռիսկայնության մակարդակը,
- ազդագրի և/կամ առևտրի ազդագրի գրանցման գործընթացների կազմակերպումն ու վերահսկումը,
- հաշվետու թողարկողների կողմից հրապարակման ենթակա տեղեկատվությունների թափանցիկության, լիարժեքության և արժանահավատության ապահովման նկատմամբ վերահսկողությունը,
- արժեթղթերի հրապարակային առաջարկությամբ հանդես եկող անձանց գործողությունների՝ օրենսդրությանը համապատասխանության նկատմամբ վերահսկողությունը,
- «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան՝ արժեթղթերի շուկայի մասնակիցների ձևավորման, մասնավորապես՝ բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման իրավունքի տրամադրման, ներդրումային ընկերությունների գրանցման և լիցենզավորման, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված նվազագույն պահանջներին համապատասխան դրանց գործունեության ապահովման հարցերը,
- «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված մոտեցումներին համապատասխան՝ արժեթղթերի շուկայի մասնակիցների կանխարգելիչ և շուկայի վարվելակերպի վերահսկողության համակարգերի ներդրման հարցերը,
- արժեթղթերի շուկայում չարաշահումների (գնային չարաշահումների և շուկայում գործարքների կնքման համար ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործման) վերահսկողության և պատասխանատվության կիրառման համակարգի ներդրման հարցերը,
- արժեթղթերի շուկայում չլիցենզավորված անձանց գործունեության կանխարգելման հարցերը,
- գործունեության անվտանգության և հուսալիության պահանջների ապահովումը,
- ծառայությունների մատուցման որակի գնահատումը,
- այլ:

2009 թվականին ֆինանսական վերահսկողության վարչության կողմից փաստաթղթային և տեղերում իրականացված ստուգումների արդյունքում բացահայտված խախտումներում, նախորդ տարվա համեմատ, հիմնականում ավելացել է օրենսդրական խախտումների քանակը (2008 թվականին արձանագրվել է 235 օրենսդրական խախտում):

Աղյուսակ 2. Ֆինանսական կազմակերպությունների կողմից թույլ տրված խախտումները և կիրառված պատժամիջոցները 2009 թվականին

	Առևտրային բանկեր	Վարկային կազմակերպություններ	Ապահովագրական ընկերություններ	Գրավատներ	Վճարահաշվարկային կազմակերպություններ*
Խախտման տեսակ					
Հաշվապահական հաշվառման	27	17	14	2	-
Ակտիվների դասակարգման կարգի	11	1	4	-	-
Օրենսդրական	175	98	85	198	1
Նորմատիվային	33	1	7	-	-
Հաճձնարարականի չկատարում	15	1	5	1	-
Հաշվետվությունների ուշացում	13	-	19	9	6
Անարժանահավատ տվյալներ	56	9	208	28	-
Ընդհանուր կապիտալի	5	1	1	-	-
Վարկային ռեգիստր	16	11			
Պատժամիջոցներ					
Լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում	-	-	-	30	-
Տուգանք կազմակերպությանը	217	76	236	131	-
Տուգանք ղեկավարին	-	-	-	-	-
Տույժ	2	-	-	-	-
Նախազգուշացում	125	65	99	42	7
Ղեկավարին մասնագիտական որակավորման վկայականից զրկում	-	-	-	-	-
Լիցենզիայի գործունեության ժամանակավոր կասեցում	-	-	-	22	
Կարճում	7	-	8	13	-

** Վճարային գործիքներ կիրառող և դրամական փոխանցում, վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպություններ:*

ԿԱԴՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԻ ՀԵՏ 2009 ԹՎԱԿԱՆԻՆ

Ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության գործառույթների արդյունավետության բարձրացման նպատակով 2009 թվականին ՀՀ կենտրոնական բանկը իրականացրել է անձնակազմի որակավորման բարձրացմանն ուղղված շարունակական կադրային քաղաքականություն:

Մասնագիտական գիտելիքների արդիականացման, կատարելագործման, որակավորման բարձրացման, միջազգային լավագույն փորձին ծանոթանալու և, ներքին առանձնահատկությունները հաշվի առնելով, դրա ներդրման նպատակով ԿԲ ֆինանսական վերահսկողության վարչության աշխատակիցները 2009 թվականին մասնակցել են մի շարք ներքին և արտաքին դասընթացների, աշխատանքային հանդիպումների և կոնֆերանսների: 2009 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կադրերի վերապատրաստմանը օժանդակել են Արժույթի միջազգային հիմնադրամը, Տորոնտոյի ուսումնական կենտրոնը, Միջազգային հաշվարկների բանկը, Շվեյցարիայի, Իսպանիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի բանկերը, Վիեննայի միացյալ ինստիտուտը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, Գերմանիայի Բունդեսբանկը, Անգլիայի բանկի՝ կենտրոնական բանկերի ուսուցողական կենտրոնը, ԱՄՆ ֆեդերալ ռեզերվային բանկը, Նիդեռլանդների, Ղազախստանի, Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկերը, Լեհաստանի, Չեխիայի, Ավստրիայի ազգային բանկերը, Ֆինանսական կայունության ինստիտուտը և այլն: Վերոնշյալ կառույցների կողմից կազմակերպված դասընթացների, կոնֆերանսների և աշխատանքային փորձի փոխանակման, վերապատրաստման թեմաները հիմնականում վերաբերել են ֆինանսական կայունության և հակաճգնաժամային կառավարման խնդիրներին, բանկային, ապահովագրական, արժեթղթերի շուկաների մասնակիցների վերահսկողության արդի խնդիրներին, ռիսկերի կառավարմանն ու գնահատմանը, վերահսկողական նոր մոտեցումների կիրառմանը, ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի բարեփոխումներին, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին:

Հաշվետու տարվա ընթացքում վերապատրաստման հիմնական թեմաներն են եղել «Ֆինանսական ճգնաժամ և դրամավարկային քաղաքականություն», «Ֆինանսական կայունություն», «Ֆինանսական հատվածի մարտահրավերներ», «Ճգնաժամային պատրաստվածություն», «Ֆինանսական վերահսկողություն», «Ֆինանսական ծրագրավորում և քաղաքականություն», «Հիմնական վերահսկողական խնդիրներ», «Սթրես - թեստավորում բանկային համակարգի համար», «Մակրո սթրես - թեստավորում», «Ռիսկի վրա հիմնված վերահսկողություն», «Խորացված ռիսկի կառավարում», «Առևտրի ազդագիր և շուկայի ենթակառուցվածք», «Արժեթղթերի շուկայի զարգացում», «Վճարահաշվարկային կազմակերպությունների վերահսկողություն», «Վճարահաշվարկային համակարգերի գնահատման սիմուլյատոր», «Պարտադիր ապահովագրության կազմակերպում, կարգավորում», «Կենսաթոշակային հիմնադրամների վերահսկողություն», «Ցանցային անվտանգություն», «Պայքար փողերի լվացման և ֆինանսական կարգազանցության դեմ» և այլն:

Դեռևս 2007 թվականին, միջազգային խորհրդատուների հավանությամբ, ԿԲ-ն որոշել էր, որ վերահսկողության ոլորտի բարձր որակավորում ունեցող ԿԲ աշխատակիցները կազմակերպեն դասընթացներ՝ ավելի երիտասարդ մասնագետներին փոխանցելու համար իրենց փորձն ու գիտելիքները, ինչը շարունակվեց նաև 2009 թվականին:

ԿԲ մի շարք մասնագետներ 2009 թվականին մասնակցել են Շվեյցարիայի Ֆինանսական կայունության ինստիտուտի (FSI) կողմից առաջարկվող FSI Connect-ի դասընթացներին, որոնք անցկացվում են իրական ժամանակի ռեժիմով, ընդ որում՝ ԿԲ-ում ֆինանսական վերահսկողության ոլորտում կարող են աշխատանքի ընդունվել կամ աշխատանքային առաջխաղացում ունենալ այն աշխատակիցները, ովքեր հաջողությամբ ավարտել են վերոնշյալ դասընթացները: Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. «Կապիտալ և Բազել - 2», «Վարկային ռիսկ», «Շուկայական ռիսկ», «Գործառնական ռիսկ», «Հաշվապահություն», «Վճարահաշվարկային համակարգեր», «Այլ վերահսկողական թեմաներ»: Յուրաքանչյուր թեմա մատուցվում է երեք մակարդակով՝ բազային, միջին և խորացված:

Կենտրոնական բանկի աշխատակիցները նաև այլ երկրների կենտրոնական բանկերում ուսումնասիրել են գործընկերների աշխատանքային փորձը:

2009 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է բազմակողմ և երկկողմ համագործակցությունը միջազգային և օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների հետ:

Տարվա ընթացքում ԱՄՀ/ՀԲ-ի տեխնիկական օժանդակության շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկն ընդունել է նաև ԱՄՀ դրամավարկային քաղաքականության, վիճակագրության, բանկային վերահսկողության և ֆինանսական գործառնությունների բնագավառների խորհրդատուների և առաքելությունների: Հոկտեմբերի 9 - 12-ը ՀՀ կենտրոնական բանկ ճանաչողական նպատակով այցելեց Արժույթի միջազգային հիմնադրամի յոթ գործադիր տնօրեններից բաղկացած պատվիրակությունը:

Միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում, համապատասխան կենտրոնական բանկերի հետ համաձայնագրեր և փոխըմբռնման հուշագրեր ստորագրվեցին նաև 2009 թվականին: 2009թ. դեկտեմբերի 30-ին Երևանում, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Կառավարության միջև 2009թ. սեպտեմբերի 11-ին Պեկինում կնքված տնտեսական և տեխնիկական համագործակցության համաձայնագրի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Չինաստանի զարգացման բանկ կորպորացիայի միջև ստորագրվեց հաշվապահական ընթացակարգերի բանկային համաձայնագիրը:

Գործնական կապերը ընդլայնելու և բանակցություններ վարելու նպատակով 2009 թ. ՀՀ կենտրոնական բանկ են այցելել Սևծովյան առևտրի և զարգացման բանկի փոխնախագահը, ԱՄՆ-ի Դաշնային պահուստային համակարգի խորհրդատուն, “Kusters Engineering BV” ընկերության փորձագետները, Վարշավայի բորսայի նախագահը, Միջազգային ֆինանսական կորպորացիայի փորձագետները, Եվրոպայի խորհրդի MONEYVAL հանձնախմբի գնահատողների խմբի փորձագետները, NASDAQ” և “OMX Group” ընկերության փորձագետները, “FITCH Ratings” և “Moody’s Investors Service Co” վարկանշային գործակալությունների փորձագետները, CitiBank-ի փորձագետը, De La Rue Cash Systems ընկերության փորձագետը, USAID կազմակերպության փորձագետները, Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական առաքելության (ROSC) փորձագետները, Իսպանական DFC Group, S.A.U. ընկերության փորձագետները և այլն:

2009 թվականին Հայաստանում տեղի է ունեցել.

- Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (Black Sea economic cooperation, BSEC) բանկային և ֆինանսական հարցերով աշխատանքային խմբի հերթական հանդիպումը,
- ԱՊՀ մասնակից երկրների արժեթղթերի շուկան կարգավորող պետական մարմինների ղեկավարների խորհրդի IX նիստը,
- ԱՊՀ երկրների վճարային համակարգերի նախաձեռնության (Commonwealth of Independent States Payment Initiative, CISPI) աշխատանքային խմբի IV նստաշրջանը,

- ԱՊՀ մասնակից երկրների արժեթղթերի շուկան կարգավորող պետական մարմինների ղեկավարների խորհրդի X հոբելյանական նիստը:

ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցները մասնակցել են բանկային և ֆինանսական միջազգային համաժողովների, տարեկան հանդիպումների, ֆորումների, «կլոր սեղանի» նիստերի, խորհրդակցությունների, ցուցահանդեսների, աշխատանքային սեմինարների, որտեղ հանդես են եկել զեկույցներով և ելույթներով:

Հիշատակման են արժանի. Եվրոպական կենտրոնական բանկի կողմից Գերմանիայում կազմակերպված «Եվրոպական դրամական միավորի 10 տարին. իրավական հեռանկարներ» թեմայով միջազգային կոնֆերանսը, ԱՄՀ և Ղրղզստանի Ազգային բանկի կողմից Ղրղզստանում կազմակերպված «Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը և հետևանքները Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի պետությունների տնտեսությունների վրա» թեմայով միջազգային համաժողովը, ԵՎՐԱԶԵՍ անդամ երկրների կենտրոնական բանկերի Կոորդինացիոն խորհրդի նիստը Ռուսաստանի Դաշնությունում, EGMONT խմբի լիագումար նիստը Կատարում, Եվրոպայի Խորհրդի՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի MONEYVAL կոմիտեի նիստը Ֆրանսիայում, Սևծովյան առևտրի և զարգացման բանկի (BSTDB) տնօրենների խորհրդի հանդիպումները Հունաստանում, HSBC բանկի ներդրողների և թողարկողների տարեկան համաժողովը ՄԱԷ-ում, Եվրոպական բանկային և ֆինանսական ֆորումը Չեխիայում, Համաշխարհային բանկի կողմից Հարավաֆրիկյան Հանրապետությունում կազմակերպված «Վճարային համակարգերի պատկերի վերասահմանում» թեմայով կոնֆերանսը, RAMP ծրագրի շրջանակներում Համաշխարհային բանկի կողմից ԱՄՆ-ում կազմակերպված Կենտրոնական բանկի պահուստների կառավարման գործադիր ֆորումը, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների բանկային վերահսկողների խմբի տարեկան կոնֆերանսը Բելառուսում, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի տարեկան համաժողովը և տնտեսական ֆորումը Անգլիայում, Համաշխարհային բանկի գանձապետարանի կողմից Ինդոնեզիայում կազմակերպված «Ներդրումային կենսաթոշակային հիմնադրամների կարգավորումը, կառավարումը և ներդրումային քաղաքականությունը» թեմայով սիմպոզիումը, Կենտրոնական Ասիայի, Սևծովյան տարածաշրջանի և Բալկանյան երկրների կենտրոնական բանկերի կառավարիչների ակումբի նիստը Ղազախստանում և Ղրղզստանում, ԱՊՀ երկրների Միջպետական արժութային կոմիտեի նիստը Ռուսաստանի Դաշնությունում, Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի Նիդեռլանդների ենթախմբի երկրների ԿԲ կառավարիչների տարեկան հանդիպումը և տեխնիկական աջակցության ծրագիրը Մոնտենեգրոյում, Միջպետական բանկի փորձագետների աշխատանքային խմբի նիստը Ռուսաստանի Դաշնությունում, Միջազգային հաշվարկների բանկի Իրվինգ Ֆիշերի կոմիտեի տարեկան ժողովը Հարավաֆրիկյան Հանրապետությունում, Գերմանա - հայկական հիմնադրամի դիտորդ խորհրդի նիստը Գերմանիայում, SWIFT օգտագործողների և անդամների ազգային ասոցիացիաների նախագահների տարեկան համաժողովը և SIBOS ամենամյա կոնֆերանսը Հոնկոնգում, Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կառավարիչների խորհուրդների տարեկան հանդիպումը Թուրքիայում, Եվրոպայի Խորհրդի՝ կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խմբի կոնֆերանսը Ֆրանսիայում և այլն:

Հայաստանի կենտրոնական բանկը մշտապես կարևորել է կադրերի վերապատրաստման և օտարերկրյա գործընկերների հետ համագործակցության աշխատանքները, որոնք էապես նպաստում են ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության աշխատանքների կատարելագործմանը:

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2009 ԹՎԱԿԱՆԻՆ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը

2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 22 առևտրային բանկեր՝ 391 մասնաճյուղերով (տարվա ընթացքում մասնաճյուղերի քանակն ավելացել է 10-ով):

Բանկային համակարգի[2] ֆինանսական միջնորդության մակարդակը տարվա ընթացքում բավականին բարձրացել է, սակայն հիմնականում զիջում է այլ երկրների համանման ցուցանիշին: Բանկային համակարգի ակտիվների աճին զուգընթաց, տնտեսությունում արձանագրվել է անվանական ՀՆԱ-ի նվազում, ինչի արդյունքում բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը 2009 թվականին ավելացել է 13.8 տոկոսային կետով՝ կազմելով 41.9%: Բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցությունն ավելացել է 5.3 տոկոսային կետով և կազմել 22.2%:

Կենտրոնացվածությունը ՀՀ բանկային համակարգում

Բանկային համակարգի կենտրոնացվածության մակարդակը նվազման որոշակի միտումներ է դրսևորել: ՀՀ բանկային համակարգի տարբեր ամփոփ ցուցանիշների՝ Հերֆինդալ-Հիրշմանի[3] կենտրոնացվածության գործակիցը մնացել է անփոփոխ կամ նվազել է (ընդհանուր պարտավորությունների և տնտեսությանը տրամադրված վարկերի գծով): Աղյուսակ 3-ում նշված ցուցանիշների գծով Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցները տատանվում են 0.06-ից 0.1-ի միջակայքում՝ վկայելով համակարգի համեմատաբար թույլ կենտրոնացվածության մասին:

Աղյուսակ 3. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը

Ցուցանիշներ	31.12.07	31.12.08	31.12.09
Ընդհանուր ակտիվներ	0.08	0.07	0.07
Ընդհանուր պարտավորություններ	0.08	0.08	0.07
Ընդհանուր կապիտալ	0.07	0.06	0.06
Տնտեսությանը տրամադրված վարկեր	0.09	0.08	0.07
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ	0.09	0.09	0.09
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորություններ (ներառյալ բանկային հաշիվներ)	0.11	0.10	0.10

[2] Դիտարկվող ժամանակահատվածում բանկային համակարգը ներառում է ՀՀ տարածքում գործող 22 առևտրային բանկեր:

[3] Հերֆինդալ - Հիրշմանի գործակիցն ընդունում է 0-1 միջակայքում արժեքներ և բնութագրում կենտրոնացվածությունը (0-ին մոտ արժեքները նշանակում են կենտրոնացվածության ցածր աստիճան):

Խոշոր և մանր բանկերի միջև բևեռացվածությունը փոքր-ինչ նվազել է. տարեսկզբին խոշորագույն 10 բանկերին բաժին էր ընկնում համակարգի ակտիվների 76%-ը, խոշորագույն 4 բանկերին՝ 44%-ը, իսկ տարեվերջին՝ համապատասխանաբար 76%-ը և 40%-ը: Աղյուսակ 4-ում ներկայացված բոլոր ցուցանիշների գծով 4 խոշորագույն բանկերի բևեռացվածությունը նվազել է:

Աղյուսակ 4. Բանկային հատվածի կենտրոնացվածության մակարդակը (%)

Ցուցանիշներ	31.12.07	31.12.08	31.12.09
Ընդհանուր ակտիվներ			
ԿԳ 4 (խոշորագույն չորս բանկերի տեսակարար կշիռը համակարգում)	45	44	40
ԿԳ 10 (խոշորագույն տասը բանկերի տեսակարար կշիռը համակարգում)	77	76	76
Ընդհանուր պարտավորություններ			
ԿԳ 4	46	46	41
ԿԳ 10	80	80	80
Ընդհանուր կապիտալ			
ԿԳ 4	41	38	36
ԿԳ 10	67	66	64
Տնտեսությանը տրամադրված վարկեր			
ԿԳ 4	50	48	39
ԿԳ 10	83	79	76
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ			
ԿԳ 4	41	40	37
ԿԳ 10	81	79	81
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ընթացիկ պահանջ պարտավորություններ (ներառյալ բանկային հաշիվներ)			
ԿԳ 4	51	47	47
ԿԳ 10	81	78	82

ՀՀ բանկային համակարգի մրցունակության մակարդակը 2009 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնահատվել է Փանգարի և Ռոսսի կողմից մշակված մոդելով[4]: Փանգարի և Ռոսսի մոդելով դիտարկվել են ՀՀ բանկային համակարգի տոկոսային եկամտի վրա ծախսային գործոնների, այն է՝ աշխատավարձի գծով ծախսերի, հիմնական միջոցների և տոկոսային ծախսերի ազդեցությունները՝ օգտագործելով ՀՀ բանկային համակարգի 2004 - 2009 թթ. տվյալները: Տոկոսային եկամտի վրա ծախսային գործոնների ազդեցության

[4] Փանգարի և Ռոսսի մոդելը հիմնված է մրցակցության, մենաշնորհային մրցակցության և մենաշնորհի վերաբերյալ տեսական մոդելների վրա: Ըստ մոդելի՝ մենաշնորհային շուկայում մուտքային գործոնային գների աճը հանգեցնում է սահմանային ծախսերի աճի, որը բերում է արդյունքների և ընդհանուր եկամուտների նվազման (քանի որ մասնակիցները հակված են կրճատելու բարձր գներով մուտքային գործոնների ծեռքբերումը): Մրցակցային շուկայի պայմաններում, մուտքային գործոնային գների աճը հանգեցնում է սահմանային ծախսերի և եկամուտների նույն չափով աճի, իսկ խմբաշնորհային մրցակցության պայմաններում՝ եկամուտների ոչ համամասնական, ավելի փոքր չափով աճի:

գործակիցների գումարի հիման վրա ստացվող ցուցանիշի՝ Հ-վիճակագրի[5] արժեքը ՀՀ բանկային համակարգի համար 0.3 է, ինչը վկայում է, որ ՀՀ բանկային համակարգին բնորոշ են խմբաշնորհային մրցակցության տարրեր:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԻՏԱԼԸ


Բանկային համակարգի կապիտալի աճի միտումները

Հաշվետու տարվա ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 18.2%-ով (42.8 մլրդ դրամով) և կազմել 278.4 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճին հիմնականում նպաստել են բանկային համակարգի կողմից ապահովված շահույթը և կանոնադրական հիմնադրամի աճը:

2009 թվականին կանոնադրական հիմնադրամ են համալրել 8 բանկեր՝ ընդհանուր 36.1 մլրդ դրամով: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում նույնիսկ օտարերկրյա ներդրողները ՀՀ բանկային համակարգի կանոնադրական կապիտալում բավականաչափ մեծացրել են իրենց մասնաբաժինը: Կանոնադրական հիմնադրամի աճի գերակշիռ մասը (28.6 մլրդ դրամը) համալրվել է արտաքին աղբյուրներից, որի արդյունքում բանկային համակարգի կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտների փայամասնակցության տեսակարար կշիռն ավելացել է 6.3 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 74.0%:

Գծապատկեր 1. Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի կառուցվածքը



1. Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ, 2. Գլխավոր պահուստ, 3. Չբաշխված շահույթ (ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների), 4. Այլ

[5] *Փանզարի և Ռոսսի մոդելի արդյունքում հաշվարկվում է Հ-վիճակագիրը, որի արժեքը բնութագրում է շուկայի մրցակցությունը. Հ-վիճակագրի արժեքի՝ 1-ին մոտ լինելու պարագայում շուկան բնութագրվում է որպես կատարյալ մրցակցային, 0 < Հ < 1 միջակայքը բնորոշ է խմբաշնորհային մրցակցությանը, իսկ 0-ից փոքր արժեքով Հ-վիճակագիր ունեցող շուկան մենաշնորհային է:*

Ըստ բանկային համակարգի 2009 թվականի վերահսկողական հաշվետվությունների՝ ստացվող զուտ շահույթը կազմել է 8.6 մլրդ դրամ, մինչդեռ միջազգային ստանդարտների համաձայն կազմված ֆինանսական հաշվետվությունների՝ ստացվող շահույթը կազմել է 15.4 մլրդ դրամ[6]:


Ընդհանուր պարտավորությունների աճի տեմպը եղել է 14.6 տոկոսային կետով ավելի բարձր, քան ընդհանուր կապիտալի աճի տեմպը, ինչի արդյունքում ընդհանուր կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցությունը (լևերիջի գործակիցը) նվազել է 3.3 տոկոսային կետով և տարեվերջին կազմել է 26.6%:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը

ՀՀ բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը, մի շարք երկրների համեմատությամբ, մշտապես բավականին բարձր է եղել: Կապիտալի համարժեքության բարձր մակարդակը բանկային համակարգին թույլ է տալիս ռիսկերը չեզոքացնել սեփական միջոցների հաշվին: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում հայաստանյան որևէ բանկ չկանգնեց անվճարունակության խնդրի առջև, ինչին իր էական նպաստումն է ունեցել կապիտալի համարժեքության բարձր մակարդակը:

2009 թվականին բանկերի նորմատիվային կապիտալի աճի տեմպը գերազանցել է ռիսկով կշռված ակտիվների աճի տեմպը, ինչի արդյունքում բանկային համակարգի կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը ավելացել է 0.9 տոկոսային կետով՝ կազմելով 28.4% (պահանջվող նվազագույնը 12% է):

Գծապատկեր 2. Ընդհանուր կապիտալի համարժեքությունը ըստ բանկերի[7]



[6] *ՀՀ վերահսկողական հաշվետվություններով ստացվող շահույթը տարբերվում է ՖՀՄՍ-ից հիմնականում ստանդարտ ակտիվների գծով 1%-ի չափով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումներ կատարելու փաստով, որը ՖՀՄՍ-ով ծախս չի համարվում:*

[7] *Նյութում առանձին բանկերով ներկայացված գծապատկերներում պահպանված չէ 1-ից 22 բանկերի նույն հաջորդականությունը:*

Առևտրային բանկերի սեփականատերերը

Ըստ կազմակերպաիրավական տեսակների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող 22 առևտրային բանկերից 1-ը սահմանափակ պատասխանատվությամբ, 3-ը՝ բաց բաժնետիրական, 18-ը՝ փակ բաժնետիրական ընկերություններ են:

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի մասնակիցներ են (բաժնետերեր, փայատերեր) 1642 ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնցից 83-ը՝ ոչ ռեզիդենտներ: Եթե բացառենք բաց բաժնետիրական ընկերության կարգավիճակ ունեցող 3 բանկերը, ապա 19 բանկերի մասնակիցները 66 ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնցից 34-ը՝ ոչ ռեզիդենտներ: Վեց բանկերում բաժնեմասերի 100%-ը տնօրինում է մեկ անձ (մեկ ռեզիդենտ իրավաբանական անձ, չորս ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ և մեկ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ), իսկ ևս տասը բանկերում մեկ բաժնետեր տնօրինում է բաժնետոմսերի 50%-ից ավելի բաժնեմասը:


ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկային համակարգի ներգրաված միջոցները

2009 թվականին բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն ավելացել են 32.9%-ով (259.3 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 1 տրլն 47.6 մլրդ դրամ:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը էապես նպաստեց դոլարայնացման խորացմանը, քանի որ տնտեսություն տրանսֆերտների զուտ ներհոսքի նվազումը և պղնձի, մոլիբդենի գների նվազման պայմաններում արտահանման ծավալների անկումը հանգեցրեցին արտարժութային ճնշումների և ՀՀ դրամի արժեզրկման: Արդյունքում՝ ՀՀ դրամային պարտավորությունները 2009 թվականին նվազել են 4.2%-ով, իսկ արտարժութային պարտավորությունները աճել են 63.1%-ով, ըստ որի՝ դրամային պարտավորությունների տեսակարար կշիռը նվազել է 12.5 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 32.4%:

Գծապատկեր 3. Բանկային համակարգի պարտավորությունները




Պարտավորությունների աճը հիմնականում ապահովվել է ի հաշիվ ընդհանուր ավանդների (177.3 մլրդ դրամով աճ), ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների (51.4 մլրդ դրամով աճ) և այլ ֆինանսական կազմակերպությունների (ոչ բանկ) նկատմամբ պարտավորությունների (27.2 մլրդ դրամ) աճի: ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է Կառավարության կողմից բանկերի միջնորդությամբ տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի իրականացմամբ:

Ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ընդհանուր ավանդները (ցպահանջ և ժամկետային միջոցները) ավելացել են 39.5%-ով և տարեվերջին կազմել 626.8 մլրդ դրամ: Ավանդների աճն ամբողջապես ապահովվել է արտարժութային ավանդների աճի հաշվին: Արտարժութային ավանդներն ավելացել են 100.3%-ով (231.8 մլրդ դրամով), իսկ դրամային ավանդները նվազել են 24.9%-ով (54.5 մլրդ դրամով):


Հաշվետու տարում՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց ցպահանջ պարտավորությունները ավելացել են համապատասխանաբար 29.6%-ով (37.0 մլրդ դրամով) և 46.3%-ով (28.6 մլրդ դրամով): Հատկանշական է, սակայն, որ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվների քանակն ավելացել է 18.7%-ով, իսկ ֆիզիկական անձանց ընթացիկ հաշիվների քանակը՝ 15.3%-ով՝ հանգեցնելով վերջիններիս հաշիվների ծավալների խոշորացման:

Գծապատկեր 4. Բանկային համակարգի ցպահանջ ավանդները



Իրավաբանական և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ծավալներն աճել են համապատասխանաբար 42.4%-ով (37.6 մլրդ դրամով) և 42.6%-ով (74.0 մլրդ դրամով), իսկ ժամկետային հաշիվների քանակը՝ համապատասխանաբար 20.1%-ով և 6.9%-ով, ինչը վկայում է, որ դրսևորվել են և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձանց ժամկետային ավանդների խոշորացման որոշակի միտումներ:

Գծապատկեր 5. Բանկային համակարգի ժամկետային ավանդները




Պարտավորությունների կազմում բանկերի լորո թղթակցային հաշիվները ավելացել են 20.4%-ով և կազմել 6.5 մլրդ դրամ: Տարեվերջին լորո հաշիվների 88%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտ բանկերին, իսկ ոչ ռեզիդենտ բանկերի լորո թղթակցային հաշիվների 71%-ը բաժին է ընկել Իրանում, 19%-ը՝ Ռուսաստանում գործող բանկերին:

Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը

2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններում ծախսատար պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 96.1% (նախորդ տարի՝ 95.0%): Ցածր ծախսատար ցպահանջ պարտավորությունների բացառման դեպքում, ծախսատար ժամկետային պարտավորությունների տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոխվել՝ տարեվերջին կազմելով 70.2% (նախորդ տարի՝ 70.1%):

Գծապատկեր 6. Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքը



1. Բանկային թղթակցային հաշիվներ, 2. Այլ պարտավորություններ բանկերի (ներառյալ ԿԲ) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 3. Ցպահանջ պարտավորություններ, 4. Ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ, 6. Հաշվարկված վճարվելիք տոկոսներ, 7. Այլ պարտավորություններ

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքում հիմնականում նվազել է բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների տեսակարար կշիռը և աճել ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների տեսակարար կշիռը:

Տարեվերջին ներգրաված միջոցների 26%-ը ցպահանջ է (ավանդներ, բանկային հաշիվներ, թղթակցային հաշիվներ և այլ), 53%-ը՝ մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ և 21%-ը՝ մեկ տարուց ավելի մարման ժամկետայնությամբ:

Առևտրային բանկերի հաճախորդները

ՀՀ առևտրային բանկերում սպասարկվող հաճախորդների քանակը 2009 թվականին ավելացել է 11.9%-ով (120.7 հազարով), ընդ որում՝ իրավաբանական անձ-հաճախորդների քանակն ավելացել է 16.0 %-ով (8.2 հազարով), իսկ ֆիզիկական անձ-հաճախորդների քանակը՝ 11.7%-ով (112.4 հազարով):

Տարեվերջին ֆիզիկական անձ-հաճախորդների քանակը կազմել է 1 մլն 76.1 հազար, իսկ իրավաբանական անձ-հաճախորդների քանակը՝ 59.6 հազար:


Տարվա ընթացքում բանկային հաշիվների (ընթացիկ և ժամկետային) քանակն ավելացել է 11.3%-ով և կազմել 1.5 միլիոն: Իրավաբանական անձանց հաշիվների քանակն ավելացել է 11.0%-ով կամ 11.5 հազարով և տարեվերջին կազմել է 1068.1 հազար: Ֆիզիկական անձանց հաշիվների քանակն ավելացել է 11.4%-ով կամ 145.5 հազարով և տարեվերջին կազմել 1.4 մլն:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ

Բանկային համակարգի տեղաբաշխած միջոցների աճի միտումները


2009 թվականի ընթացքում ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 29.5%-ով (302.1 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 1.0 տրլն 326 մլրդ դրամ:

Գծապատկեր 7. Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները



Ակտիվների կազմում հիմնական աճն ապահովել են բանկերի (ներառյալ ԿԲ) նոստրո թղթակցային հաշիվներն ու այլ պահանջները, ինչպես նաև տնտեսության վարկերը:

Գծապատկեր 8. Բանկային համակարգի ակտիվները



1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Թղթակցային հաշիվներ և այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ՝ ԿԲ), 3. Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 4. Պետական արժեթղթեր, 5. Այլ արժեթղթեր, 6. Վարկեր իրավաբանական անձանց, 7. Վարկեր ֆիզիկական անձանց, 8. Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին, 9. Լիզինգ և ֆակտորինգ, 10. Հիմնական միջոցներ, 11. Այլ ակտիվներ

Տնտեսությանը տրամադրված վարկերը (այդ թվում՝ ֆիզիկական, իրավաբանական անձանց տրամադրված վարկերը) 2009 թվականին ավելացել են 14%-ով (86.6 մլրդ դրամով) և կազմել 703.4 մլրդ դրամ: Աճն ամբողջովին պայմանավորվել է իրավաբանական անձանց վարկերի 36.7% աճով, իսկ ֆիզիկական անձանց վարկերը նվազել են 7.3%-ով: Ընդ որում՝ աճն ապահովվել է տարվա երկրորդ կիսամյակին: Առաջին կիսամյակի ընթացքում բանկերը հիմնականում ճշգրտել են ֆինանսատնտեսական ճգնաժամի նոր մարտահրավերներն ու ռիսկերը և զգուշավորություն ցուցաբերել վարկային շուկայում, իսկ երկրորդ կիսամյակից արդեն վարկային շուկան էապես աշխուժացել է:

ԿԲ-ում թղթակցային հաշիվները և այլ պահանջները ԿԲ-ի նկատմամբ ընդհանուր ավելացել են 85.3%-ով (88.7 մլրդ դրամով), այլ բանկերում նոստրո թղթակցային հաշիվները և այլ պահանջները՝ 57.2%-ով (54.5 մլրդ դրամով): Նոստրո թղթակցային հաշիվներն առանձնանում են կենտրոնացվածությամբ՝ ինչպես աշխարհագրական առումով, այնպես էլ ըստ ռեզիդենտայնության: Տարեվերջին թղթակցային հաշիվների 99.1%-ը տեղաբաշխված է եղել ոչ ռեզիդենտ բանկերում (նախորդ տարի՝ 96.2%-ը): ԱՄՆ բանկերում ներդրված է ոչ ռեզիդենտ բանկերում թղթակցային հաշիվների ընդհանուր ծավալի 38%-ը, Գերմանիայի Դաշնության բանկերում՝ 23%-ը, Ռուսաստանի Դաշնության բանկերում՝ 15%-ը (31.12.2008թ.՝ համապատասխանաբար 40%, 15% և 11%) և այլ երկրների բանկերում՝ 24%-ը:


Պետական արժեթղթերում ներդրումների ծավալները ավելացել են 34.6%-ով և տարեվերջին կազմել են 109.2 մլրդ դրամ: Այլ արժեթղթերում ներդրումների ծավալները ավելացել են 27.6%-ով և տարեվերջին կազմել 4.3 մլրդ դրամ:

Բանկային համակարգի հիմնական միջոցները տարվա ընթացքում ավելացել են 18.4%-ով և տարեվերջին կազմել 61.3 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 22.0%-ը: Հատկանշական է, որ ՀՀ բոլոր առևտրային բանկերում հիմնական միջոցների մեծությունը զգալի զիջում է ընդհանուր կապիտալի մեծությանը:

Բանկային համակարգի տեղաբաշխած միջոցների կառուցվածքը

Ճգնաժամի պայմաններում բանկերի կողմից որդեգրած զգուշավոր վարկային քաղաքականության պայմաններում ոչ եկամտաբեր բարձր իրացվելի ակտիվները, ի տարբերություն եկամտաբեր ակտիվների, ապահովեցին առաջանցիկ աճի տեմպ: Արդյունքում՝ 31.12.2009 թվականի դրությամբ բանկային համակարգի եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում կազմել է 72.6% (31.12.2008թ. դրությամբ՝ 78.3%): Առանց ցածր եկամտաբեր թղթակցային հաշիվների, մնացյալ եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը կազմել է 68.9% (31.12.2008թ. դրությամբ՝ 72.0%):

Գծապատկեր 9. Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Թղթակցային հաշիվներ և այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ՝ ԿԲ), 3. Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 4. Պետական արժեթղթեր, 5. Այլ արժեթղթեր, 6. Վարկեր իրավաբանական անձանց, 7. Վարկեր ֆիզիկական անձանց, 8. Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին, 9. Լիզինգ և ֆակտորինգ, 10. Հիմնական միջոցներ, 11. Այլ ակտիվներ

Ակտիվների կառուցվածքում զգալի ավելացել է բանկերի (ներառյալ ԿԲ) նկատմամբ պահանջների (ներառյալ թղթակցային հաշիվները) տեսակարար կշիռը և նվազել ֆիզիկական անձանց վարկերի տեսակարար կշիռը:

Ըստ տեղաբաշխված միջոցների ժամկետայնության, 2009 թվականին էական փոփոխություն չի արձանագրվել. 31.12.2009 թվականի դրությամբ տեղաբաշխված միջոցների 25%-ը ցպահանջ է, 37%-ը՝ 1 -12 ամիս ժամկետայնությամբ և 38%-ը՝ մեկ տարուց ավելի և անժամկետ (նախորդ տարի՝ համապատասխանաբար 23%, 40% և 37%):


Բանկային համակարգի վարկային ներդրումները (համընդհանուր վարկերը, լիզինգը, ֆակտորինգը և ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված վարկերն ու ավանդները)

Բանկային համակարգի վարկային ներդրումներն ավելացել են 23.9%-ով (155.5 մլրդ դրամով) և կազմել 806.2 մլրդ դրամ: Դրամով վարկային ներդրումները նվազել են 7.0%-ով, իսկ արտարժույթով վարկային ներդրումները ավելացել են 72.9%-ով, որի արդյունքում դրամով վարկային ներդրումների տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում նվազել է 15.3 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 46.0%:

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումները ավելացել են 656.3%-ով և կազմել 59.9 մլրդ դրամ, իսկ ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներն ավելացել են 16.1%-ով և կազմել 746.3 մլրդ դրամ:

2009 թվականին, բացառությամբ սպառողական վարկերի, մյուս բոլոր ոլորտների վարկային ներդրումներում արձանագրվել է աճ: Ընդհանուր առմամբ, տարին առանձնահատուկ էր վարկերի ճյուղայնության կառուցվածքի փոփոխության տեսանկյունից: Եթե մինչև 2009 թվականը բանկերի վարկավորման կառուցվածքում գերակշռում էին սպառողական վարկերը, ապա հաշվետու տարում գերազանցապես վարկավորվել է արդյունաբերության ճյուղը, ինչի արդյունքում վարկային պորտֆելում կտրուկ մեծացել է այդ վարկերի տեսակարար կշիռը: Այս միտումը կնպաստի տնտեսական աճին և, վերջին հաշվով, նաև բանկային համակարգի շարունակական զարգացմանը: Արդյունաբերության ճյուղում վարկերն ավելացել են 71.2%-ով (61.1 մլրդ դրամով), գյուղատնտեսությունում՝ 21.1%-ով (7.7 մլրդ դրամով), շինարարությունում՝ 37.1%-ով (14.7 մլրդ դրամով), տրանսպորտի և կապի ճյուղում՝ 50.7%-ով (5.2 մլրդ դրամով), առևտրի ճյուղում՝ 10.2%-ով (13.5 մլրդ դրամով), հանրային սննդի ու սպասարկման այլ ոլորտներում՝ 30.0%-ով (6.8 մլրդ դրամով), հիփոթեքային վարկերում՝ 0.4%-ով (0.3 մլրդ դրամով), այլ ոլորտներում՝ 30.0%-ով (1.8 մլրդ դրամով): Սպառողական վարկերում արձանագրվել է 21.8% (38.1 մլրդ դրամով) նվազում:


Գծապատկեր 10. Ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի ծավալները




1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9.Հիփոթեքային, 10. Այլ ճյուղեր

31.12.2009 թվականի դրությամբ վարկավորման հիմնական ուղղություններ են հանդիսանում արդյունաբերությունը, առևտուրը, սպառողական և հիփոթեքային վարկերը:

Գծապատկեր 11. Ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի





1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9.Հիփոթեքային, 10. Այլ ճյուղեր

Բանկային համակարգի՝ ըստ տնտեսության ճյուղերի վարկավորման՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը, հիմնականում ի հաշիվ բարձր տեսակարար կշիռ ունեցող սպառողական վարկերի նվազման, նախորդ տարվա համեմատ նվազել է 0.024-ով և կազմել 0.141: Նույն ցուցանիշի մեծությունը, ըստ բանկերի միջինի, կազմել է 0.175, ինչը վկայում է, որ մի շարք բանկերում վարկավորման ճյուղային կենտրոնացվածությունը համեմատաբար բարձր մակարդակ ունի:

Վարկային ներդրումներում գերակշռում են երկարաժամկետ (1 տարի և ավելի ժամկետայնությամբ) վարկերը՝ 69.9% տեսակարար կշռով:

Վերջին տարիներին վարկերի կառուցվածքում ավելացել է երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռը: Միջազգային ֆինանսական կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում բանկերի միջնորդությամբ տրամադրվող երկարաժամկետ նպատակային վարկերը մասամբ օժանդակում են երկարաժամկետ վարկերի պահանջարկի բավարարմանը: 31.12.2009 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործող 18 բանկեր և 6 վարկային կազմակերպություններ սպասարկում են.

- ✓ Համաշխարհային բանկի,
- ✓ Գերմանա-հայկական հիմնադրամի,
- ✓ Զարգացման միջազգային կապեր կորպորացիայի,
- ✓ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի,
- ✓ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի,
- ✓ Միգրացիայի միջազգային կազմակերպության,
- ✓ Ասիական զարգացման բանկի,
- ✓ Սևծովյան առևտրի և զարգացման բանկի,


- ✓ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի,
- ✓ Միջազգային ֆինանսական կորպորացիայի,
- ✓ այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում իրականացվող վարկային ծրագրերը:

Միջազգային ծրագրերի շրջանակներում բանկերի կողմից տրամադրված վարկերը 2009 թվականին ավելացել են 7%-ով և տարեվերջին կազմել 89 մլրդ դրամ: Միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերում 31.12.2009 թ. դրությամբ ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը կազմել է 1.3%: Վարկերի մոտ 86%-ը մեկ տարուց ավելի ժամկետով է, 9%-ը՝ 6 ամսից մեկ տարի ժամկետով և 5%-ը՝ մինչև 6 ամիս ժամկետով: 31.12.2009 թվականի դրությամբ ծրագրերի վարկավորման հիմնական ուղղություններ են եղել առևտուրը՝ ընդհանուր վարկավորման ծավալի 32%-ը, արդյունաբերությունը՝ 22%-ը, գյուղատնտեսությունը՝ 14%-ը և հիփոթեքայինը՝ 9%-ը:

Վարկային պորտֆելի որակը

Նախորդ տարիներին վարկերի արագատեմպ աճը, ինչպես նաև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը նախադրյալներ էին ստեղծել վարկերի որակի վատթարացման համար, սակայն վարկերի էական վատթարացում 2009 թվականին չարձանագրվեց: Հաշվետու տարվա ընթացքում չաշխատող (հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասերի) վարկերի տեսակարար կշիռը ավելացավ 0.4 տոկոսային կետով՝ ընդհանուրում կազմելով 4.8%[8], իսկ չաշխատող ակտիվների (վարկերի և դեբիտորական պարտքերի) տեսակարար կշիռը ավելացավ 0.3 տոկոսային կետով՝ ընդհանուրում կազմելով 4.2%: Չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի մեծությունը ավելացել է 8.0 մլրդ դրամով և կազմել 36.9 մլրդ դրամ, իսկ ստանդարտ ակտիվների մեծությունը՝ 137.1 մլրդ դրամով և կազմել 839.7 մլրդ դրամ:

Գծապատկեր 12. Բանկային համակարգի չաշխատող ակտիվները



1. Հսկվող դասի վարկեր և դեբիտորական պարտքեր, 2. Ոչ ստանդարտ դասի վարկեր և դեբիտորական պարտքեր, 3. Կասկածելի դասի վարկեր և դեբիտորական պարտքեր

[8] *ՍՄՀ մեթոդի համաձայն՝ չաշխատող ակտիվներ են դիտարկվում 90 օրից ավելի ժամկետանց ակտիվները (ներառյալ «անհուսալի» դասի ակտիվները): Այս պարագան հաշվի առնելու դեպքում չաշխատող վարկեր/ընդհանուր վարկեր հարաբերակցությունը ՀՀ բանկային համակարգի համար կկազմի 6.1%:*

Տարեվերջին չաշխատող ակտիվների 0.4%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտներին, իսկ 99.6%-ը՝ ռեզիդենտներին: Ըստ տնտեսության ճյուղերի՝ ռեզիդենտների չաշխատող վարկերի կշիռը համեմատաբար բարձր է շինարարության ճյուղի՝ 7.4%, առևտրի ճյուղի՝ 6.7% և հիփոթեքային վարկերում՝ 6.8%:


ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բանկային համակարգի եկամտաբերությունը

2009 թվականին բանկային համակարգի վերահսկողական հաշվետվությունների հիման վրա ստացվող զուտ շահույթի մեծությունը կազմել է 8.6 մլրդ դրամ[9]: Տարվա ընթացքում շահույթով են աշխատել 14 բանկեր, որոնց ընդհանուր զուտ շահույթի մեծությունը կազմել է 12.4 մլրդ դրամ:

ՖՀՄՄ համաձայն՝ բանկային համակարգի շահույթը 2009 թվականին կազմել է 15.4 մլրդ դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների 1.3% է, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 6.2%:

Գծապատկեր 13. Շահութաբերությունը՝ ըստ 14 շահութաբեր բանկերի (2009թ. տարեկան)



Բանկային համակարգի համար տարին լի էր ճգնաժամային մարտահրավերներով: Տնտեսական անկման, տրանսֆերտների և գործոնային եկամուտների նվազման, ազգային արժույթի զգալի արժեզրկման պայմաններում բանկային համակարգում մեծացել է նաև վարկային և արտարժութային ռիսկերով պայմանավորված ծախսերի մակարդակը: Արդյունքում՝ բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները նախորդ տարվա համեմատ բավականին նվազել են: Հատկանշական է սակայն, որ ռիսկերը այնուամենայնիվ գործել են կառավարելի շրջանակներում, և որևէ բանկ իրացվելիության և անվճարունակության խնդրի առջև չի կանգնել: Բանկային համակարգի շահութաբերությունն ըստ ակտիվների (զուտ շահույթի հարաբերությունն

[9] *ԿԲ ներկայացվող հաշվետվությունների և ՖՀՄՄ համաձայն՝ շահույթի մեծությունների խոշոր տարբերությունը հիմնականում պայմանավորված է ստանդարտ ակտիվների գծով 1%-չափով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումներ կատարելու փաստով, քանի որ բանկերը այդչափով ծախս են ճանաչում:*

ակտիվների միջին տարեկան մեծությանը) 2009 թվականին կազմել է 0.7%, իսկ ըստ կապիտալի (զուտ շահույթի հարաբերությունը կապիտալի միջին տարեկան մեծությանը)՝ 3.4% (2008 թվականին համապատասխանաբար կազմել են 3.0% և 13.4%): Բանկային համակարգի զուտ գործառնական մարժան[10] հաշվետու տարում նվազել է 1.6 տոկոսային կետով՝ կազմելով 2.9%:

Շահութաբեր 14 բանկերի շահույթի՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը նախորդ տարվա համեմատ ավելացել է 0.035-ով և կազմել 0.156 միավոր: Վերջինս բնութագրում է շահութաբեր բանկերի միջև համակարգի շահույթի կենտրոնացվածության մակարդակի փոքր-ինչ բարձրացման մասին:

Բանկային համակարգի ծախսերի և եկամուտների կառուցվածքը


Ճգնաժամի պայմաններում վարկային ռիսկի որոշակի ավելացման արդյունքում 2009 թվականին բանկային համակարգի համախառն եկամուտների և համախառն ծախսերի կառուցվածքում զգալի ավելացել են համապատասխանաբար՝ ակտիվների հնարավոր կորուստների պահուստից վերադարձի և ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված հատկացումների տեսակարար կշիռները:

Հաշվետու տարում, 2008 թվականի համեմատ, համախառն եկամուտներն ավելացել են 25.2%-ով (43.1 մլրդ դրամով), իսկ համախառն ծախսերը՝ 47.6%-ով (64.9 մլրդ դրամով):

Համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտներն ավելացել են 21.4%-ով, ոչ տոկոսային եկամուտները նվազել են 10.4%-ով և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձը ավելացել է 64.4%-ով:

Ծախսային մասում, նախորդ տարվա համեմատ, տոկոսային ծախսերն ավելացել են 52.0%-ով, ոչ տոկոսային ծախսերը՝ 8.6%-ով, իսկ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին հատկացումները՝ 90.4%-ով:


Գծապատկեր 14. Բանկային համակարգի ծախսերը և եկամուտները



[10] *Զուտ գործառնական մարժան հավասար է զուտ տոկոսային և զուտ ոչ տոկոսային եկամուտների գումարի և ընդհանուր ակտիվների միջին տարեկան մեծության հարաբերությանը:*

Եկամուտների և ծախսերի վերոնշյալ աճի արդյունքում համախառն եկամտի կազմում 7.5 տոկոսային կետով ավելացել են ակտիվների հնարավոր կորուստների պահուստից վերադարձի, իսկ համախառն ծախսերում՝ 9.9 տոկոսային կետով՝ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված հատկացումների տեսակարար կշիռները:

Գծապատկեր 15. Բանկային համակարգի ծախսերի և եկամուտների կառուցվածքը



Բանկային համակարգի տոկոսային եկամուտների աճը հիմնականում պայմանավորվել է տնտեսությանը տրամադրված վարկերից ստացած եկամուտների 21.4% աճով: Վարկերից ստացված տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր տոկոսային եկամուտների կազմում չի փոփոխվել՝ կազմելով 83.8%:

Ոչ տոկոսային եկամուտների նվազման հիմնական պատճառը արտարժույթի վերագնահատումից ստացված վնասն է: Ոչ տոկոսային եկամուտների 48.7%-ը բաժին է ընկել միջնորդավճարներից ստացված եկամուտներին, 43.6%-ը՝ արտարժույթի առք ու վաճառքից ստացված եկամուտներին:

Տոկոսային ծախսերի աճը հիմնականում պայմանավորվել է ժամկետային ավանդների դիմաց վճարվելիք տոկոսային ծախսերի 54.1% աճով: Վերջինիս բաժին է ընկել տոկոսային ծախսերի 51.1%-ը:

Ոչ տոկոսային ծախսերի աճը հիմնականում բանկի շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության վճարի 27.0% աճի ու հաշվեգրված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 2.9% աճի արդյունք է: Դրանք համապատասխանաբար կազմել են ոչ տոկոսային ծախսերի 5.5%-ը և 43.3%-ը: Բանկային համակարգի միջին աշխատավարձի բարձրացումը 2009 թվականին շարունակվել է. աշխատավարձի 2.9% աճին զուգահեռ, բանկային համակարգի աշխատողների թվաքանակը գրեթե չի փոխվել:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը Հայաստանի բանկային համակարգի վրա իր ազդեցությունն ունեցել է 2008 թվականի չորրորդ եռամսյակից: 2009 թվականին թեև փոքր-ինչ ավելացավ վարկային և արտարժութային ռիսկերով պայմանավորված վնասների մեծությունը, այնուամենայնիվ, ՀՀ առևտրային բանկերում ռիսկերը գործել են կառավարելի շրջանակներում, և Հայաստանի ֆինանսական կայունությունը չի խաթարվել:

Վարկային ռիսկ

Վերջին տարիներին արձանագրված վարկերի կտրուկ աճը, զուգորդվելով ՀՀ-ում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության հետևանքների հետ, նպաստեց վարկերի որակի փոքր-ինչ վատացմանը: 2009 թվականին ընդհանուր վարկերում չաշխատող վարկերի («հսկվող», «ոչ ստանդարտ» և «կասկածելի» դասերի վարկերի) տեսակարար կշիռը ավելացավ 0.4 տոկոսային կետով: 2009 թվականի առաջին կիսամյակի ընթացքում բանկային համակարգը և վարկառուները զգուշավոր վարքագիծ դրսևորեցին, ինչի պատճառով նվազեց վարկային շուկայի ակտիվությունը: Սակայն 2009 թվականի երկրորդ կիսամյակից վարկային շուկան էապես աշխուժացավ՝ ինչին նպաստեց բանկերի և վարկառուների շրջանում վարկառուների եկամուտների կայունության որոշակի սպասումների ձևավորումը, ԿԲ կողմից որդեգրված ընդլայնողական քաղաքականությունը և պետության աջակցությամբ իրականացվող տարբեր ծրագրերը: Հատկանշական է նաև, որ տարվա առաջին կեսին վատորակ վարկերի («հսկվող», «ոչ ստանդարտ» և «կասկածելի» դասերի վարկերը) տեսակարար կշիռը հասավ մինչև 10%, իսկ երկրորդ կեսին նվազեց՝ տարեվերջին կազմելով ընդհանուր վարկերի ընդամենը 4.8%-ը:


Չաշխատող ակտիվների (վարկերի և դեբիտորական պարտքերի) մեծությունը կազմել է նորմատիվային ընդհանուր կապիտալի 14.3%-ը (նախորդ տարի՝ 13.5%): Ընդ որում, եթե չաշխատող ակտիվների 36.9 մլրդ դրամ մեծությունից հանենք ակտիվների հնարավոր կորուստների հատուկ պահուստի 9.3 մլրդ դրամ մեծությունը, ապա մնացյալ՝ ծածկույթ չունեցող չաշխատող ակտիվների մեծությունը կկազմի նորմատիվային կապիտալի 10.7%-ը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ դասակարգված ակտիվներն ամբողջությամբ դուրս գրվելու վատթարագույն սցենարի դեպքում (անտեսվում է գրավադրված գույքի արժեքը) և բանկային համակարգի կայունությունը չի վտանգվի: Բանկային համակարգում առկա ֆինանսական ռիսկերից էապես կարևորվում է վարկային ռիսկի պատշաճ կառավարումը:

2009 թվականի ընթացքում զուտ մասհանումների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում ավելացել է 1.1 տոկոսային կետով և կազմել է 1.6%:

Ըստ տնտեսության ճյուղերի վարկային ներդրումների՝ կենտրոնացվածությունը նվազել է, քանի որ տարեսկզբին ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող սպառողական վարկերի ծավալը նվազել է, իսկ ավելի փոքր տեսակարար կշիռ ունեցող արդյունաբերության ճյուղի վարկերը կտրուկ ավելացել են[11]:

[11] *Տես գծապատկեր 11 (ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի):*

Գծապատկեր 16. Նորմատիվային ցուցանիշները ըստ բանկերի (31.12.2009 թ. դրությամբ)



31.12.2009 թվականի դրությամբ բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշը կազմել է 28.4%, մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ նորմատիվային կապիտալի 15.9%-ը, խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 104.5%-ը, բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 2.9%-ը, բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 8.7%-ը: Նշված ցուցանիշները վկայում են, որ այս ռիսկերը կառավարելի շրջանակներում են:

Արտարժութային ռիսկ

2009 թվականին ՀՀ դրամի միջին անվանական փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվեց 15.8%-ով: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության նախանշանները ՀՀ բանկային համակարգի և տնտեսության վրա դրսևորվեցին արդեն 2008 թվականի չորրորդ եռամսյակում: 2009 թվականի տարեսկզբին ԿԲ կողմից իրականացված դրամավարկային քաղաքականության հիմնական գերակայությունը գների կայունության և ֆինանսական համակարգի կայունության խնդիրների զուգորդումն էր: Ազգային արժույթի արժեզրկման ճնշումների, բանկային համակարգից խնայողությունների արտահոսքի և դրամային ավանդները դոլարայինով փոխարինման գործընթացների հետևանքով բանկային համակարգում առաջացած արտարժութային իրացվելիության և կապիտալի բավարարության հետ կապված ռիսկերը չեզոքացնելու նպատակով ԿԲ-ն տարեսկզբից մեծացրեց միջամտությունն արտարժույթի շուկայում՝ փորձելով կայունացնել փոխարժեքը: Հունվար և փետրվար ամիսներին ԿԲ-ն բավականաչափ ակտիվ էր ՀՀ ֆինանսական շուկայում՝ հնարավորություն տալով բանկերին ամրացնել իրենց ֆինանսական դիրքերը և դիմագրավել համաշխարհային ճգնաժամի հետևանքով առաջացած ճնշումներին: Մարտի սկզբին, երբ ֆինանսական համակարգը բավարար կապիտալացված էր, իրացվելի և պատրաստ դիմակայելու ճգնաժամի հետագա մարտահրավերներին, ԿԲ-ն դադարեցրեց միջամտությունն արտարժույթի շուկայում, ինչի հետևանքով ձևավորվեց փոխարժեքի նոր հավասարակշռված մակարդակ:


Արդյունքում՝ 2009 թվականին, նախորդ տարիների համեմատ, բանկային համակարգի արտարժութային ռիսկով պայմանավորված վնասները ավելի մեծ էին: Այլ արժույթների նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի տատանումների հետևանքով բանկային համակարգը արտարժույթի վերագնահատման հետևանքով ունեցել է ընդհանուր 5.7 մլրդ դրամի չափով վնաս, որը կազմել է բանկային համակարգի նորմատիվային կապիտալի 2.2%-ը (նախորդ տարի վնասը կազմել էր կապիտալի 0.4%-ը): Արտարժույթի վերագնահատման հետևանքով վնաս է ունեցել 14 բանկ, իսկ եկամուտ՝ 8 բանկ: Հատկանշական է նաև, որ բանկային համակարգն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների արդյունքում հաշվետու տարում ապահովել է 13.8 մլրդ դրամ եկամուտ (նախորդ տարվա համեմատ նվազել է 5.7%-ով):

Արտարժույթի ռիսկի գնահատման VaR (Value at risk) մեթոդաբանությամբ կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 31.12.2009 թ. դրությամբ բանկային համակարգի արտարժույթի վերագնահատման արդյունքում մեկօրյա հնարավոր վնասները 95% հավանականությամբ չեն գերազանցի 2.0 մլրդ դրամը[12]:

Իրացվելիության ռիսկ

2009 թվականին բանկային համակարգի կողմից իրականացված զգուշավոր վարկային քաղաքականության արդյունքում ակտիվների աճի տեմպը (29.5% աճ) ավելի քանի կրկնակի գերազանցեց վարկերի աճի տեմպը (14% աճ), ինչի արդյունքում զգալի մեծացավ բանկային համակարգի իրացվելիության մակարդակը: 2009 թվականին բանկային համակարգի իրացվելիության մակարդակը բավականին բարձր էր:

Գծապատկեր 17. Իրացվելիության նորմատիվային ցուցանիշները ըստ բանկերի (31.12.2009թ. դրությամբ)



Տարվա ընթացքում բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվների ծավալը աճել է 88.8%-ով և կազմել է 420.8 մլրդ դրամ: Արդյունքում՝ բանկային համակարգի ընդհանուր իրացվելիության (բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերություն) և ընթացիկ իրացվելիության (բարձր

[12] *VaR մոդելով գնահատված կորուստների հաշվարկում կատարվում է ենթադրություն, որ տարվա ընթացքում բանկային համակարգի արտարժութային դիրքը չի փոփոխվի:*

իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերություն) նորմատիվային ցուցանիշները ավելացել են համապատասխանաբար 10.6 և 37.7 տոկոսային կետերով՝ կազմելով 34.4% և 140.8%:

Ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ցուցանիշները նորմատիվային պահանջվող մակարդակից բարձր են և իրացվելիության հիմնախնդրի առաջացման վտանգ չեն պարունակում:

Իրացվելիության տեսանկյունից կարևորվում է, որ բանկային համակարգը, չունենալով կարճաժամկետ արտաքին պարտավորություններ, 2009 թվականին չկանգնեց տնտեսությունից միջոցների արտահոսքի խնդրի առջև: Կարևորվում է նաև, որ բանկային համակարգի պարտավորությունները կախվածություն չունեն նաև խոշոր ավանդատուներից և բացառվեն բանկային համակարգի պարտավորությունների կենտրոնացումները: 2009 թվականին ընդհանուր պարտավորություններում «խոշոր» պարտավորությունների[13] տեսակարար կշիռը ավելացել է 0.2 տոկոսային կետով և կազմել 32.9%:

Գնային ռիսկ

ՀՀ բանկային համակարգում գնային ռիսկը գնահատվում է բավականին ցածր: 2009 թվականին բանկային համակարգը գնային ռիսկով պայմանավորված վնասներ գրեթե չի ունեցել:

Համեմատաբար ռիսկային ոչ պետական արժեթղթերում բանկային համակարգի կողմից տարեվերջին իրականացված ներդրումները կազմել են 4.3 մլրդ դրամ, որը նորմատիվային կապիտալի 1.7%-ն է, և նշված արժեթղթերի գների նույնիսկ կտրուկ տատանումները չէին կարող բանկային համակարգին էական վնաս պատճառել: ՀՀ բանկային համակարգի առևտրային նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կշիռն ընդհանուր ակտիվներում անհամեմատ փոքր է, և գնային ռիսկը գնահատվում է բավականին ցածր: Առևտրային նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից բանկային համակարգն ունեցել է 6 մլն դրամ վնաս (կապիտալի 0.02%-ը), իսկ հիմնական միջոցների վերագնահատումից՝ 288 մլն դրամ վնաս (կապիտալի 0.1%-ը):

Հիմնական միջոցների գների ոչ կտրուկ տատանումները ևս խոշոր վնասների չէին հանգեցնի: Հիմնական միջոցների շուկայական գների, օրինակ՝ 30%-ով նվազման դեպքում, անշարժ գույքի վերագնահատման արդյունքում համակարգի կորուստը կկազմեր նորմատիվային կապիտալի 5.9%-ը: Տարեվերջի դրությամբ բանկային համակարգի հիմնական միջոցների մեծությունը կազմել է 61.3 մլրդ դրամ:

Գնահատվել է նաև անշարժ գույքի գների նվազման ազդեցությունը վարկային պորտֆելի որակի վրա (վարկային ռիսկի տեսանկյունից): Ըստ սթրես-սցենարների հաշվարկների՝ անշարժ գույքի շուկայական արժեքի 30% արժեզրկման դեպքում խոցելի վարկային պորտֆելի[14] 100%-ի չվերադարձման հետևանքով բանկային համակարգի վնասը (հաշվի առնելով այդ վարկերի դիմաց գրավադրված գույքի արժեզրկված գնով իրացումը) կկազմեր նորմատիվային ընդհանուր կապիտալի 5.3%-ը:

---

[13] Այն բոլոր միջոցների հանրագումարը, որոնք առանձին վերցրած գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը՝ առանց հաշվի առնելու փոխկապակցվածությունը:

[14] Խոցելի վարկային պորտֆելը բանկի այն վարկերի մնացորդների հանրագումարն է, որոնց մնացորդային մեծությունները գերազանցում են դրանց դիմաց գրավադրված անշարժ գույքի 30%-ով արժեզրկված արժեքները:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը բանկային համակարգում կառավարելի շրջանակներում է, քանի որ ակտիվների և պարտավորությունների միջին ժամկետայնությունը կարճ է, և համակարգը շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների ժամանակ կարող է արագ արձագանքել և վերանայել տոկոսադրույքները: Վերջին տարիներին բանկային համակարգի ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնության ճեղքվածքը գրեթե չի փոփոխվում՝ մնալով մոտ կես տարվա շրջանակներում:

Համաձայն տոկոսադրույքի ռիսկի դյուրացիայի մեթոդով իրականացված հաշվարկների՝ ընդհանուր շուկայական տոկոսադրույքների (ակտիվների և պարտավորությունների) 2 տոկոսային կետով աճի դեպքում բանկային համակարգի կապիտալի տնտեսական արժեքը կնվազի 1.5 մլրդ դրամով կամ նորմատիվային կապիտալի 0.6%-ի չափով:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ տարածքում գործող վարկային ընկերություններ

2009 թվականի ընթացքում վարկային կազմակերպության գործունեության լիցենզիա է ստացել չորս ընկերություն՝ «Ազգային հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն[15], «ՓՄՉ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն, «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ը և «Կրեդիտ Յունիոն» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն: Ուժը կորցրած են ճանաչվել «Կասկադ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ–ի և «Իզմիրլյան» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ի վարկային կազմակերպության լիցենզիաները: Տարվա ընթացքում վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի քանակն ավելացել է յոթով: 31.12.2009 թվականի դրությամբ ՀՀ տարածքում գործել են քսանյոթ վարկային կազմակերպություններ (հիսունհինգ մասնաճյուղերով), որոնցից չորսը լիզինգային կազմակերպություններ են, մեկը՝ վարկային միություն և քսաներկուսը՝ ունիվերսալ վարկային կազմակերպություն:

Կենտրոնացվածությունը ՀՀ վարկային կազմակերպություններում

Վարկային կազմակերպությունների կենտրոնացվածության մակարդակը դրսևորել է նվազման որոշակի միտումներ: Տարբեր ամփոփ ցուցանիշների՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը հիմնականում նվազել է: Աղյուսակ 5-ում նշված ցուցանիշների գծով Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցները տատանվում են 0.1-ից 0.12-ի միջակայքում՝ վկայելով համակարգի համեմատաբար թույլ կենտրոնացվածության մասին:

---

[15] ՀՀ կենտրոնական բանկը 2009 թվականի հունիսի 16-ին գրանցել է «Ազգային հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպությունը, որը հանդիսանալու է ՀՀ երկրորդային շուկայի օպերատորը (հիփոթեքային հիմնադրամ) և իրականացնելու է առաջնային շուկայում տեղաբաշխված հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորումը:

ՀՀ հիփոթեքային շուկայի զարգացման համար անհրաժեշտ բարեփոխումների իրականացման և «Ազգային հիփոթեքային ընկերության» գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի փորձագետների աջակցությամբ մշակվել է գործողությունների ծրագիր, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի նախաձեռնությամբ ստեղծվել է համապատասխան աշխատանքային խումբ, որը զբաղվելու է հիփոթեքային շուկայի զարգացման հիմնախնդիրներով:

Միաժամանակ, «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ-ի գործարար ծրագրի մշակման և հիփոթեքային շուկայի գնահատման նպատակով ներգրավվել են միջազգային փորձագետներ և վերջիններիս օժանդակությամբ իրականացվել են մի շարք աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝ հիփոթեքային վարկավորման վերաֆինանսավորման հետ կապված գործընթացների արդյունավետության բարձրացում, հիփոթեքային վարկերի վաճառքի ժամանակ իրավունքների փոխանցման գործընթացում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կադաստրի հետ ծագող խնդիրների լուծմանն ուղղված հայեցակարգի մշակում և այլն:


Աղյուսակ 5. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը

Ցուցանիշներ	31.12.07	31.12.08	31.12.09
Ընդհանուր ակտիվներ	0.14	0.14	0.10
Ընդհանուր պարտավորություններ	0.20	0.17	0.12
Ընդհանուր կապիտալ	0.09	0.09	0.11
Տնտեսությանը տրամադրված վարկեր, լիզինգ, ֆակտորինգ	0.16	0.15	0.11

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԱՊԻՏԱԼ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը տարվա ընթացքում ավելացել է 15.2%-ով (10.3 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 75.8 մլրդ դրամ կամ բանկային համակարգի ակտիվների 5.7%-ը (տարեսկզբին՝ 6.4%): Ակտիվների աճ է արձանագրվել 20 և նվազում՝ 7 վարկային կազմակերպություններում:

Գծապատկեր 18. Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի ծավալները




1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9.Հիփոթեքային, 10. Այլ ճյուղեր

Ակտիվների կազմում հիմնականում աճել է բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները (ներառյալ ընթացիկ հաշիվները)՝ 12.5 մլրդ դրամով: Տարվա ընթացքում ճգնաժամի պայմաններում տնտեսությանը տրամադրած վարկային ներդրումները (ներառյալ լիզինգը) նվազել են 13.9%-ով և կազմել 50.3 մլրդ դրամ (նվազմանը էապես նպաստել է նաև 2 վարկային կազմակերպությունների այս շուկայից դուրս գալու հանգամանքը): Վարկային կազմակերպությունների վարկավորման ոլորտը ընդգրկում է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը: Վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող

վարկերի միջին տոկոսադրույքները, որպես կանոն, փոքր-ինչ գերազանցել են բանկային համակարգի կողմից առաջարկվող վարկերի միջին տոկոսադրույքները, այնուամենայնիվ, բնակչության լայն խավը օգտվում է նաև վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող վարկային ծառայություններից՝ համարելով ավելի մատչելի: Ըստ ոլորտների՝ հիմնականում նվազում է արձանագրվել արդյունաբերության ճյուղի վարկերում՝ 46%-ով (2.9 մլրդ դրամով) և սպառողական վարկերում 47%-ով (3.9 մլրդ դրամով):

Արդյունքում զգալի նվազել են արդյունաբերության ճյուղի ու սպառողական վարկերի տեսակարար կշիռները և ավելացել է ֆինանսական հատվածի վարկավորման տեսակարար կշիռը:

Գծապատկեր 19. Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9. Հիփոթեքային, 10. Այլ ճյուղեր

Վարկային կազմակերպությունների չաշխատող («ստանդարտ», «հսկվող» և «կասկածելի» դասերի) վարկերի տեսակարար կշիռն ավելացել է 0.1 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 4.1%: Ըստ տնտեսության ճյուղերին տրամադրած վարկերի՝ չաշխատող վարկերի տեսակարար կշիռը բարձր է սպառողական վարկերում (տրամադրված վարկերի 10.3%-ը չաշխատող է) և արդյունաբերության ճյուղին տրամադրված վարկերում (տրված վարկերի 8.1 %-ը չաշխատող է): Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը ցածր է շինարարության ճյուղում (ճյուղին տրամադրված վարկերի 1.1%-ը չաշխատող է):

Պարտավորություններն ավելացել են 3.8%-ով (1.8 մլրդ դրամով) և կազմել 49.6 մլրդ դրամ: Պարտավորությունների աճը հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների 2.1 մլրդ դրամ աճի:

Տարեվերջին ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների մեծությունը կազմել է 4.0 մլրդ դրամ, բանկերից (գրեթե ամբողջությամբ՝ ոչ ռեզիդենտ) և այլ ֆինանսական կազմակերպություններից ձեռք բերած միջոցների մեծությունը՝ 31.9 մլրդ դրամ, իրավաբանական անձանցից և ֆիզիկական անձ մասնա-

կիցներից փոխառությունների մեծությունը՝ 11.5 մլրդ դրամ, մնացյալ այլ պարտավորությունների մեծությունը՝ 2.2 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալը տարվա ընթացքում ավելացել է 47.1%-ով (8.5 մլրդ դրամով): Կապիտալի աճը պայմանավորվել է ընթացիկ տարվա շահույթով և կանոնադրական հիմնադրամի աճով: Տարվա ընթացքում կանոնադրական հիմնադրամ են համալրել նոր լիցենզավորված չորս, ինչպես նաև արդեն գործող տասը վարկային կազմակերպություններ՝ ընդհանուր 5.9 մլրդ դրամի չափով: Վարկային կազմակերպությունների ընթացիկ տարվա զուտ շահույթը կազմել է 2.6 մլրդ դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 3.7%, իսկ ըստ կապիտալի՝ 11.8%: Տարեվերջին կապիտալը կազմել է 26.2 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 9.4%-ը (տարեսկզբին՝ 7.6%):

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ տարածքում գործող ապահովագրական ընկերություններ

31.12.2009 թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների թիվը կազմել է 12, իսկ մասնաճյուղերի թիվը՝ 9[16]: Ընդ որում՝ բոլոր ապահովագրական ընկերությունները զբաղվում են ոչ կյանքի ապահովագրության իրականացմամբ:

Կենտրոնացվածությունը ՀՀ ապահովագրական համակարգում

Ապահովագրական համակարգը բնութագրող կարևորագույն ցուցանիշների՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը վերջին տարիներին ունի նվազման միտում.

Աղյուսակ 5. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը

Ցուցանիշներ	31.12.2007	31.12.2008	31.12.2009
Ակտիվներ	0.13	0.10	0.09
Պարտավորություններ	0.19	0.14	0.12
Կապիտալ	0.11	0.10	0.09
Ապահովագրական գումարներ	0.33	0.26	0.28
Ապահովագրավճարներ	0.18	0.16	0.13

Ապահովագրական ընկերությունների միջև եղած բևեռացվածությունը հաշվետու տարվա վերջի դրությամբ ավելի փոքր է եղել, քան 2008 թվականի վերջին: Ընդ որում՝ կենտրոնացվածության մակարդակը նվազել է գրեթե բոլոր ցուցանիշների գծով: Բացառություն է կազմում ապահովագրական գումարների գծով կենտրոնացվածության մակարդակը խոշորագույն 2 ապահովագրական ընկերությունների համար:

Աղյուսակ 6. Ապահովագրական համակարգի կենտրոնացվածության մակարդակը (%)

Ցուցանիշներ	31.12.2007	31.12.2008	31.12.2009
Ակտիվներ			
ԿԳ 2 (խոշորագույն **երկու** ապահովագրական ընկերությունների ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր համակարգի ակտիվներում)	36	28	24
ԿԳ 5 (խոշորագույն **հինգ** ապահովագրական ընկերությունների ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր համակարգի ակտիվներում)	68	57	55


[16] *Մասնաճյուղեր ունեն «Գրիար-Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ն, «Նաիրի Ինշուրանս» և «Ռասկո» ապահովագրական ՍՊԸ-ները:*

Պարտավորություններ			
ԿԳ 2	50	40	34
ԿԳ 5	84	78	71
Կապիտալ			
ԿԳ 2	28	27	24
ԿԳ 5	62	55	52
Ապահովագրական գումարներ			
ԿԳ 2	79	65	70
ԿԳ 5	96	95	89
Ապահովագրավճարներ			
ԿԳ 2	49	44	41
ԿԳ 5	83	82	75

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԻՏԱԼ

2009 թվականին ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 65.2%-ով՝ կազմելով 12.3 մլրդ դրամ: Ընդ որում՝ ընդհանուր կապիտալի աճը հիմնականում պայմանավորվել է կանոնադրական կապիտալի 65.3% աճով: Կանոնադրական կապիտալի նման աճն իր հերթին պայմանավորվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվով, համաձայն որի ոչ կյանքի ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիա ունեցող տեղական ապահովագրական ընկերությունները պարտավոր էին իրենց կապիտալը համալրել մինչև 2010 թվականի հունվարի 1-ը՝ ապահովելով 1 մլրդ դրամ կապիտալ:

Գծապատկեր 20. Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալի կառուցվածքը




1. Կանոնադրական կապիտալ, 2. Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ, 3. Ընդհանուր կապիտալի այլ տարրեր

Հարկ է նշել, որ ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթը 2009 թվականի վերջի դրությամբ կազմել է 794.4 մլն դրամ, ինչը 37.1%-ով գերազանցում է 2008 թվականի համապատասխան ցուցանիշը (31.12.2008 թվականի դրությամբ՝ 579.3 մլն դրամ):

Ապահովագրական ընկերությունների վճարունակությունը

Ապահովագրական ընկերությունների վճարունակության պահանջվող սահմանաչափի նորմատիվի միջինը կազմում է նորմատիվային ընդհանուր կապիտալի 12%-ը: Որպեսզի ապահովագրական ընկերությունները չխախտեն վճարունակության պահանջվող սահմանաչափի նորմատիվը, վերջինս չպետք է գերազանցի կապիտալի մեծությունը: Սակայն, ինչպես երևում է վերը շարադրվածից, ապահովագրական ընկերություններին տրված լինելով մոտ 8 անգամ ավել վճարունակության սահմանաչափի մեծություն ունենալու հնարավորություն, չեն օգտագործում այն: Մյուս կողմից՝ վճարունակության սահմանաչափի նշված մակարդակը վկայում է համակարգի հուսալիության մասին:


Գծապատկեր 21. Վճարունակության պահանջվող սահմանաչափի հարաբերությունն ընդհանուր կապիտալին՝ ըստ ապահովագրական ընկերությունների (2009 թվական)



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐ


Ապահովագրական ընկերությունների ակտիվները 2009 թվականի ընթացքում ավելացել են 45.4%-ով և 31.12.2009 թվականի դրությամբ կազմել 17.0 մլրդ դրամ:

Գծապատկեր 22. Ապահովագրական ընկերությունների ակտիվները



Տարեվերջի դրությամբ ապահովագրական համակարգի ակտիվների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել ավանդները բանկերում (61.0%), բանկային հաշիվները (10.5%), ապահովադիրներից ստացվելիք գումարներն ուղղակի ապահովագրության գծով (10.3%) և պետական արժեթղթերը (ներառյալ՝ ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերը) (4.8%): Հարկ է նշել, որ ավանդների 83.6%-ը բաժին է ընկնում ռեզիդենտ բանկերում ներդրված ընթացիկ ավանդներին, իսկ 15.5%-ը՝ ռեզիդենտ բանկերում ներդրված ոչ ընթացիկ ավանդներին:

Գծապատկեր 23. Ապահովագրական համակարգի ակտիվների կառուցվածքը




1. Ավանդներ բանկերում, 2. Բանկային հաշիվներ, 3. Ապահովադիրներից ստացվելիք գումարներ ուղղակի ապահովագրության գծով, 4. Պետական արժեթղթեր, 5. Հիմնական միջոցներ, 6. Ոչ պետական արժեթղթեր, 7. Կանխիկ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, 8. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ, 9. Հատուցումների գծով պահանջներ վերաապահովագրողների նկատմամբ, 10. Այլ ակտիվներ

Ինչպես երևում է գծապատկերից, ապահովագրական համակարգի ակտիվները հիմնականում տեղաբաշխված են բարձր իրացվելի ակտիվներում, ինչը վկայում է այն մասին, որ ապահովագրական ընկերություններն իրացվելիության խնդիր չունեն: Դրա վկայությունն է նաև այն, որ ապահովագրական ընկերությունների կողմից 31.12.2009 թվականի դրությամբ իրացվելիության նորմատիվի խախտում չի արձանագրվել:


ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Ապահովագրական ընկերությունների պարտավորությունները 2009 թվականի ընթացքում ավելացել են 10.5%-ով՝ տարեվերջին կազմելով 4.7 մլրդ դրամ: Պարտավորությունների աճը մեծ մասամբ պայմանավորվել է ապահովագրական պահուստների 26.5% աճով:

Գծապատկեր 24. Ապահովագրական ընկերությունների պարտավորությունները



Գծապատկեր 25. Ապահովագրական համակարգի պարտավորությունների կառուցվածքը





1. Ուղղակի ապահովագրության գծով վճարվելիք հատուցումներ, 2. Վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ, 3. Ապահովագրական պահուստներ, 4. Այլ պարտավորություններ

Պարտավորությունների կառուցվածքում զգալի փոփոխություններ տեղի չեն ունեցել: Հաշվետու տարվա վերջի դրությամբ պարտավորությունների 92.6%-ը բաժին է ընկել ապահովագրական պահուստներին (58.2%) և վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներին (33.8%):


ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Չնայած հաշվետու տարվա ընթացքում ֆինանսատնտեսական ճգնաժամի խորացող ազդեցությանը, մասնավորապես՝ բանկերի կողմից վարվող վարկային զգուշավոր քաղաքականությանը, ինչպես նաև ընդհանուր տնտեսական ակտիվության նվազմանը, ապահովագրական ընկերությունների 2009 թվականի շահութաբերության մակարդակը նախորդ տարվա համեմատ աճել է:

Ապահովագրական ընկերությունների 2009 թ. զուտ շահույթը կազմել է 915.5 մլն դրամ, ինչը 31%-ով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից: Հարկ է նշել, որ ինը ապահովագրական ընկերություններ աշխատել են շահույթով, երեքը՝ վնասով, ընդ որում՝ շահույթով աշխատած ապահովագրական ընկերությունների հաշվետու տարվա զուտ շահույթը կազմել է 1.8 մլրդ դրամ:

2009 թվականին ապահովագրական ընկերությունների շահութաբերությունն ըստ կապիտալի (զուտ շահույթի/վնասի հարաբերություն ընդհանուր կապիտալի միջին մեծությանը[17]) նախորդ տարվա համեմատ աճել է 0.4 տոկոսային կետով՝ կազմելով 10.1%, իսկ շահութաբերությունն ըստ ակտիվների (զուտ շահույթի/վնասի հարաբերություն ակտիվների միջին մեծությանը[18]) նախորդ տարվա համեմատ աճել է 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 6.8%:

Գծապատկեր 26. 2009 թվականի շահութաբերության ցուցանիշները



[17] *Ընդհանուր կապիտալի միջին մեծությունը հաշվարկելիս կապիտալը միջինացվում է տարեսկզբից՝ օրական կտրվածքով:*
[18] *Ակտիվների միջին մեծությունը հաշվարկելիս ակտիվների մեծությունը միջինացվում է տարեսկզբից՝ ամսական կտրվածքով:*


2009 թվականի ընթացքում ապահովագրական ընկերությունների կողմից հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը կազմել է 8.1 մլրդ դրամ (2008 թվականին՝ 7.8 մլրդ դրամ):

Հաշվետու տարվա ընթացքում հաշվեգրված ապահովագրավճարների 85.5%-ը բաժին է ընկել հրդեհից և բնական աղետներից գույքի (19.9%), ցամաքային տրանսպորտի (18.2%), օդանավերի (12.7%), առողջության (10.2%), օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության (8.2%), երաշխիքի տրամադրման (5.8%), փոխադրվող գույքի (բեռների) (5.6%) և ֆինանսական վնասների (5.0%) ապահովագրության գծով հաշվեգրված ապահովագրավճարներին: Հարկ է նշել, որ 2009 թվականի ընթացքում ցամաքային տրանսպորտի, բեռների, ինչպես նաև օդանավերի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության գծով հաշվեգրված ապահովագրավճարների ծավալները համապատասխանաբար 34, 18 և 7%-ով փոքր են եղել 2008 թվականի նույն ցուցանիշներից: Այս նվազումը հիմնականում պայմանավորվել է ապահովագրական ընկերությունների կողմից ավտովարկավորման ծավալների նվազման հետևանքով ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության գծով ապահովագրավճարների ծավալների՝ նախորդ տարվա համեմատ ավելի փոքր լինելով, ինչպես նաև տնտեսական ակտիվության նվազման հետևանքով բեռնափոխադրումների ծավալների կրճատմամբ և որպես հետևանք՝ բեռների ապահովագրության ծավալների նվազմամբ:

2009 թվականի ընթացքում ապահովագրական ընկերությունների կողմից հաշվեգրված ապահովագրական հատուցումների մեծությունը կազմել է 1.9 մլրդ դրամ (2008 թվականին՝ 1.4 մլրդ դրամ):

Հաշվետու տարվա ընթացքում հաշվեգրված ապահովագրական հատուցումների 85.9%-ը բաժին է ընկել ցամաքային տրանսպորտի (44.9%), առողջության (22.4%) և ֆինանսական վնասների (18.5%) ապահովագրության գծով հաշվեգրված ապահովագրական հատուցումներին: Հարկ է նշել, որ 2009 թվականի ընթացքում առողջության ապահովագրության գծով հաշվեգրված ապահովագրական հատուցումների ծավալը 38%-ով գերազանցել է 2008 թվականի համապատասխան ցուցանիշը:

Գծապատկեր 27. 2009 թվականի ընթացքում հաշվեգրված ապահովագրավճարները և ապահովագրական հատուցումները՝ ըստ ապահովագրության դասերի



1. Հրդեհից և բնական աղետներից գույքի ապահովագրություն, 2. Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն, 3. Օդանավերի ապահովագրություն, 4. Առողջության ապահովագրություն, 5. Օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն, 6. Երաշխիքի տրամադրման ապահովագրություն, 7. Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն, 8. Ֆինանսական վնասների ապահովագրություն, 9. Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն, 10. Այլ դասերի գծով ապահովագրություն

Ապահովագրական համակարգի վնասաբերության ցուցանիշի մեծությունը[19] նախորդ տարվա համեմատ ավելացել է 4 տոկոսային կետով՝ 2009թ. կազմելով 24.5%: Նման աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2008 թվականի համեմատ ապահովագրական ընկերությունների կողմից հաշվեգրված ապահովագրական հատուցումները հաշվետու տարում ավելացել են 38.2%-ով, իսկ հաշվեգրված ապահովագրավճարների և չվաստակած ապահովագրավճարների փոփոխության տարբերության մեծությունը՝ 18.5%-ով:


Ապահովագրական ընկերությունների զուտ տոկոսային եկամուտների մեծությունը 2009 թվականին կազմել է 699.5 մլն դրամ, ինչը 25.7%-ով ավելի է 2008 թվականի համապատասխան ցուցանիշից: Հարկ է նշել, որ հաշվետու տարվա տոկոսային եկամուտների 75.1%-ը (կամ 533.8 մլն դրամ) բաժին է ընկել բանկերում ներդրված ընթացիկ ավանդների և բանկերին տրամադրված ընթացիկ փոխառությունների գծով տոկոսային եկամուտներին:

Ապահովագրական ընկերությունների զուտ ոչ տոկոսային եկամուտների մեծությունը 2009 թվականի կտրվածքով կազմել է -1.1 մլրդ դրամ (2008 թվականին՝ -1.6 մլրդ դրամ): Հարկ է նշել, որ 2009 թվականի ոչ տոկոսային եկամուտների 97.3%-ը (կամ 1.0 մլրդ դրամ) բաժին է ընկնում արտարժույթի վերագնահատման արդյունքում զուտ եկամուտներին, իսկ ոչ տոկոսային ծախսերի 70.9%-ը (կամ 1.5 մլրդ դրամ)՝ ապահովագրական ընկերությունների կառավարչական և հասարակական կապերի գծով ծախսերին:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ

Հաշվետու տարվա վերջի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի քանակը կազմել է 50.6 հազար հատ, ինչը 999 հատով ավելի է 31.12.2008 թվականի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի քանակից:

Գծապատկեր 28 . 31.12.2009 թվականի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի կառուցվածքը




1. Ցամաքային տրանսպորտի, 2. Հրդեհից և բնական աղետներից գույքի ապահովագրություն, 3. Աջակցության ապահովագրություն, 4. Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն, 5. Դժբախտ պատահարներից ապահովագրություն, 6. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն, 7. Առողջության ապահովագրություն, 8. Երաշխիքի տրամադրման ապահովագրություն 9. Այլ դասերի գծով ապահովագրություն

[19] *Վնասաբերության ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանությունը վերանայվել է. վնասաբերության ցուցանիշը հաշվարկվել է որպես հաշվետու տարվա ընթացքում հաշվեգրված ապահովագրական հատուցումների հարաբերություն հաշվետու տարվա ընթացքում հաշվեգրված ապահովագրավճարների և չվաստակած ապահովագրավճարների փոփոխության տարբերությանը:*

Գործող ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրական գումարները 2009 թվականի վերջի դրությամբ կազմել են 3.39 տրլն դրամ, ինչը 43.8%-ով գերազանցում է 2008 թվականի ցուցանիշը: Նման աճը հիմնականում պայմանավորված է ապահովագրական ընդհանուր գումարներում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ հրդեհից և բնական աղետներից գույքի, ինչպես նաև օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության գծով ապահովագրական գումարների համապատասխանաբար 18.5% և 99.9% աճով:

Գծապատկեր 29 . 31.12.2009 թվականի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարների կառուցվածքը



1. Օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն, 2. Հրդեհից ու բնական աղետներից գույքի ապահովագրություն, 3. Օդանավերի ապահովագրություն, 4. Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն, 5. Աջակցության ապահովագրություն, 6. Ֆինանսական վնասների ապահովագրություն, 7. Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն, 8. Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն, 9. Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն, 10. Այլ դասերի գծով ապահովագրություն

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՆՁՆԱԾ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2009 թվականի վերջի դրությամբ վերաապահովագրական գումարների մեծությունը կազմել է 3.00 տրլն դրամ, որի բաժինն ապահովագրական ընկերությունների կողմից ստանձնած ռիսկերի մեջ կազմում է 88.5% (2008 թվականին՝ 2.08 տրլն դրամ կամ ապահովագրական ընկերությունների կողմից ստանձնած ռիսկերի 88.1%-ը):

Հարկ է նշել, որ ապահովագրական ընկերությունների ռիսկերի 99.9%-ը (նախորդ տարի՝ 99.0%) վերաապահովագրված է հուսալի վերաապահովագրողների մոտ, ինչը նվազագույնի է հասցնում վերջիններիս կողմից իրենց պարտավորությունների չկատարման ռիսկը:

2009 թվականի ընթացքում վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարների մեծությունը կազմել է 4.0 մլրդ դրամ կամ ապահովագրավճարների 49.8%-ը (2008 թվականին՝ 4.0 մլրդ դրամ կամ ապահովագրավճարների 51.1%-ը):

Ինչ վերաբերում է ապահովագրական հատուցումներին, ապա 2009 թվականի ընթացքում վերաապահովագրողներից ստացվող գումարների մեծությունն ապահովագրական հատուցումների գծով կազմել է 890.6 մլն դրամ կամ հաշվետու տարվա ընթացքում հաշվեգրված ապահովագրական հատուցումների 46.9%-ը (2008 թվականին՝ 554.0 մլրդ դրամ կամ ապահովագրական հատուցումների 40.3%):

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

31.12.2009 թվականի դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ են մատուցել 22 ՀՀ առևտրային բանկեր և 8 ներդրումային ընկերություններ, ընդ որում, բոլոր ութ ընկերությունները կարող են իր կամ հաճախորդի անունից ու հաճախորդի հաշվին և իր անունից ու իր հաշվին արժեթղթերով գործարքներ իրականացնել, հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականներ ընդունել և հաղորդել: Ներդրումային ընկերություններից հինգը կարող են նաև արժեթղթերով ներդրումների հետ կապված խորհրդատվություն տրամադրել, վեցը՝ իրականացնել արժեթղթերի տեղաբաշխման գործունեություն և երեքը՝ արժեթղթերի փաթեթի կառավարում:

Թեև տարվա ընթացքում ներդրումային ընկերությունների կենտրոնացվածության մակարդակը ցուցաբերել է փոքր-ինչ նվազման միտում, այնուամենայնիվ, ցուցանիշների՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցները տատանվում են 0.17-ից 0.25-ի միջակայքում՝ վկայելով համակարգի համեմատաբար կենտրոնացված լինելու մասին:

Աղյուսակ 5. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցները

Ցուցանիշներ	31.12.08	31.12.09
Ընդհանուր ակտիվներ	0.17	0.17
Ընդհանուր պարտավորություններ	0.20	0.18
Ընդհանուր կապիտալ	0.26	0.25

Ներդրումային ընկերությունների ակտիվները նախորդ տարվա համեմատ ավելացել են 102%-ով՝ կազմելով 15.6 մլրդ դրամ, իսկ ընդհանուր կապիտալն ավելացել է 8%-ով՝ կազմելով 2.9 մլրդ դրամ: 2009 թվականին ներդրումային ընկերությունների ընդհանուր շահույթը կազմել է 202 մլն դրամ, ընդ որում՝ շահույթ են ապահովել ընկերություններից 6-ը, իսկ 2-ը տարին ավարտել են վնասով:


Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված գործառնությունների ընդհանուր ծավալը (ներառյալ ռեպո գործառնությունները, առանց ՀՀ ԿԲ հետ գործառնությունների) ավելացել է 41%-ով և կազմել 1 տրլն 146 մլրդ դրամ[20]:

Արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների մեջ շարունակում են գերակշռել պետական արժեթղթերով իրականացվող գործառնությունները. պետական արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները նախորդ տարվա համեմատ ավելացել են 141%-ով՝ կազմելով 294.8 մլրդ դրամ կամ արժեթղթերի շուկայում առուվաճառքի գործառնությունների ընդհանուր ծավալի 87.6%-ը:

2009 թվականին մոտ 3.4 անգամ ավելացել է կորպորատիվ պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունների ծավալը՝ կազմելով 25.3 մլրդ դրամ կամ ընդհանուր շրջանառության 7.5%-ը:


[20] *Հաշվետվությունների ճշգրտման հետևանքով 2008թ. տվյալները փոփոխվել են:*

Գծապատկեր 30. Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերով գործառնությունների ծավալները (առանց ՀՀ ԿԲ հետ գործառնությունների)



Բաժնետոմսերով իրականացված գործառնությունների ծավալը ավելացել է 2.9%-ով՝ կազմելով 16.2 մլրդ դրամ կամ արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ընդհանուր ծավալի 4.8%-ը:

Գծապատկեր 31. 2009 թվականին ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի և ռեպո գործառնությունները (առանց ՀՀ ԿԲ հետ գործառնությունների)




ՀՀ արժեթղթերի շուկայում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը (առանց ՀՀ ԿԲ հետ իրականացված գործառնությունների) նախորդ տարվա համեմատ ավելացել է 21%-ով՝ կազմելով 809.6 մլրդ դրամ կամ արժեթղթերի շուկայի ընդհանուր շրջանառության 70.6%-ը:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի ընդհանուր գործառնություններում արտաբորսայական գործառնությունների տեսակարար կշիռը հաշվետու տարում նվազել է 3.1 տոկոսային կետով՝ կազմելով 91.1%:

2009 թվականին կարգավորվող շուկայում[21] արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ծավալը ավելացել է մոտ 3.6 անգամ՝ կազմելով 15.0 մլրդ դրամ: Ընդ որում՝ կարգավորվող շուկայում արժեթղթերի առքուվաճառքի գործառնությունների մեջ գերակշռել են կորպորատիվ պարտատոմսերով գործառնությունները՝ կազմելով կարգավորվող շուկայի առուվաճառքի գործառնությունների 70.4%-ը: Պետական արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները կազմել են ընդհանուր շրջանառության 28.9%-ը, իսկ բաժնային արժեթղթերով գործառնությունները՝ 0.7%:

Գծապատկեր 32. Կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների կառուցվածքը



31.12.2009թ. դրությամբ, արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում, ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից ներգրավված միջոցների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 22%-ով և կազմել է 1.9 մլրդ դրամ:

31.12.2009թ. դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողների թիվը կազմել է 1527 ընկերություն, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը՝ 127 708:

2009 թվականին 2 ընկերության կողմից տեղի են ունեցել կորպորատիվ պարտքային արժեթղթերի թողարկումներ՝ 600 մլն դրամ ընդհանուր ծավալով:

Տարեվերջին ՀՀ արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված են եղել 19 հաշվետու թողարկողների արժեթղթեր, ընդ որում, հաշվետու թողարկող ընկերություններից 6-ը բանկ են: Հաշվետու թողարկողներից 11-ը թողարկել են բաժնետոմսեր, իսկ 9-ը՝ պարտատոմսեր: Թողարկողներից 1-ը հաշվետու է ինչպես բաժնետոմսերի, այնպես էլ՝ պարտատոմսերի գծով: 31.12.2009 թվականի դրությամբ թողարկված պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմել է 5.6 մլրդ դրամ:

[21] *31.12.2009թ. դրությամբ ՀՀ-ում գրանցված և լիցենզավորված միակ ֆոնդային բորսան «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս Արմենիա» ԲԲԸ-ն է:*

ԳՐԱՎԱՏՆԵՐ

31.12.2009 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 103 գրավատներ (առանց մասնաճյուղերի): Հաշվետու տարում արձանագրվել է գրավատների ընդհանուր ներգրաված միջոցների 36% և գրավատների կողմից տրամադրված վարկերի 31% աճ: Տարեվերջին գրավատների ընդհանուր ներգրաված միջոցների մեծությունը կազմել է 3.3 մլրդ դրամ, գրավատների կողմից տրամադրված վարկերի ընդհանուր մեծությունը՝ 5.1 մլրդ դրամ:

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐ, ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐՆԵՐ

31.12.2009 թվականի դրությամբ ՀՀ տարածքում արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա են ունեցել 302 փոխանակման կետեր (առանց մասնաճյուղերի՝ 246): Տարվա ընթացքում ԱՄՆ դոլարի առքի և վաճառքի ծավալները կազմել են համապատասխանաբար 420.1 մլն ԱՄՆ դոլար և 415.2 մլն ԱՄՆ դոլար (2008 թվականին՝ 363.7 մլն ԱՄՆ դոլար և 358.1 մլն ԱՄՆ դոլար): Եվրոյի առքի և վաճառքի ծավալները կազմել են համապատասխանաբար 47.5 մլն եվրո և 46.4 մլն եվրո (2008 թվականին՝ 38.7 մլն եվրո և 37.9 մլն եվրո):

2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում արժութային դիլերի լիցենզիա ունեն 4 իրավաբանական անձինք: Տարվա ընթացքում ուժը կորցրած է ճանաչվել «Վեստ Անելիք Մարտունի» արժութային դիլերի լիցենզիան, և արժութային դիլերի լիցենզիա է ստացել «էյջ էյ Ֆինանս» ՍՊԸ-ն, «Մել Գրի Յունիոն» ՍՊԸ-ն և «Հայկ Ղուկասյան» ՍՊԸ-ն: «Պրոֆֆինանս» ՓԲԸ-ի, «Կապիտալ Ասեթ մենեջմենթ» ՍՊԸ-ի և «Տոնտոն» ՍՊԸ-ի արժութային դիլերի գործունեության լիցենզիաները ուժը կորցրած են ճանաչվել:

ՎճԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31.12.2009թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 10 վճարահաշվարկային կազմակերպություններ: Այդ թվում՝ 3 ընկերություն ունեն միայն դրամական փոխանցում իրականացնելու գործունեության լիցենզիա, 6 ընկերություն՝ դրամական փոխանցում իրականացնելու գործունեության լիցենզիա և վճարային գործիքներ ու վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնելու լիցենզիա, մեկ ընկերություն՝ միայն վճարային գործիքներ ու վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնելու լիցենզիա: Հաշվետու տարում դադարեցվել է դրամական փոխանցում իրականացնող 2 և կասեցվել 1 վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությունը և լիցենզավորվել է մեկ դրամական փոխանցում իրականացնող կազմակերպություն («Ի-դրամ» ՍՊԸ):

Հաշվետու ժամանակահատվածում վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 258.6 մլրդ դրամ:

Աղյուսակ 7. Վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների ծավալը

(մլն ՀՀ դրամ)

Մատուցված ծառայությունները ըստ տեսակների	2008	2009
Կոմունալ և այլ վճարումներ	98 289	108 162
Բյուջետային (հարկային) վճարումներ	5 379	7 435
Կենսաթոշակային և սոցիալական նպաստների վճարումներ	117 927	137 614
Փոխանցումներ արտասահման	387	695
Արտասահմանից ստացումներ	6 833	4 702
Ընդամենը	228 815	258 608

Արտասահմանից Հայաստանի Հանրապետություն ուղղված վճարումների իրականացումը կատարվում է ոչ միայն առևտրային բանկերի, այլ նաև դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով: 2009 թվականի ընթացքում այս կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության իրենց հաճախորդներին կատարել են 4.7 մլրդ դրամի վճարում (նախորդ տարվա համեմատ նվազել է 31%-ով): Այդ թվում՝ միջազգային դրամական փոխանցումների իրականացման համակարգերին անդամակցելու միջոցով ստացումները կազմել են 4 մլրդ դրամ, իսկ արտասահման փոխանցումների ծավալը կազմել է 0.7 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը միջազգային փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալում (ներառյալ առևտրային բանկերը) համապատասխանաբար կազմել է՝ արտասահման փոխանցումներում՝ 0.2%-ը, իսկ արտասահմանից ստացումներում՝ 0.8%:

Այս կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումներում, հաճախորդներին կատարված մեկ վճարման միջին ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 95 հազար դրամ (նախորդ տարվա համեմատ՝ նվազել է 50 հազար դրամով):

Վճարային գործիքների պրոցեսինգ, քլիրինգ և դրամական փոխանցում իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունները, ավտոմատ ինքնասպասարկման տերմինալների և գրանցված դրամարկղային կետերի միջոցով հավաքագրել են բնակչությանը մատուցված ծառայությունների դիմաց վարձավճարներ: Նշված վարձավճարների հավաքագրումը կատարվում է մոտ 23 կազմակերպությունների համար: 2009 թ. վերջի դրությամբ տեղադրված են 656 ինքնասպասարկման տերմինալներ, որոնց միջոցով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 14.4 մլրդ դրամի (4879357 հատ գործառնություններ) միջոցների հավաքագրում: Նախորդ տարվա համեմատությամբ, նշված ծավալն ավելացել է 90%-ով:

Բացի այդ, որոշ վճարահաշվարկային կազմակերպություններ պրոցեսինգային քլիրինգային ծառայություններ են մատուցում 8 առևտրային բանկերի: Այդ առևտրային բանկերը, համագործակցելով վճարահաշվարկային կազմակերպությունների հետ, իրականացրել են կոմունալ ծառայությունների դիմաց միջոց-

ների հավաքագրում՝ գրանցված 103 դրամարկղային կետերի միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից բացվել է 19 մասնաճյուղ, որտեղ միջոցների հավաքագրումը նույնպես կատարվում է դրամարկղային կետերի միջոցով: Ընդհանուր առմամբ՝ դրամարկղային կետերի միջոցով կատարվել է 456802 գործառնություն՝ 1.8 մլրդ դրամ ծավալով:

«Հայփոստ» ՓԲԸ միջոցով կոմունալ ծառայությունների դիմաց վճարումները կազմել են 92 մլրդ դրամ:

«ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը, որպես «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի օպերատոր, ապահովում է «ԱրՔա» քարտերով, ինչպես նաև «Visa» և «Master Card» միջազգային քարտային համակարգերի վճարային քարտերով կատարված գործառնությունների պրոցեսինգ: «ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը հաշվետու տարվա ընթացքում քարտերի սպասարկման սարքավորումների միջոցով ապահովել է 345 մլրդ դրամ ծավալի քարտային գործառնությունների իրականացում (2008 թվականի համեմատ ավելացել է 33.5%-ով), այդ թվում՝ օտարերկրյա բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացվել է 16 մլրդ դրամ ծավալի գործառնություն (նախորդ տարվա համեմատ ավելացել է 10%-ով), իսկ ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնությունների ծավալը «ԱրՔա» համակարգից դուրս գրանցված սպասարկման կետերի միջոցով (այդ թվում՝ նաև արտասահմանում) կազմել է 30 մլրդ դրամ (նախորդ տարվա համեմատ ավելացել է 11%-ով): Ինտերնետ միջավայրում կատարված գործառնությունների ծավալն ավելացել է 74%-ով և կազմել 4 մլրդ դրամ:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2009 թվականին Կենտրոնական բանկը վճարահաշվարկային համակարգի զարգացման խնդիրների շրջանակներում շարունակել է վճարային համակարգերի հսկման, արժեթղթերի շուկայի, ինչպես նաև անկանխիկ վճարումների զարգացման և իրավական դաշտի կարգավորման աշխատանքները:

Անկանխիկ վճարումների զարգացում

Վերջին ժամանակներս ՀՀ ֆինանսական շուկայում զարգանում է նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող ծառայությունների ներդրումը և մատուցումը, որը նպաստել է նոր ֆինանսական կազմակերպությունների առաջացմանը: Հաշվի առնելով ֆինանսական շուկայում տեղի ունեցող զարգացման միտումները՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել են մի շարք իրավական փաստաթղթեր՝ այդ կազմակերպությունների գործունեությունը կարգավորելու, ինչպես նաև ներդրվող նոր ծառայությունների զարգացումը խթանելու նպատակով:

Մասնավորապես՝ իրականացվել են «էլեկտրոնային փող թողարկելու թույլտվության տրամադրման, կասեցման և դադարեցման կարգն ու պայմանները, էլեկտրոնային փող թողարկողներին ներկայացվող պահանջները» և «էլեկտրոնային փողերի թողարկման և սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողերով գործարքների իրականացմանը ներկայացվող պահանջները» կանոնակարգերի նախագծերի մշակման աշխատանքներ, որտեղ սահմանվել են էլեկտրոնային փող թողարկող կազմակերպություններին ներկայացվող պահանջները, էլեկտրոնային փողերի թողարկման, սպասարկման, ինչպես նաև գործարքների իրականացմանը ներկայացվող պայմանները: Նշված իրավական փաստաթղթերով ֆինանսական շուկայի մասնակիցների համար հստակեցվում է էլեկտրոնային փողերով գործառնությունների իրականացումը կարգավորող իրավական դաշտը:

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել են նաև «մոբիլ-բանքինգ» և «ինտերնետ-բանքինգ» ծառայությունների մատուցման հիմնական սկզբունքները, սահմանվել են մասնակիցների միջև փոխհարաբերությունները, որոնք թույլ կտան խթանել այս ծառայությունների կիրառումը, և նախանշում են այս ոլորտի զարգացման ուղիները:

ՀՀ տարածքում իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում, կատարվել են կենսաթոշակների վճարումները բանկային հաշիվների միջոցով անկանխիկ եղանակով իրականացման աշխատանքներ: Այդ թվում՝ նախատեսվում է կենսաթոշակների վճարումները ապահովել վճարային քարտերի միջոցով: Համագործակցելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ՝ կատարվել են նաև համապատասխան օրենսդրական և իրավական փոփոխություններ:

Առևտրային բանկերի կողմից քարտային բնագավառի զարգացումը և մատուցվող ծառայությունների ընդլայնումը նույնպես անմիջականորեն նպաստում են ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների զարգացմանը: 2009 թ. ընթացքում իրականացվել են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի շահագործման տեխնիկածրագրային ապահովման վերազինման, ինչպես նաև մատուցվող ծառայությունների ընդլայնման աշխատանքներ: Մասնավորապես՝ իրականացվել է չիպային քարտերի թողարկման և սպասարկման հետ կապված աշխատանքներ, որը հնարավորություն է տալիս առևտրային բանկերին

թողարկել չիպային տեխնոլոգիայով գործող վճարային քարտեր և իրականացնել դրանց սպասարկումը համակարգում գրանցված սարքավորումներով: «ԱրՔա» համակարգում ներդրվել է կանխիկի մուտքագրման «Cash-in» ծառայությունը, որը հնարավորություն է տալիս քարտապաններին իրականացնելու հայկական դրամով միջոցների մուտքագրում քարտային հաշիվներին: Դիտարկելով քարտային գործառնությունների կտրուկ աճ (տե՛ս «Վճարային քարտեր» բաժինը), վճարային քարտերի սպասարկման հետ կապված տեխնիկական ռիսկը նվազեցնելու նպատակով սարքավորումների միացումը համակարգին իրականացվում է տարբեր եղանակներով (CBANet-ցանցի միջոցով, GPRS-կապով, օպտիկական կապուղիներով): Շարունակվել են նաև ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից շահագործվող սեփական պրոցեսինգային կենտրոնների և «ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնի համակցման աշխատանքները: Նշված գործընթացը ընդլայնում է վճարային քարտերի սպասարկման ենթակառուցվածքը, քարտապանների համար վճարային քարտերից օգտվելը դարձնում հարմարավետ:

Հաշվետու ժամանակահատվածում փոփոխություններ և լրացումներ են կատարվել վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերում, որի արդյունքում սահմանվել են վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից գյուղապետարաններում և կապի ծառայություն մատուցող օպերատորների տարածքում բացվող մասնաճյուղերին ներկայացվող պահանջներ: Իրականացված փոփոխությունները ուղղված են ՀՀ մարզերում բնակչության սպասարկումը ապահովող ենթակառուցվածքի զարգացմանը:

ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերի համաձայն՝ ՀՀ տարածքում գործող մի շարք առևտրային բանկերին և վճարահաշվարկային կազմակերպություններին Կենտրոնական բանկի կողմից տրամադրվել են տարբեր միջազգային վճարային համակարգերին անդամակցելու թույլտվություններ. այդ թվում՝ առևտրային բանկերին՝ 13, իսկ վճարահաշվարկային կազմակերպություններին՝ 4 թույլտվություն: 2009 թվականի ընթացքում առևտրային բանկերը թույլտվություն են ստացել անդամակցելու երկու նոր համակարգերի՝ INTEL EXPRESS և RIA MONEY TRANSFER, միաժամանակ դադարեցվել է PRIVAT MONEY TRANSFER համակարգի գործունեությունը ՀՀ տարածքում:

Արժեթղթերով հաշվարկների իրականացման կատարելագործում և զարգացում

Արժեթղթերի շուկայի զարգացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են «Երաշխիքային հիմնադրամի ստեղծման, տեղաբաշխման և օգտագործման կանոնների», «Առանց ակտիվների նախնական դեպոնացման կնքվող գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի կանոնակարգի», ինչպես նաև «Երաշխիքային հիմնադրամի մասնակցության վերաբերյալ պայմանագրի» նախագծերի մշակման աշխատանքներ, լրամշակվել են «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս Արմենիա» ԲԲԸ-ի «Առևտրի ընդհանուր կանոնները»: Վերջինիս արդյունքում նախատեսվում է «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս Արմենիա» ԲԲԸ-ի առևտրի հարթակներում ներդնել նաև գործառնությունների իրականացման և վերջնահաշվարկի ապահովման հետ կապված նոր ընթացակարգ, համաձայն որի՝ մասնակիցները հնարավորություն կունենան բորսայական գործառնություններին մասնակցել առանց միջոցների նախնական դեպոնացման: Նախատեսվող նորամուծությունների արդյունքում հնարավորություն կտրվի իրականացված գործառնությունների վերջնահաշվարկը ապահովել T+3 սկզբունքով:

ԿԲ համակարգերի զարգացում

ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության գործիքակազմի կիրառման ավտոմատացման անհրաժեշտությունից ելնելով՝ մշակվել են ՀՀ ԿԲ «Ռեպո/հակադարձ ռեպո գործարքների կնքման և կատարման» ավտոմատացված համակարգի գործունեության հիմնական սկզբունքները: Նշված համակարգի ներդրումը թույլ կտա Կենտրոնական բանկի և առևտրային բանկերի միջև ռեպո, հակադարձ ռեպո գործարքների կնքման, կատարման և մարման գործառնությունները իրականացնել ավտոմատ ռեժիմում, ըստ որի՝ ռեպո գործարքի կատարման դեպքում դրամական միջոցները անմիջականորեն հասանելի կլինեն առևտրային բանկին: Միաժամանակ, համակարգը թույլ կտա առևտրային բանկերին օրվա ընթացքում կարճաժամկետ իրացվելիության անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկի հետ կնքել միջօրյա ռեպո գործարք՝ առանց տոկոսադրույքի: Մինչև օրվա վերջ չմարված միջօրյա ռեպո գործարքները ավտոմատ կերպով համակարգը կվերածնակերպի մեկօրյա ռեպո գործարքների՝ սահմանված տոկոսադրույքով: Համակարգի մասնակիցները գործարքների կատարման և իրենց իրացվելիության կառավարման նպատակով հնարավորություն կունենան իրական ժամանակում տեղեկատվություն ստանալ ռեպո/հակադարձ ռեպո գործարքների կնքման, կատարման, մարման վերաբերյալ:

ՀՀ վճարահաշվարկային բնագավառի հիմնական ցուցանիշները

2009 թվականի ընթացքում վճարահաշվարկային բնագավառում դիտարկվել են տարաբնույթ միտումներ, որը պայմանավորվել էր շարունակվող համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությամբ: Տարբեր ուղղվածությամբ միտումների մասին փաստում են վճարահաշվարկային բնագավառը բնութագրող մի շարք ցուցանիշներ:

ՀՀ բանկային համակարգում բնակչության ընդգրկվածությունը անկանխիկ վճարումների զարգացման կարևոր նախապայմաններից է: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ, բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների քանակը ավելացել է 11.9%-ով և կազմել 1 մլն 135 հազար հաճախորդ, այդ թվում՝ ֆիզիկական անձանց քանակը կազմել է 1 մլն 76 հազար: Բանկային համակարգում հաճախորդների հաշիվների քանակը ավելացել է՝ կազմելով 1 մլն 542 հազար բանկային հաշիվ (այդ թվում՝ 1 մլն 235 հազար ընթացիկ հաշիվներ, 65 հազար ժամկետային հաշիվներ, 242 հազար վարկային հաշիվներ):


Տարվա ընթացքում ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 428 մլրդ դրամի 8848052 գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 31 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 5.5 մլրդ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 1.6 մլրդ դրամ, քարտից-քարտ փոխանցումներ՝ 4 մլրդ դրամ): Տարեվերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը կազմել է 579431, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 27.5%-ով (125074 քարտով): Ընդ որում՝ քարտերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը (այդ թվում՝ նաև ինտերնետ գործառնությունները) կազմել է քարտային գործառնությունների մոտ 7%-ը: Ընդհանուր առմամբ, քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը ավելացել է 19%-ով:

Ֆիզիկական անձանց ուղղված դրամական փոխանցումները, որոնք իրականացվել են առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով, 2008 թվականի համեմատ նվազել են 17%-ով և կազմել 584 մլրդ դրամ, իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալը նվազել է 1%-ով և կազմել 277 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների ծավալը կազմել 14655 մլրդ դրամ (քանակը՝ 6679525): Մեկ օրվա միջին անկանխիկ վճարումները ՀՆԱ-ում ավելացել են 0.2 տոկոսային կետով և կազմել 1.8%: Ընդ որում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 11658 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 2737927: ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը ավելացել է 28%-ով (2572 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 24%-ով (537656-ով):

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) կազմել է մոտ 45 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 10697: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը ավելացել է 10 մլրդ դրամով (քանակը՝ 2100-ով): Բորսայական գործառնությունների իրականացման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է 125 մլրդ դրամ (ավելացել է 2.7 անգամ):

Գծապատկեր 33. ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը (առանց բորսայական փոխանցումների)




Հաշվետու տարում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 33.7%-ը, քանակի՝ 48.9%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախաձեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է 11%-ով (401 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 20%-ով (224569-ով):

Էլեկտրոնային վճարումների համակարգ

31.12.2009 թվականի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 269, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ 44 բաժանմունքներով, 22 առևտրային բանկեր՝ 191 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը, Միջպետական բանկը (ք. Մոսկվա), «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս Արմենիա» ԲԲԸ ֆոնդային բորսան և հինգ ոչ բանկ դիլեր:

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 51.3%-ը և քանակի 94.7%-ը: Հաշվետու տարում էլեկտրոնային վճարումների ծավալն ավելացել է 23.3%-ով (1130 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 23%-ով (489176-ով): Բացի այդ, բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումները կազմել են 32188 մլրդ դրամ: Առևտրային բանկերի կողմից էլեկտրոնային վճարումների համակարգով (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) կատարված վճարումները կազմել են վերջիններիս փոխանցումների ծավալի մոտ 62%-ը (ավելացել են 381 մլրդ դրամով), իսկ քանակի՝ մոտ 99%-ը:


Գծապատկեր 34. Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները (առանց բորսայական փոխանցումների)



Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը ավելացել է 1911-ով՝ կազմելով 10133, իսկ ծավալը՝ 4.4 մլրդ դրամով՝ կազմելով 23.4 մլրդ դրամ: Բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված միջին օրական փոխանցումներն ավե-

լացել են 79 մլրդ դրամով և կազմել 125 մլրդ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների, 2008 թվականի համեմատ պահպանվել է նույն մակարդակում, որը կազմում է 2.3 մլն դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգով առևտրային բանկերի կողմից բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների միջին ծավալը կազմել է 1.6 մլրդ դրամ, որն ավելացել է 711 մլն դրամով:

Գծապատկեր 35. Էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված միջին օրական վճարումները



Համախառն բղթային վճարումների համակարգ

2009 թվականի ընթացքում առևտրային բանկերի կողմից բղթային եղանակով կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի 31.2%-ը և քանակի 0.1%-ը (2008 թվականի համեմատ ծավալը ավելացել է 1.9 անգամ, քանակը՝ 0.7 անգամ):

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով բղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 548 փոխանցում՝ 20 մլրդ դրամ ծավալով (2008թ. համեմատ փոխանցումների միջին օրական ծավալը ավելացել է 6.6 մլրդ ՀՀ դրամով), իսկ մեկ բղթային փոխանցման միջին ծավալը նվազել է մոտ 2 մլն դրամով և կազմել է 37 մլն դրամ: Նշված փոխանցումները հիմնականում պայմանավորված են ավանդային և ռեպո գործառնություններով, ինչպես նաև գանձապետական փոխանցումներով: Հաշվետու տարում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով առևտրային բանկերի միջև բղթային եղանակով իրականացվել է 38 մլրդ դրամ ծավալով 49 փոխանցում (ծավալը նվազել է 18%-ով):

Աղյուսակ 8. ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ ԿԲ վճարային համակարգերով

Ժամանակահատված	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով *		Բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումներ	
	էլեկտրոնային *		Թղթային							
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
2008										
Ընդամենը	4859976	2104892	3516978	89547	708809	5826	9085763	2200265	11880556	13782
տեսակարար կշիռը վճարումներում (%)	23.18	95.07	16.77	4.04	3.38	0.26	100	100		
2009										
I եռ.	989806	530280	1333397	31860	59875	704	2383078	562844	6 248 937	4 842
տեսակարար կշիռը վճարումներում (%)	41.54	94.21	55.95	5.66	2.51	0.13	100	100		
II եռ.	1260960	594690	1543120	31625	88900	924	2892981	627239	8 021 865	4 499
տեսակարար կշիռը վճարումներում (%)	43.59	94.81	53.34	5.04	3.07	0.15	100	100		
III եռ.	2 121 563	679 249	1 410 056	34 893	154 334	1 044	3 685 953	715 186	8 675 669	5 429
տեսակարար կշիռը վճարումներում (%)	57.56	94.98	38.25	4.88	4.19	0.15	100	100		
IV եռ.	1 617 979	789 849	927 797	41 912	150 323	891	2 696 098	832 652	9 242 227	5 689
տեսակարար կշիռը վճարումներում (%)	60.012	94.86	34.41	5.03	5.58	0.11	100	100		
Ընդամենը	5 990 307	2 594 068	5 214 370	140 290	453 432	3 563	11 658 110	2 737 921	32 188 698	20 459
տեսակարար կշիռը վճարումներում (%)	51.38	94.75	44.73	5.12	3.89	0.13	100	100		

** Առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների*

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ

31.12.2009 թվականի դրությամբ Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցում են ՀՀ տարածքում գործող 5 գործակալ և 17 դիլեր բանկեր, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան, «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս Արմենիա» ֆոնդային բորսան, մեկ ոչ բանկ դիլեր, ՀՀ ֆինանսների նախարարությունը (թողարկողի կարգավիճակով՝ պետական պարտատոմսերի հետ կապված), Գանձապետական պահառուն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով և թողարկողի կարգավիճակով՝ Կենտրոնական բանկի սեփական պարտատոմսերի հետ կապված):

Համակարգի կողմից պետական (գանձապետական) արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 1867 հանձնարարական՝ 174 մլրդ դրամ ծավալով, ինչը 2008 թվականի համեմատ ավելացել է 65 մլրդ դրամով (ընդ որում՝ արժեթղթերի տեղաբաշխման հետ կապված վճարումներն ավելացել են 43 մլրդ դրամով, իսկ մարման հետ կապված վճարումները՝ 22 մլրդ դրամով): Առաջնային տեղաբաշխման

ժամանակ ձեռք բերված պետական պարտատոմսերի դիմաց բանկերի կողմից կատարվել է 107 մլրդ դրամի փոխանցում, իսկ պետական արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 67 մլրդ դրամի փոխանցում: Այդ թվում՝ «Գանձապետական պահառու» համակարգի միջոցով պետական արժեթղթերի դիմաց կատարվել է 3.2 մլրդ դրամի վճարում, որտեղ՝ 1.5 մլրդ դրամը կազմել են արժեթղթերի տեղաբաշխման և 1.7 մլրդ դրամը՝ արժեթղթերի մարման դիմաց վճարումները:

ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի կողմից ձևավորվել է 27 հանձնարարական՝ 8 մլրդ դրամ ծավալով: Նշված արժեթղթերի առաջնային տեղաբաշխման ժամանակ առևտրային բանկերի կողմից ձեռք բերված՝ Կենտրոնական բանկի սեփական պարտատոմսերի դիմաց կատարվել է 1.6 մլրդ դրամի փոխանցում, որը նվազել է 97%-ով (51 մլրդ դրամով): Կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի մարման դիմաց փոխանցումները նվազել են 92%-ով (82 մլրդ դրամով) և կատարվել է 6.5 մլրդ դրամի փոխանցում:

Կենտրոնացումը վճարային համակարգերում

31.12.2009 թվականի դրությամբ, 31.12.2008 թվականի համեմատ, կենտրոնացման մակարդակը ՀՀ կենտրոնական բանկի համախառն թղթային համակարգով վճարումների ծավալում ավելացել է (մոտ 3%-ով), որը պայմանավորված է առևտրային բանկերի կողմից հիմնականում էլեկտրոնային եղանակով վճարումների իրականացմամբ: Նախորդ ժամանակահատվածի համեմատ համախառն էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված վճարումների քանակում կենտրոնացման մակարդակը նվազել է 1%-ով: Դիտարկված բարձր մակարդակը (58%) պայմանավորված է առևտրային բանկերի կողմից հիմնականում հատային հաղորդագրությունների կիրառմամբ:

Վճարային քարտերի սպասարկման հետ կապված կենտրոնացման մակարդակը չնայած նվազել է (քանակը՝ 5%-ով, ծավալը՝ 3%-ով), այնուամենայնիվ, այն դեռևս բավական բարձր մակարդակ ունի (քանակը՝ 66%, ծավալը՝ 64%), որը բաժին է ընկնում 5 առևտրային բանկերի: Միաժամանակ, ՀՀ տարածքում գործող 6 այլ բանկեր ապահովել են վճարային քարտերի սպասարկման 25%-ը: Այսպիսով, 2009 թ. ընթացքում վճարային քարտերի սպասարկման գործընթացում որոշակի ակտիվություն են ցուցաբերել մի շարք առևտրային բանկեր, որոնք տեղադրել են վճարային քարտերի սպասարկման սարքավորումներ, ընդլայնել առևտրի/սպասարկման կետերի ցանկը:

Աղյուսակ 9. Կենտրոնացման մակարդակը վճարային համակարգերում (%)*

Անվանումը		2007		2008		2009	
		ծավալ	քանակ	ծավալ	քանակ	ծավալ	քանակ
Համախառն	էլեկտրոնային	31	54	31	59	27	58
	Թղթային	32	3	17	2	20	1
Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		49	42	49	42	52	41
Քարտային համակարգ	սպասարկումը ՀՀ-ում	71	68	69	67	64	66

** Ըստ ծավալի և ըստ քանակի առաջին 5 առևտրային բանկերի ցուցանիշներ:*

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

31.12.2009 թվականի դրությամբ հաճախորդներին վճարային քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ 19 առևտրային բանկեր անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Հաշվետու ժամանակահատվածում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 164 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և 2009 թվականի վերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 702: Այդ թվում՝ «ԱրՔա» վճարային քարտերի սպասարկումը իրականացվում է 603 ավտոմատ գանձման սարքավորումների միջոցով: Առևտրային բանկերի կողմից տեղադրվել են նաև 440 POS-տերմինալներ, որոնց ընդհանուր քանակը կազմել է 2720 POS-տերմինալ, այդ թվում՝ 438-ը տեղադրված են առևտրային բանկերի ստորաբաժանումներում: Տեղադրված իմպրինտերների ընդհանուր քանակը կազմել է 29:

Աղյուսակ 10. Թողարկված քարտերի սպասարկման ցուցանիշներ

Ցուցանիշ	Միջազգային չափանիշներ	2007	2008	2009
Թողարկված (շրջանառվող) քարտեր / ԱԳՄ	2600	970	845	825
Թողարկված (շրջանառվող) քարտեր / POS-տերմինալ	160	162	159	213

«ԱրՔա» քարտերի քանակը ավելացել է 40.9%-ով (81974 քարտով) և կազմել 282164: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակն ավելացել է 17%-ով (43100 քարտով), այդ թվում՝ «Visa»-ն՝ 21.5%-ով (35695 քարտով) և կազմել 201589, իսկ «Master Card»-ը՝ 27.9%-ով (13339 քարտով) և կազմել 61108: Միջազգային այլ քարտերի քանակը նվազել է 14.7%-ով (5934 քարտով):

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից տրամադրված (շրջանառության մեջ գտնվող) քարտերի կառուցվածքում «ԱրՔա» քարտերի տեսակարար կշիռը կազմել է 48.7%, «Visa» և «Master Card» միջազգային քարտային համակարգերի քարտերինը՝ համապատասխանաբար 34.8% և 10.5%, իսկ մնացած 5.9%-ը կազմել են միջազգային այլ քարտային համակարգերի քարտերը, որոնցում ընդգրկված են նաև «HSBC debit» քարտերը:

Աղյուսակ 11. ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող/սպասարկվող քարտերի տեսակները

Բանկի անվանումը	ArCa	MASTER CARD	VISA	AMEX	Այլ քարտեր
Հայբիզնեսբանկ	+	+			
Անելիք բանկ	+	+	+		
Արարատ բանկ	+	+			
Ամերիաբանկ	+	+	+		
ՎՏԲ-Հայաստան բանկ	+		+		
Հայէկոնոմբանկ	+	+			
Պրոմեթեյ բանկ	+	+			


ԲՏԱ բանկ	+	+			
Զարգացման հայկական բանկ	+	+			
Կոնվերսբանկ	+	+	+		+
Ինեկոբանկ	+	+			
Մելլաթ բանկ	+				
Բիբլոս բանկ Արմենիա	+	+			
էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստան	+	+	+		+
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ	+		+		
Արցախբանկ	+	+			
Կասկադ բանկ	+	+			
Առէկսիմբանկ-Գազպրոմբանկ		+	+	+	
Յունիբանկ	+	+	+		
Արդշինինվեստ բանկ	+	+	+		
ՊրոԿրեդիտ բանկ			+		

Քարտերով իրականացված գործառնությունների ընդհանուր ծավալը ավելացել է 31.2%-ով (101.8 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 34.3%-ով (2261918):

Շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերով իրականացվել է 4177660 գործառնություն՝ 173 մլրդ դրամ ծավալով: «ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը ավելացել է մոտ 47%-ով (55.8 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 43%-ով (1261768-ով): «ԱրՔա» քարտերով իրականացված գործառնությունները կազմել են քարտերով ընդհանուր գործառնությունների ծավալի 40%-ը և քանակի 47%-ը:

Քարտերով կատարվող գործառնությունների ծավալում էական մասնաբաժին ունեն նաև «Visa» միջազգային քարտերով գործառնությունները՝ 35.4%:

Գծապատկեր 36. ՀՀ բանկերի կողմից վճարային քարտերի տրամադրման դինամիկան



2009 թվականին «Visa» քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 152 մլրդ դրամ (2202572 գործառնություն), իսկ «Master Card»-ով իրականացվել է 62 մլրդ դրամ ծավալով 1158843 գործառնություն: «Visa» համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է 19.3%-ով (24.5 մլրդ դրամով), իսկ «Master Card»-ով կատարված գործառնությունների ծավալը ավելացել է 59%-ով (23 մլրդ դրամով):


Միջազգային այլ քարտերով իրականացվել է 908977 գործառնություն՝ 41 մլրդ դրամ ծավալով, որը 2008 թվականի համեմատ նվազել է 3.9%-ով (1.7 մլրդ դրամով):

Աղյուսակ 12. Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով կատարված գործարքները (2009 թ.)

Սարքեր	Գործարքներ			
	ծավալը (մլն դրամ)	քանակը	այդ թվում՝ «ԱրՔա» քարտերով	
			ծավալը (մլն դրամ)	քանակը
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	333 613	7 479 226	145 018	3 617 907
այդ թվում՝ անկանխիկ	3 023	52 882	117	21 349
POS – տերմինալների/իմպրինտերների միջոցով	89 049	1 135 424	26 929	465 865
այդ թվում՝ անկանխիկ	22 142	629 921	7 564	192 994
Ինտերնետ միջավայրում	5 585	233 386	1 498	93 888
Ընդամենը	30 750	916 189	9 178	308 231
այդ թվում՝ անկանխիկ	5 585	233 386	1 498	93 888

Տարվա ընթացքում քարտերով իրականացված միջին օրական գործառնությունների ծավալը ավելացել է 31%-ով և կազմել 1190 մլն դրամ, իսկ միջին օրական գործառնությունների քանակը ավելացել է 34%-ով՝ կազմելով 24578: Նշված քանակում 47%-ը բաժին է ընկել «ԱրՔա» քարտերին, իսկ 29%-ը՝ «Visa» միջազգային քարտերին:

Գծապատկեր 37. ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացված միջին օրական գործառնությունները 2006 - 2009 թթ., ինչպես նաև 2009 թ. եռամսյակների ընթացքում



ՀՀ տարածքում մեկ վճարային քարտով իրականացված ամսական կանխիկացման գործառնությունների ծավալը կազմել է մոտ 62 հազար դրամ, իսկ անկանխիկը՝ 5 հազար դրամ (քանակը՝ համապատասխանաբար կազմել է 1.2 և 0.1): Նշված ցուցանիշները նախորդ տարվա համեմատ պահպանվել են նույն մակարդակում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Ֆիզիկական անձանց փոխանցումները, առանց բանկային հաշվի բացման, իրականացվում են՝ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված՝ դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով (տե՛ս «Վճարահաշվարկային կազմակերպություններ» բաժինը):

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը հաճախորդների դրամական փոխանցումները արագ իրականացնելու նպատակով անդամակցում են, ընդհանուր առմամբ, 17 միջազգային համակարգերի (UNISTREAM, ANELIK, CONTACT, MIGOM, BISTRAYA POCHTA և այլն):

Հաշվետու տարվա ընթացքում այս համակարգերին մասնակից բանկերի միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 363 մլրդ դրամ (քանակը՝ 1539255), որը 8.7 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Արդյունքում՝ միջազգային փոխանցումների համակարգերով դրամական միջոցների զուտ ներհոսքը առևտրային բանկերի միջոցով կազմել է 321 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 20%-ով (80 մլրդ դրամով): Միաժամանակ, 2009 թվականին Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը նվազել է 17%-ով (77 մլրդ դրամով): Այս համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 236 հազ. դրամ՝ 2008 թ. համեմատ նվազելով 33 հազար դրամով:

Աղյուսակ 13. Դրամական փոխանցումների իրականացման համակարգերը

Համակարգեր	Մասնակից բանկերի քանակը	Մասնակից կազմակերպությունների քանակը	Մասնաբաժինը ստացումների ծավալում, %
UNISTREAM	1		49.76
ANELIK	9	1	8.36
CONTACT	8	2	8.86
MIGOM	12	2	8.30
BISTRAYA POCHTA	11	1	4.62
MONEY GRAM	16	1	5.18
LIDER	8	1	2.55
INTEREXPRESS	2	1	2.27
ZOLOTAYA CORONA	2	1	4.52
BLIZKO	4	2	1.70
BTF-Souz	1		0.93
FASTER	1	1	0.55

ALLUR	3		0.37
AVERS	2		0.04
XPRESS MONEY	1		0.02
INTEL EXPRESS	1		0.23
RIA MONEY TRANSFER	2	1	0.24
PRIVAT MONEY TRANSFER *	-	-	0.67
MONEY TUN	-	1	0.13
Travelex	-	1	0.24
STEFI	-	1	0.45
** 2009 թվականի հոկտեմբերից դադարեցվել է անդամակցությունը տվյալ համակարգում*			

Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով (SWIFT-ի, տելեքսի, ֆաքսի միջոցով) Հայաստանի Հանրապետություն կատարված ընդհանուր փոխանցումների ծավալը 2009 թվականի ընթացքում կազմել է՝ 2669 մլրդ դրամ (նախորդ տարվա համեմատ ավելացել է 373 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 174143 փոխանցում: Մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 15 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 5.5 մլն դրամով:

Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները նվազել են 38 մլրդ դրամով և կազմել են մոտ 217 մլրդ դրամ. մեկ վճարման միջինը ավելացել է 5 հազար դրամով և կազմել 2.33 մլն դրամ: Միաժամանակ, առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումները արտասահման նվազել են 69 մլրդ դրամով և կազմել 234 մլրդ դրամ: Արդյունքում՝ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումներում դիտարկվում է դրամական միջոցների զուտ արտահոսք՝ 18 մլրդ դրամ ծավալով, որը 2008 թվականի համեմատ նվազել է մոտ 64%-ով:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

2007 - 2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամը, ԱՄՆ և եվրոպական երկրների տնտեսությունների համար՝ Մեծ ճգնաժամի ժամանակաշրջանից ի վեր, թերևս ամենաազդեցիկն էր: Ճգնաժամի ազդեցությունները մեղմելու և տնտեսական ակտիվությունը վերականգնելու համար աշխարհի գրեթե բոլոր երկրները իրականացնում են լայնածավալ հակաճգնաժամային միջոցառումներ: Ընթացիկ ճգնաժամի հիմնապատճառների ուսումնասիրության արդյունքները առաջ են քաշել ֆինանսական վերահսկողության հիմնարար սկզբունքների և կիրառվող մոտեցումների վերանայման, արդիականացման խնդիրը:

Հայաստանի ֆինանսական համակարգի վրա ընթացիկ ճգնաժամի ազդեցությունը սկսել է դրսևորվել միայն 2008 թվականի վերջին եռամսյակից: ՀՀ կենտրոնական բանկը մի շարք միջոցառումներ է ձեռք առել Հայաստանի ֆինանսական համակարգի վրա ճգնաժամի ազդեցության մեղմման ուղղությամբ: Մասնավորապես՝ 2009թ. վերահսկողական հատուկ մոտեցումներ են ցուցաբերվել առանձին առևտրային բանկերի և ընդհանուր բանկային համակարգի ռիսկերը նվազեցնելու ու համակարգային կայունությունն ապահովելու ուղղությամբ:

2010 թվականին Կենտրոնական բանկը կիրականացնի բանկային, արժեթղթերի, ապահովագրության շուկաների ներդաշնակ զարգացմանն ուղղված բարեփոխումների շարունակական աշխատանքներ՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը, վճարահաշվարկային համակարգի կատարելագործումը և ֆինանսական համակարգի կայուն զարգացումը:

ՀՀ ֆինանսական համակարգի կարգավորման հեռանկարները

2010 թվականին Կենտրոնական բանկը կշարունակի մշակված հակաճգնաժամային միջոցառումների իրականացման աշխատանքները, ֆինանսական հաստատությունների ռիսկերի ուսումնասիրության, երկրի ընդհանուր ֆինանսական համակարգի զարգացումների, ռիսկերի և կայունության խոչընդոտների բացահայտման մանրամասն մոնիթորինգի գործընթացը: Առևտրային բանկերի ֆինանսական կայունության պահպանման նպատակով նախատեսվում է մշակել Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության առավել արդիական գործիքակազմ:

Սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների շրջանակներում 2010 թվականին համապատասխան փոփոխություններ և լրացումներ կկատարվեն օրենսդրական դաշտում, որոնք թույլ կտան ներդնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վերահսկվող բոլոր անձանց համար կիրառելի միասնական գործիք, ինչի հիման վրա հնարավոր կլինի համակարգում սահմանել գործարար պատշաճ վարվելակերպի պարտադիր կանոններ:

2009 թվականին սկսված՝ բանկերի ռիսկայնության գնահատման նոր համակարգի ներդրման աշխատանքները կավարտվեն 2010 թվականին, ինչը հնարավորություն կտա ձևավորելու բանկի ռիսկայնության ամփոփ գնահատական՝ հիմնվելով առանձին բիզնես գործընթացների ռիսկերի տարանջատման, գնահատման և կառավարման մակարդակի վերլուծության արդյունքների վրա: Այս համակարգը հնարավորություն

կտա հիմնական ուշադրությունը սևեռել բանկերի համար էական և/կամ նշանակալի համարվող գործունեության վրա, որոնք առավել ռիսկային դաշտում են, ինչպես նաև համալիր գնահատել բանկի ռիսկայնության համակարգը և ռիսկի յուրաքանչյուր տեսակի գծով ունենալ մանրամասն գնահատականներ:

2010 թվականին նախատեսվում է մշակել համախմբված վերահսկողությանն առնչվող իրավական ակտեր: Մասնավորապես՝ նախատեսվում է ձևավորել ֆինանսական խմբերի գործունեության կարգավորման դաշտը, ֆինանսական խմբում առկա ռիսկերը սահմանափակող նորմատիվային պահանջները և դրանց պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման սկզբունքները և միջոցները:

2010 թվականին նախատեսվում է ներդնել բանկերի, վարկային կազմակերպությունների և ներդրումային ընկերությունների միասնական հաշվային պլանը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Նմանապես, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանեցվելու է նաև ապահովագրական ընկերությունների հաշվային պլանը:

Նախատեսվում է մշակել բանկերում իրացվելիության ռիսկի և վարկային ռիսկի կառավարման ձեռնարկներ՝ բանկերում վերոնշյալ ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպելու, ինչպես նաև դրանց կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար: Ձեռնարկները կլինեն ոչ թե նորմատիվային, այլ խորհրդատվական բնույթի: Ձեռնարկները կօգնեն բանկերին մշակել համապատասխան մեխանիզմներ, կարգեր ու ընթացակարգեր՝ գնահատելու և կառավարելու բանկի իրացվելիության և վարկային ռիսկերը:

2010 թվականին նախատեսվում է արժեթղթավորման հիմնադրամների գործունեության կարգավորում և կանոնակարգում: Դա հնարավորություն կտա զարգացնելու ՀՀ-ում արժեթղթերի երկրորդային շուկան, ապահովելու բանկերի և վարկային կազմակերպությունների իրացվելիության խնդիրների լուծումը, նպաստելու բանկերի, վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական միջնորդության աստիճանի բարձրացմանը, մասնավորապես՝ զարգացնելու հիփոթեքային վարկավորումը, ինչպես նաև ֆինանսական շուկայում մեծացնելու «երկար փողերի» ծավալը:

ՀՀ կենտրոնական բանկը 2010 թվականին կշարունակի ՀՀ հիփոթեքային շուկայի զարգացմանն ուղղված աշխատանքները: Աշխատանքներ կիրականացվեն «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շրջանակներում նոր վարկային կազմակերպության ստեղծման և ծրագրի ֆինանսավորման ուղղությամբ: Արդյունքում ակնկալվում է, որ նոր վարկային կազմակերպության աջակցությամբ ՀՀ բանկերը և վարկային կազմակերպությունները, նախապես սահմանված չափորոշիչներով, երիտասարդ ընտանիքներին կտրամադրեն մատչելի պայմաններով հիփոթեքային վարկեր:

Տնտեսությունում երկարաժամկետ միջոցների ձևավորմանը, հետևաբար՝ կապիտալի շուկայի զարգացմանը, ֆինանսական համակարգի ընդլայնմանն ու ֆինանսական միջնորդության բարձրացմանը էապես կարող է նպաստել կենսաթոշակային համակարգի արդյունավետության բարձրացումը: ՀՀ կառավարության ձեռնարկած քայլերը, ուղղված կուտակային կենսաթոշակային համակարգի ստեղծմանը, ՀՀ ֆինանսական շուկայում ի հայտ կբերեն նոր մասնակիցների՝ ի դեմս ներդրումային (կենսաթոշակային) ֆոնդի կառավարիչների, կյանքի ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների և այլն:

Կենտրոնական բանկը, հանդես գալով որպես ՀՀ ֆինանսական շուկայի կարգավորող ու վերահսկող մարմին, կարևոր դեր ունի նշված բարեփոխումների իրականացման հարցում: Ազգային ժողովի կողմից համապատասխան օրենսդրական նախագծերի փաթեթը ընդունելուց հետո, Կենտրոնական բանկի առավել կարևոր գործառույթներից կլինեն.

- Կուտակային կենսաթոշակային համակարգում ներառված ֆինանսական հաստատություններին առնչվող իրավական ակտերի մշակումը (ներդրումային /կենսաթոշակային/ ֆոնդի կառավարիչների լիցենզավորման գործընթացների կանոնակարգում, Ֆինանսական շուկայի նոր մասնակիցների կողմից ներկայացվող հաշվետվությունների սահմանում և այլն):
- Ներդրումային (կենսաթոշակային) ֆոնդի կառավարիչների, կենսաթոշակային ակտիվների պահառուների և մասնակիցների ռեեստրը վարողի գործունեության վերահսկողությունը:

2010 թվականին ՀՀ կենտրոնական բանկը նախատեսում է շարունակել ՀՀ վճարահաշվարկային բնագավառը կարգավորող իրավական դաշտի բարեփոխումները: Մասնավորապես՝ 2010 թվականին Ազգային ժողովի կողմից ««Վճարահաշվարկային համակարգի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո նախատեսվում է համապատասխան իրավական ակտերում սահմանել դրույթներ վճարահաշվարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի, վերջինիս ապահովման կարգի և բաղադրիչների վերաբերյալ: Նշված փոփոխությունների հետ կապված՝ կիստակեցվեն վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման և վճարային համակարգերի անդամակցության ընթացակարգերը:

2010 թվականին կիրականացվեն նաև ՀՀ տարածքում գործող վճարահաշվարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի վերանայման աշխատանքներ, որի արդյունքում վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պետք է համապատասխանեցվեն միջազգային ստանդարտների պահանջներին: Կսահմանվեն վերջիններիս կողմից ներկայացվող հաշվետվությունների նոր ձևեր:

Հաշվի առնելով վճարահաշվարկային ոլորտի դինամիկ զարգացումները, այդ թվում՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող ծառայությունների (բջջային հեռախոսով, ինտերնետով) ընդլայնումը՝ ՀՀ կենտրոնական բանկը կշարունակի աշխատանքները հեռակառավարմամբ ծառայությունների մատուցման հետ կապված՝ ֆինանսական շուկայի մասնակիցներին ներկայացվող պահանջները հստակեցնելու և իրավական դաշտը սահմանելու ուղղությամբ:

ՀՀ ֆինանսական շուկայում մեծ հետաքրքրություն է ցուցաբերվում նաև «էլեկտրոնային փողերի» միջոցով մատուցվող ծառայությունների նկատմամբ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ դեռևս 2009 թվականից սկսվել են «էլեկտրոնային փողերի» իրավական դաշտի սահմանման աշխատանքներ: 2010 թվականի ընթացքում նախատեսվում է կարգավորել «էլեկտրոնային փող» թողարկող կազմակերպությունների գործունեությունը, սահմանել վերջիններիս գործառնությունների հիմնական շրջանակները, որոնք թույլ կտան խթանել «էլեկտրոնային փողերի» միջոցով մատուցվող ծառայությունների զարգացումը ՀՀ տարածքում:

2010 թվականի ընթացքում նախատեսվում է նաև մշակել «ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման քաղաքականությունը» փաստաթուղթը, որով կնախանշվեն վճարահաշվարկային բնագավառի զարգացման հիմնական ուղղությունները, դրանց իրագործման հետ կապված խնդիրները և լուծման մոտեցումները:

2010 թվականին Կենտրոնական բանկը կշարունակի ակտիվ համագործակցությունը «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս Արմենիա»-ի հետ՝ իրականացնելով կապիտալի շուկայի զարգացմանն ուղղված միջոցառումներ՝ ներդրումային հնարավորությունների ընդլայնման, շուկայի ենթակառուցվածքների կատարելագործման և մարքեթինգի և շուկայի տարբեր մասնակիցների իրազեկության բարձրացման ուղղություններով:

Շարունակվելու է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքից բխող իրավական ակտերի մշակումը և նախկինում մշակված իրավական ակտերի վերանայումը՝ ըստ անհրաժեշտության:

2010թ. ընթացքում Կենտրոնական բանկը նախատեսում է մշակել ներդրումային ֆոնդերի գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական ակտեր «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո: Նպատակը այնպիսի մեխանիզմների ձևավորումն է, որոնց միջոցով մանր ներդրողները հնարավորություն կստանան միավորելու իրենց միջոցները և իրականացնելու բազմազանեցված կոլեկտիվ ներդրումներ: Ներդրումային ֆոնդերի օրենսդրության ձևավորումը կստեղծի նաև անհրաժեշտ իրավական հիմքեր՝ վենչուրային հիմնադրամների, արժեթղթավորման հիմնադրամների, ինչպես նաև կենսաթոշակային ակտիվների կառավարիչների և պահառուների գործունեության համար:

2009 թ. ընթացքում շարունակվել են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ ՀՀ Ազգային ժողովի հետ քննարկման և լրամշակման աշխատանքները:

Ապահովագրական շուկայի արդյունավետ գործունեությունն ապահովող ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված աշխատանքների շրջանակում 2009 թվականի դեկտեմբերին Կենտրոնական բանկի կողմից մշակվել և ՀՀ Կառավարություն է ներկայացվել «ՀՀ կենտրոնական բանկի ավտոապահովագրության ռեգիստրի և ՀՀ ոստիկանության բազաների միջև տվյալների փոխանակման ապահովման հայեցակարգը»: Հայեցակարգի իրականացումը թույլ կտա ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) համակարգի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ տվյալներ փոխանակել ՀՀ կենտրոնական բանկի ապահովագրական ռեգիստրի և ՀՀ ԿԱ ոստիկանության՝ տրանսպորտային միջոցների, վարորդների և ճանապարհատրանսպորտային պատահարների մասին տվյալների բազաների միջև: Տեղեկատվության փոխանակումը հնարավորություն կընձեռի ապահովելու ռեգիստրում պահվող տվյալների ճշգրտությունն ու ամբողջականությունը, բարձրացնելու ԱՊՊԱ հետ կապված տեղեկատվական հոսքերի կազմակերպման արդյունավետությունը և պարզեցնելու ԱՊՊԱ գծով հատուցումների վճարման գործընթացները:

Ապահովագրական շուկային առնչվող ենթակառուցվածքների զարգացմանն է ուղղված նաև ԱՊՊԱ միջազգային փորձում լայնորեն կիրառվող ապահովագրավճարների զեղչերի և հավելավճարների կամ, այսպես կոչված՝ «Բոնուս-Մալուս» համակարգի ներդրման հայեցակարգի մշակումը, որը նախաձեռնվել է ԿԲ

կողմից 2009 թվականի վերջին և ավարտվելու է 2010 թվականին: Այս համակարգի նպատակն է ԱՊՊԱ ներդրումից հետո ապահովադիրների ռիսկայնությունից կախված նրանցից գանձվող ապահովագրավճարների տարբերակումը՝ ապահովելու համար ապահովագրական ընկերությունների համար արդյունավետ ռիսկերի կառավարում և ապահովադիրների համար արդար գնագոյացում:

2009 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը նախաձեռնել է Հայաստանի Հանրապետությունում բժշկական ապահովագրության զարգացման հայեցակարգի մշակումը: Հայեցակարգի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում բժշկական ապահովագրության զարգացումն է, ինչը կնպաստի ամբողջ բնակչության սոցիալական ապահովվածության բարելավմանը, ինչպես նաև առողջապահության որակի և ոլորտի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: 2010 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը նախատեսում է ավարտել վերոնշյալ հայեցակարգի մշակման գործընթացը:

Բժշկական ապահովագրության զարգացման կարևոր նախապայմաններից է արդյունավետ և գործուն ենթակառուցվածքների ստեղծումը: Այդ նպատակով 2009 թվականին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը առողջապահության նախարարության հետ համատեղ մշակել է «Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման հայեցակարգը», որը հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից: Հայեցակարգի հիմնական նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր բնակչի վերաբերյալ լիարժեք բժշկական տեղեկատվություն՝ միասնական և ամբողջական ձևաչափով: Հավաքագրվող տեղեկատվությունն ապահովագրական ընկերություններին հնարավորություն կտա իրականացնել բժշկական ապահովագրության պայմանագրերի ապահովագրական սակագների և ապահովագրավճարների առավել ճշգրիտ հաշվարկներ: Նախատեսվում է, որ 2010 թվականի ընթացքում կստեղծվի հայեցակարգից բխող միջոցառումները իրականացնող մարմին:

ՀՀ ֆինանսական համակարգի վերահսկողության զարգացման հեռանկարները

Ֆինանսական համակարգի՝ ըստ ինստիտուտների (բանկեր, ապահովագրական ընկերություններ, արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձինք և այլն) վրա հիմնված վերահսկողությունից նոր վերահսկողական համակարգին (կանխարգելիչ և շուկայի արդարության ապահովմանն ու ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված) անցման համատեքստում 2010 թվականին շարունակվելու է սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացումը: Նշված միջոցառումների շրջանակներում 2010 թվականին կկարևորվեն ՀՀ բնակչության ֆինանսական գրագիտության և իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքները, մասնավորապես՝

- իրականացվելու են կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ լուսաբանման աշխատանքներ. կենսաթոշակի մասին մշակվելու է տեղեկատվական բրոշյուր,
- իրականացվելու են ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ծառայությունների լուսաբանման աշխատանքներ. նախատես-

վում է մշակել տեղեկատվական բրոշյուր և նկարահանել պարտադիր ապահովագրության մասին ուսուցողական ֆիլմ,

- նախատեսվում է իրականացնել դպրոցներում ֆինանսական կրթման ներդրմանն ուղղված աշխատանքներ՝ Կրթության և գիտության նախարարության և այլ շահագրգիռ անձանց համագործակցությամբ,
- կազմակերպվելու է «Տնտեսագիտություն» թեմայով խաղ - մրցույթ դպրոցականների շրջանում,
- կատարելագործվելու, զարգանալու և համալրվելու է ֆինանսական ոլորտի սպառողների համար ինտերնետային կայքը:

2009 թվականի ընթացքում մշակվել է Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի՝ վերահսկողների կողմից ստուգումների իրականացման ձեռնարկը, որի նպատակն է պատշաճ և համակարգված վերահսկողության իրականացումը ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի ուղղությամբ: Ձեռնարկը նախատեսվում է կիրառության մեջ դնել 2010 թվականին:

Ֆինանսական կայունության ապահովման համատեքստում, ընթացիկ վերահսկողական աշխատանքներին զուգընթաց, կիրականացվեն ֆինանսական հատվածի, մակրոտնտեսության բոլոր հատվածների (իրական, հարկաբյուջետային, արտաքին) առաջացող ռիսկերի մանրամասն ուսումնասիրություններ[22]: Հաշվի առնելով համաշխարհային տնտեսության, ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վերաբերյալ կանխատեսումները և ՀՀ 2010 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրով սահմանված խնդիրները, Կենտրոնական բանկի կողմից մշակվել են տարբեր հավանական ճգնաժամային իրավիճակներում ֆինանսական հաստատությունների ռիսկերը զսպելու միջոցառումների ծրագրեր: Նշված միջոցառումների ծրագրերը մշակվել են՝ ուսումնասիրելով հակաճգնաժամային քաղաքականությունների համաշխարհային փորձը, իրականացման արդյունավետությունը, և հաշվի առնելով ՀՀ ֆինանսական համակարգի զարգացման ու գործող կարգավորման դաշտի առանձնահատկությունները: Ճգնաժամային իրավիճակներում արագ կողմնորոշվելու, հմտություններ ձեռք բերելու նպատակով 2010 թվականին նախատեսվում է անցկացնել ճգնաժամային կառավարման մոդելավորման խաղեր, որոնք կօգնեն որոշումներ կայացնելու իրավասություններ ունեցող անձանց գործնականում դրսևորել ճգնաժամերի կառավարման հմտություններ, պատրաստ լինել արտակարգ իրավիճակներում արագ որոշումների կայացմանն ու արտակարգ միջոցառումների ձեռնարկմանը:

2010 թվականին կշարունակվեն համախմբված վերահսկողության գործընթացների կանոնակարգման աշխատանքները, որի նպատակը ֆինանսական խմբի կառուցվածքի վերլուծության, խմբի կապիտալի համարժեքության գնահատման, խմբային ռիսկերի ու խմբի ֆինանսական վիճակի վրա ներխմբային գործարքների ազդեցության բացահայտման ուղղությամբ վերահսկողների գործունեության ներքին կանոնակարգումն է:

---

[22] Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս «Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2009» պարբերականում:

2009 թվականին ԿԲ վերահսկողության վարչության կազմը համալրվել է ֆինանսական համակարգում մրցակցության վերլուծության և ապահովման խնդիրներով զբաղվող առանձին բաժնով, որի նպատակն է խթանել մրցակցային միջավայրի կայացումը, մշտական մոնիթորինգի ենթարկել ֆինանսական համակարգում մրցակցային իրավիճակը, և այս ոլորտում չարաշահումների դեպքում արագ արձագանքել: 2010 թվականին նախատեսվում է ընդլայնել և կատարելագործել այս ոլորտին առնչվող խնդիրների բացահայտման, կարգավորման և վերահսկողության մոտեցումները:

Վերահսկողության մոտեցումների կատարելագործման հետ կապված 2010 թ. նախատեսվում է մշակել «Վճարահաշվարկային կազմակերպությունների վերահսկողության» ձեռնարկը, որտեղ մանրամասն պետք է ներկայացվի վճարահաշվարկային կազմակերպություններում ստուգումների իրականացման և վերահսկողության իրականացման գործընթացը:

Շարունակվելու են հանդիպումները ԱՊՀ անդամ երկրների արժեթղթերի շուկան կարգավորող մարմինների ղեկավարների խորհրդի շրջանակներում: 2010 թվականին նախատեսվում է ՌԴ և ՀՀ, ինչպես նաև Ուկրաինայի և ՀՀ վերահսկողների միջև արժեթղթերի շուկայի կարգավորման ու վերահսկողության ոլորտներում փոխհամագործակցության համաձայնագրի ստորագրման աշխատանքներ իրականացնել: Կշարունակվեն «Խորհրդատվության, համագործակցության և տեղեկատվության փոխանակման վերաբերյալ» ԱՀՄԿ-ի (International Organization of Securities Commissions) բազմակողմ համաձայնության հուշագրին (Multilateral Memorandum of Understanding (MOU) concerning consultation and cooperation and the exchange of information) միանալու աշխատանքները: Այս հուշագրին միանալու դեպքում հնարավորություն կստեղծվի օտարերկրյա կարգավորողներից հարցման հիման վրա ստանալու արժեթղթերի շուկայի վերահսկողության համար անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև ցուցաբերելու փոխադարձ աջակցություն:

ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության գործընթացների կատարելագործման հետ կապված՝ հեռանկարային է համարվում կուտակային կենսաթոշակային բնագավառը վերահսկող մարմինների միջազգային կազմակերպությանն անդամակցությունը:

«Կուտակային կենսաթոշակների մասին» և «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքների ընդունման պարագայում ՀՀ կենտրոնական բանկը քայլեր կձեռնարկի IOPS-ին (International Organisation of Pension Supervisors) անդամակցության համար:

ՀՀ կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում և, մասնավորապես, վերը նշված երկու օրենքների ընդունումից հետո ֆինանսական շուկա մուտք գործած նոր մասնակիցների (ներդրումային ֆոնդի կառավարիչներ, ռեեստրավարներ, պահառուներ) նկատմամբ վերահսկողությունը կիրականացնի ՀՀ կենտրոնական բանկը, իսկ կենսաթոշակային ֆոնդեր կառավարող ներդրումային ֆոնդի կառավարիչների, կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի և կենսաթոշակային ակտիվների պահառուների նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի IOPS-ի սկզբունքներին համապատասխան:

ՀՀ-ում ներդրվելիք ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) համակարգի վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության

պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, կհիմնադրվի ԱՊՊԱ իրականացնող ընկերությունների բյուրո (այսուհետ՝ Բյուրո)։ Բյուրոն՝ որպես ինքնակարգավորվող կազմակերպություն, կստանձնի ԱՊՊԱ ոլորտում գործող ապահովագրական ընկերությունների վերահսկողության և կարգավորման մի շարք կարևորագույն գործառույթներ՝ այդպիսով նպաստելով տուժած անձանց շահերի պաշտպանությանը, ԱՊՊԱ համակարգի կայունության և զարգացման ապահովմանն ու իր անդամների գործունեության արդյունավետության բարձրացմանը։

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ կենտրոնական բանկը օրենքով վերապահված կարգավորման և վերահսկողության շրջանակներում իրականացնում է իր կարևորագույն խնդիրներից մեկը՝ ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության ապահովումը, վճարահաշվարկային համակարգի անխափան գործունեության ու զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության ու հետագա զարգացման համապատասխան պայմանների ապահովումը, ինչպես նաև ներդրողների և ֆինանսական ծառայությունների սպառողների շահերի պաշտպանությունը:

Ֆինանսական համակարգի վերահսկողության և կարգավորման կազմակերպումը Կենտրոնական բանկում

Կենտրոնական բանկում ֆինանսական համակարգի վերահսկողության ու կարգավորման գործառույթները իրականացվում են հիմնականում հետևյալ աստիճանակարգով (ներքևից վերև).

1. Կենտրոնական բանկի կառուցվածքային ստորաբաժանումներ,
2. Կենտրոնական բանկի մշտական գործող հանձնաժողովներ,
3. Կենտրոնական բանկի նախագահ,
4. Կենտրոնական բանկի խորհուրդ:

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ կենտրոնական բանկում կարող են ստեղծվել նաև աշխատանքային խմբեր:

1. Ֆինանսական վերահսկողություն և կարգավորում իրականացնող ստորաբաժանումների խնդիրներն ու գործառույթները

Ֆինանսական վերահսկողության և կարգավորման համար պատասխանատու և աջակցող ԿԲ հիմնական ստորաբաժանումներն են՝ Ֆինանսական վերահսկողության, Ֆինանսական համակարգի քաղաքականության և ֆինանսական կայունության, Ֆինանսական դիտարկումների կենտրոնը, Վիճակագրության, Իրավաբանական վարչությունները:

Ֆինանսական վերահսկողության վարչության հիմնական խնդիրներն են.

- ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների (բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և միջնորդների, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերի, արժեթղթերի շուկայում մասնագիտացված մասնակիցների, վճարահաշվարկային կազմակերպությունների, գրավատների, արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնող անձանց, արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ անձանց), իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև արժեթղթերի հրապարակային առաջարկություններով հանդես եկող անձանց և հաշվետու թողարկողների վերահսկողություն:
- Լուծարվող (ինքնալուծարվող) բանկերի, ապահովագրական ընկերությունների, վարկային կազմակերպությունների, արժեթղթերի շուկայի մասնակիցների, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վերահսկողություն:

- ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրողների, ներդրումային ծառայություններից օգտվող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն:
- Արժեթղթերի արժանահավատ գնագոյացման և արժեթղթերով գործարքների վճարահաշվարկային, ինչպես նաև արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի հաստատագրման և հաշվառման համակարգերի գործունեության ապահովում՝ համակարգում առկա ռիսկերի բացահայտման, գնահատման և կանխարգելման միջոցով:
- Արժեթղթերի շուկայի մասնակիցների և արժեթղթերի թողարկողների գործունեության թափանցիկության ապահովում:

Ֆինանսական համակարգի քաղաքականության և ֆինանսական կայունության վարչության հիմնական խնդիրներն են.

- Հետևել ՀՀ ֆինանսական համակարգի զարգացման միտումներին, ախտորոշել և գնահատել ֆինանսական կայունությանը սպառնացող առկա և հնարավոր ռիսկերն ու խնդիրները:
- Կատարելագործել և/կամ մշակել ու ներդնել ֆինանսական համակարգում ռիսկերի նվազեցման համար արդյունավետ վերահսկողության մեթոդաբանություն:
- Կատարելագործել և/կամ ձևավորել ֆինանսական կազմակերպությունների ռիսկերի նվազեցման ու կայուն գործունեության համար համարժեք կարգավորման դաշտ և վերջինիս կիրարկումն ապահովող համակարգված մեթոդաբանական բազա:
- Իրականացնել անկանխիկ վճարումների զարգացմանն ուղղված աշխատանքներ:
- Իրականացնել վճարային գործիքների/ծառայությունների կանոնակարգում, ինչպես նաև վճարահաշվարկային բնագավառի զարգացմանը խոչընդոտող խնդիրների կարգավորում:
- Ապահովել վճարահաշվարկային համակարգերի հուսալիությունը, կայունությունը և անընդհատությունը:
- Ապահովել ՀՀ-ում գործող վճարային համակարգերի հսկողությունը. ռիսկերի գնահատում և մոնիթորինգ, ռիսկերի կառավարմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև ՀՀ-ում վճարային համակարգերի ստեղծման և արտասահմանյան համակարգերում մասնակցության ռիսկայնության գնահատում:
- Կատարելագործել և/կամ ձևավորել ֆինանսական միջնորդության ընդլայնման, ֆինանսական համակարգի կայուն զարգացման համար նպաստավոր և միջազգային բանկային հանրության (նաև այլ ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների) կողմից ընդունված չափանիշներին համապատասխանող գործունեության ինստիտուցիոնալ տարրեր (հարաբերություններ, գործիքներ, մեթոդներ, մոդելներ, մոտեցումներ):
- Հետևել համաշխարհային ֆինանսական շուկայում ձևավորվող միտումներին ու զարգացումներին, նոր ֆինանսական տեխնոլոգիաներին և մշակել համապատասխան առաջարկներ ՀՀ ֆինանսական համակարգում դրանց հնարավոր ներդրման և կիրառման վերաբերյալ:
- Իրականացնել սպառողների շահերի պաշտպանության և շուկայի վարվելակերպի կանոնակարգման միջոցառումներ:

Ֆինանսական դիտարկումների կենտրոնի հիմնական խնդիրներն են.

- ՓԼ/ԱՖ (փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման) դեմ պայքարի նպատակով տեղեկությունների ստացումը հաշվետվություն տրամադրող անձանցից, պետական մարմիններից ու կազմակերպություններից, տեղեկությունների վերլուծությունը՝ ստացված հաշվետվությունների և այլ տեղեկությունների հիման վրա, ՓԼ/ԱՖ հիմնավոր կասկածների վերաբերյալ քրեական հետապնդում իրականացնող մարմիններին հաղորդումների ուղարկումը:

- ՓԼ/ԱՖ կանխարգելման նպատակով հաշվետվություն տրամադրող անձանց և իրավասու պետական մարմինների մոտ համապատասխան կարողությունների ձևավորմանը նպաստելը:
- ՓԼ/ԱՖ դեպքերի բացահայտման արդյունավետ քրեական հետապնդմանը և վերահսկողությանը օժանդակելու նպատակով համագործակցությունը քրեական հետապնդում իրականացնող, վերահսկող մարմինների և այլ իրավասու ներպետական հաստատությունների, օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների հետ՝ կնքելով երկկողմ համաձայնագրեր կամ առանց դրանց:
- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներգրավված միջազգային կառույցներում Հայաստանի Հանրապետությունը ներկայացնելը:
- ՓԼ/ԱՖ բացասական հետևանքների մասին հանրային իրազեկման իրականացումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բնագավառում գիտելիքների հետևողական խորացմանը նպաստելը:

Իրավաբանական վարչության հիմնական խնդիրներն են.

- Կենտրոնական բանկի կողմից ընդունվող նորմատիվ և անհատական իրավական ակտերի՝ ՀՀ օրենսդրության նորմերին համապատասխանության ապահովումը:
- ՀՀ տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերի, ներդրումային ընկերությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, գրավատների, արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնող անձանց, արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ անձանց լիցենզավորման, դրանց տարածքային ստորաբաժանումների գրանցման, ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման ու գրանցման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը:
- ՀՀ բանկային, արժութային, ապահովագրական, արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության, ինչպես նաև Կենտրոնական բանկի գործունեությանը առնչվող այլ օրենքների և իրավական ակտերի ստեղծմանն ու կատարելագործմանը օժանդակելը, Կենտրոնական բանկի ընդունած նորմատիվ իրավական ակտերի համակարգումը և դրանց կանոնակարգման վերաբերյալ առաջարկությունների մշակումը:
- Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների և կնքվող գործարքների՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության ապահովումը:
- Կենտրոնական բանկի շահերի պաշտպանությունը ՀՀ կամ այլ պետությունների դատարաններում:
- Կենտրոնական բանկի միջազգային կապերի իրավական ապահովումը:

Վիճակագրության վարչության հիմնական խնդիրներն են.

- Տնտեսական վիճակագրության հավաքագրում, մշակում և վիճակագրական վերլուծություն (հարթեցում, դասակարգում, կանխատեսում, տարբեր ինդեքսների հաշվարկ և այլն):
- Տնտեսական վիճակագրության արժանահավատության ապահովում վարչության իրավասության շրջանակներում:
- Հավաքագրված և մշակված վիճակագրության ներկայացում լայն հասարակությանը՝ Կենտրոնական բանկի վիճակագրական և այլ հրապարակումների տեսքով:

- Կենտրոնական բանկի ստորաբաժանումների, Կենտրոնական բանկից դուրս այլ կազմակերպությունների միջև (այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև արտասահմանյան երկրների) տեղեկատվության փոխանակման ապահովում և կանոնակարգում:
- Որոշակի երևույթների ուսումնասիրման համար վիճակագրական հարցումների իրականացում (անհրաժեշտության դեպքում՝ պարբերաբար):
- Վարկատուների կողմից Վարկային ռեգիստրին տրամադրվող տվյալների մուտքագրման, մշակման, օգտագործողներին տրամադրման և ստացվող տեղեկատվության արժանահավատության ապահովում, Վարկային ռեգիստրի զարգացում:

Վերոնշյալ վարչությունները իրենց առջև դրված հիմնական խնդիրներից ելնելով՝ իրականացնում են իրենց իսկ կանոնադրությամբ ամրագրված գործառույթները:

2. Կենտրոնական բանկի մշտական գործող հանձնաժողովներ

Ֆինանսական համակարգի վերահսկողության և կարգավորման գործառույթների իրականացմանը աջակցում են Կենտրոնական բանկում գործող մշտական հանձնաժողովներից երկուսը՝

- Կենտրոնական բանկի վարչությունը,
- Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը:

Կենտրոնական բանկի վարչություն

Կենտրոնական բանկի վարչությունը Կենտրոնական բանկի նախագահին առընթեր խորհրդակցական մարմին է: Վարչության հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են երկու շաբաթը մեկ անգամ:

Վարչության անդամներն են՝ ՀՀ ԿԲ նախագահը, ՀՀ ԿԲ նախագահի տեղակալը, ստորաբաժանումների ղեկավարները: Վարչության նիստերը վարում է Կենտրոնական բանկի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալը:

Վարչության նիստերը գումարվում են ոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ: Վարչության նիստերին կարող են մասնակցել Կենտրոնական բանկի խորհրդի անդամները: Վարչության անդամների կողմից խորհրդի նիստում քննարկվելիք հարցերը ներկայացվում են Կենտրոնական բանկի վարչություն:

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը խորհրդակցական մարմին է և ունի իր իրավասությունների սահմաններում եզրակացություններ տալու իրավունք:

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ: Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը քննարկում է.

- ✓ ֆինանսական կազմակերպությունների ստեղծմանը նախնական հավանություն տալու, գրանցելու և լիցենզավորելու հարցերը,

- ✓ ֆինանսական կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցմանը և դրանց գործունեության դադարեցմանը /այդ թվում ժամանակավոր/ համաձայնություն տալու հարցերը,
- ✓ ֆինանսական կազմակերպություններում նշանակալից և այլ մասնակցության ձեռքբերմանը նախնական համաձայնություն տալու հարցերը,
- ✓ ֆինանսական կազմակերպությունների կանոնադրություններում փոփոխությունների և լրացումների գրանցման հարցերը,
- ✓ ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների (բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների) որակավորման, մասնագիտական համապատասխանության ստուգման և գրանցման հետ կապված հարցերը,
- ✓ ֆինանսական կազմակերպությունների վերակազմակերպման և լուծարման հարցերը,
- ✓ ազդագրի և առևտրի ազդագրի գրանցման հարցերը,
- ✓ արժեթղթերի տեղաբաշխման կասեցման, արժեթղթերի առևտրի կասեցման և դադարեցման հարցերը,
- ✓ արժեթղթերի կարգավորվող շուկայի և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների, դրանց փոփոխությունների և լրացումների գրանցման հարցերը,
- ✓ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող և վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների կամ այլ կերպ կարգավորվող անձանց վերահսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները, առկայության դեպքում՝ ֆինանսական կազմակերպության բացատրությունները և առարկությունները, նրանց նկատմամբ պատժամիջոց կիրառելու կամ չկիրառելու նպատակահարմարության, ինչպես նաև պատժատեսակի որոշման հարցերը,
- ✓ Կենտրոնական բանկի իրավական ակտերով նախատեսված լիազորություններից բխող այլ հարցեր:

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի անդամներն են՝ ՀՀ ԿԲ նախագահը (հանձնաժողովի նախագահն է), ՀՀ ԿԲ նախագահի տեղակալը (հանձնաժողովի նախագահի տեղակալն է), ՀՀ ԿԲ ֆինանսական վերահսկողության վարչության պետը, ՀՀ ԿԲ ֆինանսական համակարգի քաղաքականության և ֆինանսական կայունության վարչության պետը, ՀՀ ԿԲ իրավաբանական վարչության պետը:

Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների կեսից ավելին և նախագահողը: Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը: Հանձնաժողովի նիստն արձանագրվում է: Նիստի արձանագրությունը պատրաստվում է նիստի օրվան հաջորդող վեց աշխատանքային օրերի ընթացքում, որը ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Հանձնաժողովի եզրակացությունը տրվում է բաց քվեարկության արդյունքներով՝ նիստին ներկա գտնվող անդամների ձայների 2/3-ով: Հանձնաժողովի կողմից կայացված եզրակացությունը ներկայացվում է Կենտրոնական բանկի նախագահին կամ Կենտրոնական բանկի խորհրդին՝ ելնելով նրանց համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված իրավասությունների շրջանակից:

3. ՀՀ կենտրոնական բանկի նախագահը

Կենտրոնական բանկի նախագահը Կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձն է: Կենտրոնական բանկի նախագահը պատասխանատու է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված ԿԲ խնդիրների իրագործման համար:

Կենտրոնական բանկի նախագահը՝

- կոորդինացնում և ապահովում է Կենտրոնական բանկի, նրա խորհրդի և խորհրդի անդամների բնականոն աշխատանքը,
- նախագահում է Կենտրոնական բանկի խորհրդի նիստերը, ստորագրում է Կենտրոնական բանկի խորհրդի նիստերի ակտերը և խորհրդի նիստերի արձանագրությունները,
- կազմակերպում է Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ ակտերի կատարումը,
- ներկայացնում է Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում,
- տալիս է լիազորագրեր,
- հաստատում է Կենտրոնական բանկի կառուցվածքը, աշխատակիցների հաստիքացուցակը,
- բացառությամբ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի, նշանակում և ազատում է աշխատանքից Կենտրոնական բանկի ստորաբաժանումների ղեկավարներին և մյուս աշխատակիցներին,
- ընդունում է անհատական և ներքին որոշումներ ու կարգադրություններ, այդ թվում՝ վերստուգվող անձանց ստուգումներ նշանակելու մասին որոշումներ,
- իրականացնում է օրենքով Կենտրոնական բանկի խորհրդի իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ:

4. ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը

Կենտրոնական բանկի խորհուրդը ԿԲ կառավարման բարձրագույն մարմինն է: Խորհուրդը ընդունում է նորմատիվ և անհատական որոշումներ:

Խորհուրդը կազմված է ԿԲ նախագահից, նրա տեղակալից և հինգ անդամներից: Խորհրդի անդամը պատասխանատվություն է կրում ԿԲ խորհրդի կողմից գործունեության կոնկրետ ոլորտներում իրեն վերապահված պարտականությունների իրականացման համար: ԿԲ խորհրդի իրավասություններից[1] է նաև.

- բանկային գործունեության և այլ լիցենզիաների տրամադրումը, դրանց ուժը կորցրած կամ անվավեր ճանաչումը, բանկերի և այլ անձանց լիցենզավորման կարգի սահմանումը,
- օրենքով սահմանված կարգով բանկին, վարկային կազմակերպությանը կամ ապահովագրական ընկերությանն անվճարունակ ճանաչումը, դրանց նկատմամբ սնանկության վարույթի հարուցումը, բանկերի, վարկային կազմակերպությունների կամ ապահովագրական ընկերությունների վերակազմակերպման հետ կապված որոշումների ընդունումը,
- բանկերի գործունեությունը կարգավորող նորմատիվների և դրանց հաշվարկման կարգի հաստատումը,
- բանկերի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերմանը նախնական համաձայնություն տալը կամ մերժելը,
- բանկերում և ապահովագրական ընկերություններում ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների սահմանումը,

[1] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը:*

- բանկերի և ԿԲ կողմից լիցենզավորվող և վերահսկվող այլ անձանց կողմից ԿԲ ներկայացվող հաշվետվությունների ձևերի հաստատումը,
- պետական արժեթղթերով կատարվող գործառնությունների իրականացման կարգերի հաստատումը՝ համաձայնեցված ՀՀ Կառավարության լիազորված մարմնի հետ,
- «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրականացումը:

ԿԲ խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ նախագահի, նրա տեղակալի կամ խորհրդի առնվազն երեք անդամի պահանջով, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ: ԿԲ խորհրդի նիստերն արձանագրվում են: ԿԲ խորհուրդը իրավասու է որոշումներ ընդունել, եթե նիստին ներկա են խորհրդի անդամներից առնվազն հինգը, այդ թվում՝ ԿԲ նախագահը կամ նրա տեղակալը: Որոշումը համարվում է ընդունված, եթե կողմ են քվեարկել նիստին ներկա գտնվող անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկման և կարգավորման գործընթացները

ԿԲ կողմից ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման գործընթացների մանրամասները նկարագրված են.

- ✓ «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում,
- ✓ «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ում,
- ✓ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում,
- ✓ «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ում,
- ✓ «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ում,
- ✓ «Արժեթղթերը հանձնելու առաջարկի հայտարարագրի կազմը, առաջարկի և դրա պայմանների փոփոխությունների հրապարակման կարգը, առաջարկի շուկայական գնի հաշվարկման կարգը, արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկի իրականացման կարգը արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրի թույլտվության դադարեցման դեպքում, արժեթղթերը հանձնելու առաջարկն ընդունելու կամ մերժելու մասին ցանկացած հրապարակային առաջարկության կամ խորհրդի կատարման կարգը» կանոնակարգ 4/10-ում,

- ✓ «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ում,
- ✓ «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ում,
- ✓ «Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ում,
- ✓ «Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման կարգում»,
- ✓ «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ում,
- ✓ «ՀՀ տարածքում արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 11-ում,
- ✓ «Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեության լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12-ում,
- ✓ «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ում,
- ✓ «Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 17-ում,
- ✓ «Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ում,
- ✓ «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 19-ում:

Ֆինանսական կազմակերպությունների կարգավորման դաշտի բարեփոխումների համար, որպես կանոն, հիմք է հանդիսանում ֆինանսական համակարգի նորանոր զարգացումների արդյունքում ի հայտ եկած մարտահրավերների լուծման անհրաժեշտությունը: Կենտրոնական բանկը բացահայտում է ՀՀ ֆինանսական համակարգի կայունությանը և զարգացմանը խոչընդոտող համակարգային խնդիրները, սպառնացող ռիսկերը, հետազոտում ու առաջարկում դրանց

ինստիտուցիոնալ և իրավական լուծումները: Կենտրոնական բանկը հետևում է համաշխարհային ֆինանսական շուկայում ձևավորվող միտումներին ու զարգացումներին, նոր ֆինանսական տեխնոլոգիաներին և ՀՀ ֆինանսական համակարգում դրանց հնարավոր ներդրման ու կիրառման նպատակահարմարության դեպքում հանդես է գալիս համապատասխան առաջարկություններով:

Կենտրոնական բանկի վերահսկողական մարմինն իրականացնում է ֆինանսական կազմակերպությունների փաստաթղթային (այսուհետ՝ հեռակա) և տեղերում վերահսկողություն:

Հեռակա վերահսկողությունը իրականացվում է ֆինանսական կազմակերպություններից ստացված տեղեկատվության հիման վրա: Յուրաքանչյուր ֆինանսական կազմակերպության հեռակա վերահսկողությունն իրականացվում է կոնկրետ վերահսկողների կողմից, որոնք մասնագիտացված են տվյալ կազմակերպության վերահսկողության գործընթացում: Վերջինս հնարավորություն է տալիս վերահսկողին ավելի ամբողջական պատկերացնելու տվյալ ֆինանսական կազմակերպության գործունեությունը, դրա առանձնահատկությունները և ռիսկերը:

Հեռակա վերահսկողության իրականացման համար, օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև համապատասխան կանոնակարգերի պահանջներին համապատասխան, վերահսկվող կազմակերպությունները Կենտրոնական բանկի Վիճակագրության վարչություն են ներկայացնում հաշվետվական ձևեր՝ սահմանված բովանդակությամբ և պարբերականությամբ, որոնք, համապատասխան ստուգումներից հետո, տրամադրվում են Ֆինանսական վերահսկողության և Ֆինանսական համակարգի քաղաքականության և ֆինանսական կայունության վարչություններին: Նշված վարչությունները վերահսկողական և վերլուծական աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով օգտվում են նաև վարկային ռեգիստրից ստացված տեղեկատվությունից, նախորդ ժամանակաշրջաններում Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվություններից, նախորդ և ընթացիկ ժամանակաշրջաններում ֆինանսական կազմակերպություններից ստացված գրություններից, ծանուցումներից, հեռանկարային զարգացման ծրագրերից, հրապարակված ֆինանսական հաշվետվություններից և դրանց կցված աուդիտորական եզրակացություններից, տեղերում ստուգումների արդյունքներից և այլ միջոցներով ստացված տեղեկատվությունից: Ընդհանուր առմամբ, հեռակա վերահսկողության ժամանակ իրականացվում է ֆինանսական կազմակերպությունների գործունեության շարունակական վերլուծություն՝ ֆինանսական վիճակի, ռիսկերի մակարդակի գնահատման ու կազմակերպությունների գործունեությունը կանոնակարգող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանության ստուգման նպատակներով:

Հեռակա վերահսկողության ընթացքում հայտնաբերված ռիսկերի առավել համապարփակ ուսումնասիրության, դրանց առաջացման պատճառների բացահայտման նպատակով, ինչպես նաև Կենտրոնական բանկի նախագահի կարգադրությամբ հաստատված՝ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ստուգումների ժամանակացույցի հիման վրա կազմակերպություններում իրականացվում են տեղերում ստուգումներ:

Բանկերի հեռակա վերահսկողության հիմնական նպատակը բանկերի հնարավոր կորուստները կանխատեսելու և/կամ նվազեցնելու համար վերջիններիս ֆինանսական վիճակի շաբաթական, ամսական, եռամսյակային և տարեկան վերլուծությունների միջոցով ռիսկերի բացահայտումն ու գնահատումն է: Մեկ վերահսկող կարող է միաժամանակ վերահսկել առավելագույնը երեք բանկ, և յուրաքանչյուր բանկ պետք է սպասարկվի առնվազն երկու վերահսկողի կողմից: Բանկերի նկատմամբ հեռակա վերահսկողությունն իրականացվում է «Հեռակա վերահսկողության իրականացման» ձեռնարկի կանոններին համապատասխան, որով սահմանվում են հեռակա վերահսկողության իրականացման սկզբունքներն ու մեթոդները, կանոնակարգվում հեռակա վերահսկողության գործընթացները, դրանց հաջորդականությունն ու ժամկետները, ինչպես նաև հեռակա վերահսկողության մեջ ներգրավված անձանց շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները:

Բանկերից ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում յուրաքանչյուրի համար կազմվում են ներքին ամփոփ հաշվետվություններ, որոնցում բացահայտվում են բանկի գործունեությունը բնութագրող ցուցանիշների էական փոփոխությունները, ներկայացվում են գործունեության հիմնական միտումներն ու դրանց փոփոխությունները, իրականացվում է բանկերի ներկա և սպասվող ֆինանսական վիճակի գնահատում, նշվում են բանկի առջև ծառացած հիմնախնդիրները, գործունեության ռիսկային բնագավառները: Հեռակա վերահսկողության ընթացքում բացահայտվում են ոչ միայն բանկի ֆինանսական ցուցանիշների շարժերը, մասնավորապես՝ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվային ակտերով ամրագրված սահմանաչափերից շեղումները, այլ նաև ուսումնասիրվում են դրանց պատճառները, գնահատվում են փոփոխությունները և մշակվում համապատասխան միջոցառումների պլան՝ բացահայտված անթույլատրելի մակարդակում դրսևորվող ռիսկերը կանխելու նպատակով:

Շաբաթական հեռակա վերահսկողության հիմնական նպատակը բանկի ընթացիկ գործունեության օպերատիվ մոնիթորինգն է: Շաբաթական հեռակա վերահսկողության հիմնական ուղղություններն են՝ ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին բանկի գործունեության համապատասխանության ստուգումը, բանկի հաշվեկշռի և հետհաշվեկշռի կառուցվածքի, ռիսկային ոլորտների և խնդրահարույց շարժերի վերլուծությունը: Վերլուծության ընթացքում որոշվում են բանկի գործունեության այն բնագավառները, որոնք ձևավորված պայմաններում առավել զգայուն ու խոցելի են ռիսկերի նկատմամբ կամ նախորդ հաշվետու ժամանակաշրջանում խնդրահարույց հարցադրումների պատճառ են դարձել:

Ամսական հեռակա վերահսկողության հիմնական նպատակն ամսվա ընթացքում բանկի գործունեության և ընթացիկ իրական ֆինանսական վիճակի գնահատումն ու վերլուծությունն է: Տրվում է բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը (ՔԱՄԵԼՍ) և կատարվում վերլուծություն: Վերջինս ենթադրում է բանկի ակտիվների որակի, կապիտալի համարժեքության, եկամտաբերության, իրացվելիության, շուկայական ռիսկերի նկատմամբ զգայունության, կառավարման որակի և ղեկավարության գործունեության գնահատում ու վերլուծություն: Ամսական վերահսկողության ընթացքում տեղեկատվության վերլուծությունը պետք է ունենա հստակ կարգավորման ուղղվածություն այն իմաստով, որ վերահսկողի կողմից պետք է մշակվեն և առաջարկվեն բացահայտված էական խնդիրների վերացման, ազդեցության թուլացման և ապագայում դրանց ի հայտ գալը կանխելու ուղիներ: Նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ ՔԱՄԵԼՍ-ի գնահատականների կտրուկ շեղումների դեպքում վերահսկողի կողմից կատարվում է մանրակրկիտ վերլուծություն՝ շեղումների պատճառները բացահայտելու համար[2]:

Եռամսյակային հեռակա վերահսկողության հիմնական նպատակը բանկի ներկա և սպասվող ֆինանսական վիճակի, ռիսկերի գնահատումն ու վերլուծությունն է: Եռամսյակային հեռակա վերահսկողությունը պետք է ուղղված լինի բանկի՝ շարունակական գործելու հնարավորության գնահատմանը, որը ենթադրում է բանկի գործունեության, ֆինանսական վիճակի փոփոխության, բանկին ներհատուկ ռիսկերի և ֆինանսական կայունության գնահատում ու վերլուծություն: Եռամսյակային հեռակա վերահսկողության ընթացքում վերահսկողը պետք է ձեռնամուխ լինի ռիսկերի, մասնավորապես՝ վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային, գնային, գործառնական և բարի համբավի ռիսկերի գնահատմանը և վերլուծությանը:

Եռամսյակային պարբերականությամբ անցկացվում են նաև ֆինանսական ընկերությունների կողմից տեղեկությունների հրապարակման դիտարկումներ՝ բացահայտելու համար, թե ընկերությունները ինչպես են ներկայացնում սպառողների համար բացահայտման ենթակա տեղեկատվությունը:

Հեռակա վերահսկողության ընթացքում վերլուծվում են բանկերի վարկային, արտարժութային, տոկոսադրույքի, գնային, իրացվելիության ռիսկերը, որի համար կիրառվում են վարկային ռիսկի միգրացիայի մատրիցի, VaR, դյու-

[2] *ՔԱՄԵԼՍ-ի գնահատականը տատանվում է 1 - 5 միավորանոց սանդղակում:*

րացիայի, GAP մեթոդաբանությունները և սթրես - թեստերը: Ընդ որում, վերլուծելով վերոնշյալ ռիսկերի միտումները, պետք է գնահատել դրանց վարքագիծը՝ աճող, կայուն և նվազող:

Տարեկան հեռակա վերահսկողության նպատակը հաշվետու տարվա ընթացքում բանկի տարեկան գործունեության և ֆինանսական կայունության վերլուծությունն է, որը պետք է ուղղված լինի բանկի երկարաժամկետ գործելու հնարավորության գնահատմանը:

Վերլուծությունների ընթացքում բացահայտված ռիսկերի պարագայում վերահսկողը բանկի վճարունակության, ֆինանսական վիճակի կայունության, երկարաժամկետ գործունեության ապահովման նպատակով, անհրաժեշտության դեպքում առաջարկում է վերահսկողական միջոցառումների ցանկ: Հեռակա վերահսկողության արդյունքում բացահայտված խնդիրները կարող են հիմք հանդիսանալ նաև տեղերում ստուգումների իրականացման համար կամ կարող են ներառվել համալիր ստուգման ծրագրերում: Հեռակա վերահսկողությունը կարևորվում է նաև այն առումով, որ, ժամանակին ու ճիշտ բացահայտելով բանկի խնդիրներն ու ռիսկերը, հնարավորություն է տալիս բարձրացնելու ընդհանուր վերահսկողության արդյունավետությունը՝ վերահսկողական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ու վերստուգվող անձանց մոտ ստուգումների պլանավորման միջոցով:

Կենտրոնական բանկը ՀՀ տարածքում գործող բանկերում և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում տեղերում ստուգումներ է իրականացնում համաձայն «Բանկերում վերստուգումների իրականացման ձեռնարկի»: Բանկի տարբեր ոլորտների վերահսկողությունն իրականացնելիս վերահսկողները գնահատում են բանկի ներքին հսկողության համակարգի, իրականացվող գործընթացների և այդ ոլորտների գործունեությունը կարգավորող ներքին քաղաքականությունների, ընթացակարգերի և կարգերի կիրառելիությունը: Գնահատում են բանկի ներքին հսկողության համակարգը, ներքին աուդիտի գործունեության արդյունավետությունը և պարզում՝ արդյոք բանկի աշխատակիցները գործում են բանկի ղեկավարության կողմից սահմանված սկզբունքներին համապատասխան: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում բանկի կառավարման համակարգի վերլուծությանը և դրա հետ կապված ռիսկերի բացահայտմանը, մասնավորապես՝ բանկի խորհրդի և գործադիր ղեկավարության միջև իրավունքների և պատասխանատվության սահմանազատմանը: Էապես կարևորվում է բանկի գործունեության այն բնագավառների բացահայտումը, որոնք առավել խոցելի են և զգայուն ռիսկերի նկատմամբ:

Տեղերում վերահսկողությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- **Ակտիվների որակ**

Բացահայտվում է բանկի ակտիվների կառուցվածքը՝ շեշտը դնելով վարկային պորտֆելի որակի ու կառավարման մակարդակի գնահատման վրա: Վարկավորման գործունեությունը պետք է իրականացվի բանկի կողմից հաստատված քաղաքականություններին և ընթացակարգերին համապատասխան, ընդ որում՝ դրանցից կատարվող բացառությունները պետք է պատշաճ հիմնավորվեն և փաստաթղթավորվեն: Ստուգման ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվում վարկային պորտֆելի ընդհանուր որակին, եկամտաբերությանը, վարկերի վերադարձելիության մակարդակին և բավարար ապահովության առկայությանը: Վերահսկողի կողմից ստուգվում են նաև բանկի կողմից մատուցվող ներդրումային ծառայությունները, այն պարագայում, երբ բանկը հանդիսանում է ներդրումային ծառայություն մատուցող անձ: Այս դեպքում ստուգման են ենթարկվում բանկի կողմից մատուցվող ներդրումային ծառայությունները՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին և վերջինից բխող ենթաօրենսդրական ակտերին համապատասխանության տեսանկյունից:

- **Պարտավորություններ և կապիտալ**

Բացահայտվում են բանկի պարտավորությունների, մասնավորապես ավանդային պորտֆելի կառուցվածքը, կենտրոնացումները, միջոցների ներգրավման գործընթացի համապատասխանությունը բանկի կողմից սահմանված քաղա-

քականություններին և ընթացակարգերին: Իրականացվում է ավանդային բազայի ստուգում, որը ներառում է Կենտրոնական բանկ ներկայացված և բանկում պահվող ավանդների և ավանդատուների վերաբերյալ տվյալների բազայի համեմատումը բանկում ձևավորված տվյալների բազայում ներառված տեղեկատվության հետ, ինչպես նաև ավանդների և ավանդատուների վերաբերյալ տվյալների բազայում արտացոլված տեղեկատվության հավաստիության ստուգումը և երաշխավորված ավանդների հատուցման ենթակա գումարների հաշվարկների համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Բանկի փոխառություններն ուսումնասիրելիս կարևոր է ուշադրություն դարձնել պարտադիր պահուստավորման և ավելցուկային իրացվելիության չափերին, ինչպես նաև պարզել փոխառությունների նպատակը, աղբյուրները, միջին գումարային ծավալը, ժամկետը, միջոցների արժեքը և օգտագործման արդյունավետությունը: Ստուգման ընթացքում գնահատվում է բանկի կապիտալի մակարդակի համապատասխանությունն իր ֆինանսական վիճակին, ռիսկերին և գործունեության ծավալներին:

- **Եկամտաբերություն**

Եկամուտների և ծախսերի վերլուծությունը հնարավորություն է տալիս վերահսկողին եզրակացություն կատարելու բանկի ֆինանսական վիճակի և իրականացված գործառնությունների արդյունքների վերաբերյալ, պարզելու բանկի եկամուտների և ծախսերի հաշիվներում արտացոլված տվյալների արժանահավատությունը: Ստուգման ընթացքում գնահատվում են շահույթի մակարդակը և միտումները, շահույթի տարրերը և դրանց կայունությունը, բանկի՝ անվնաս աշխատելու հավանականությունը և կապիտալի համարժեքության նորմատիվի պահպանումը, ընդհանուր կապիտալի նվազագույն չափի պահպանումը, ծախսերի և եկամուտների պլանավորումը և ղեկավարության ներգրավվածությունը եկամուտների և ծախսերի պլանավորման գործընթացում:

- **Իրացվելիություն**

Ստուգման ընթացքում գնահատվում են բանկի ընթացիկ իրացվելիությունը, միջոցների պահանջը, ընթացիկ և ակնկալվող դրամական հոսքերը, միջոցների ներգրավման աղբյուրները և գինը: Ստուգվում է բանկում իրացվելիության արտահերթ պահանջները բավարարելու ծրագրի առկայությունը, որի անհրաժեշտությունը կարող է ծագել եկամուտների նվազման, չաշխատող ակտիվների աճի, ավանդների կենտրոնացումների, գործառնություններն ընդլայնելու անսպասելի հնարավորության և այլ դեպքերում:

- **Կառավարում**

Գնահատվում են բանկի կորպորատիվ կառավարման որակը, բանկի գործադիր ղեկավարների պարտականություններն ու պատասխանատվությունը, ռիսկերի կառավարման համակարգը: Բացահայտվում է, թե որքանով է բանկի կորպորատիվ կառավարման մեխանիզմն աշխատում հօգուտ բաժնետերերի և այլ շահագրգիռ անձանց: Առաջին հերթին գնահատվում են կառավարման կառուցվածքը և կառավարման գործընթացը: Բանկի կորպորատիվ կառավարման որակի գնահատման նպատակն է՝ պարզել, թե որքանով է արդյունավետ բանկի խորհրդի, գործադիր տնօրենի (տնօրինության), բաժնետերերի, այլ շահագրգիռ անձանց փոխհամագործակցությունը: Ռիսկերի կառավարման համակարգի գնահատման ժամանակ բացահայտվում է բանկի՝ ռիսկերի ճանաչման, չափման, գնահատման, մոնիթորինգի և կառավարման ռազմավարությունը:

- **Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրականացում**

Ոլորտի ուսումնասիրության արդյունքում վերահսկողը պարզում է, թե բանկի՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրականացման քաղաքականությունը, ընթացակարգերը և ներքին հսկողությունը որքանով են բավարարում այս ռիսկերի կառավարման պահանջները: Ստուգում է իրականացվող գործառնությունների

համապատասխանությունը բանկի ընդունած քաղաքականությանը, բանկի կողմից կասկածելի գործառնությունների բացահայտման և ԿԲ լիազոր մարմնին հաշվետվությունների ներկայացման կարգը և պայմանները սահմանող ներքին ակտերի առկայությունը և այլն:

- **Շուկայական վարքագծի վերահսկողություն**

Այս ոլորտի ուսումնասիրության արդյունքում վերահսկողը բացահայտում է բանկի գործարար վարվելակերպում առկա հնարավոր բացթողումները և ռիսկերը, որոնք կարող են վտանգել ֆինանսական ծառայությունների սպառողների շահերը: Այս ոլորտը ընդգրկում է բանկի կողմից հրապարակվող տեղեկատվության պատշաճ ներկայացումը, հաճախորդներին խորհրդատվության տրամադրումը, բողոքների, վեճերի լուծման գործընթացը, մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության բացահայտումը, հաճախորդների սպասարկումը:

- **Այլ ոլորտներ**

Շուկայական ռիսկերի կառավարման մակարդակ, գործառնական ռիսկ, բանկի հետ կապված անձինք, համակարգչային և տեղեկատվական համակարգեր, իրավական խնդիրներ, արտահաշվեկշռային գործառնություններ, ներքին աուդիտ և ներքին հսկողություն, Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում, վճարային համակարգերի ռիսկ և միջոցների էլեկտրոնային փոխանցում:

- **Բանկի ընդհանուր գնահատումը**

Բանկի ընդհանուր գնահատման արդյունքում վերահսկողը պատկերացում է կազմում բանկի ներկա ֆինանսական վիճակի և հեռանկարների վերաբերյալ՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ բանկի ներքին հսկողության համակարգը, ներքին քաղաքականությունների և ընթացակարգերի առկայությունը և որակը, ՀՀ օրենքների և/կամ այլ իրավական նորմերի խախտումները, բանկի ղեկավարության որակը, բանկի կապիտալի համարժեքությունը, դասակարգված ակտիվների ծավալը, բանկի գործունեությունը բնութագրող կարևոր գործոնների անկայունությունը և այլն:

Ստուգման արդյունքների հիման վրա կազմվում է բանկի ստուգման հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են իրականացված ստուգման ուղղությունները, շրջանակը, բանկում բացահայտված խնդիրները, ռիսկերը, բանկի ֆինանսական վիճակը, հիմնական տնտեսական նորմատիվները, բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը (ՔԱՄԵԼՍ), ինչպես նաև ստուգման վերաբերյալ ներկայացվում են եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ:

Ապահովագրական գործունեություն իրականացնող ընկերությունների (ապահովագրական ընկերություններ և ապահովագրական բրոքերային ընկերություններ) հեռակա վերահսկողությունն իրականացվում է «Ապահովագրական գործունեություն իրականացնողների մոտ հեռակա վերահսկողության իրականացման ձեռնարկի» համաձայն՝ հիմնական շեշտադրումներն անելով տվյալների ճշգրտության, համադրելիության և արժանահավատության սկզբունքների վրա: Ձեռնարկում սահմանվում են հեռակա վերահսկողության իրականացման սկզբունքներն ու մեթոդները, կանոնակարգվում հեռակա վերահսկողության գործընթացները, դրանց հաջորդականությունն ու ժամկետները, ինչպես նաև հեռակա վերահսկողության մեջ ներգրավված անձանց շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Հեռակա վերահսկողության արդյունքներն ամփոփվում են ամսական պարբերականությամբ կազմվող վերահսկողական ամփոփ հաշվետվություններում և դրանց արդյունքներով ընկերություններին ուղարկվող առաջարկություններում: Ամփոփ հաշվետվություններում բացահայտվում են ընկերության գործունեությունը բնութագրող ցուցանիշների էական փոփոխությունները, ներկայացվում են գործունեության հիմնական միտումներն ու դրանց փոփոխությունները, իրականացվում է ընկերության ներկա և սպասվող ֆինանսական վիճակի գնահատում, նշվում են ապահովագրական ընկերության առջև ծառացած հիմնախնդիրները, գործունեության ռիսկային բնագավառները: Հեռակա վերահսկողության տարրերից են ներկա-

յացվող տեղեկությունների հիման վրա ընկերությունների ռիսկերի վերլուծությունները, որոնք իրենց հերթին ուղղորդում են վերահսկողներին տեղերում ստուգումների ուղղությունների ընտրության խնդրում, ինչն իր հերթին առավել օպտիմալ և նպատակային է դարձնում տեղերում ստուգումների իրականացման գործընթացը:

Ապահովագրական ընկերությունների հեռակա վերահսկողության հիմնական նպատակը՝ ընկերությունների ֆինանսական վիճակի ամսական, եռամսյակային և տարեկան վերլուծությունների միջոցով թույլատրելի մակարդակից բարձր ռիսկերի կանխատեսումը, բացահայտումն ու գնահատումն է:

Ըստ էության, ապահովագրական ընկերությունների կողմից ԿԲ ներկայացվող հաշվետվությունների հեռակա վերահսկողության և վերլուծությունների գործընթացն իրականացվում է նույնանման մեխանիզմով, ինչ որ՝ բանկերինը: Ամսական հեռակա վերահսկողության արդյունքում իրականացվում է ընկերության գործունեության և ընթացիկ իրական ֆինանսական վիճակի վերլուծություն:

Եռամսյակային հեռակա վերահսկողության հիմնական նպատակը ընկերության ներկա և սպասվող ֆինանսական վիճակի, ռիսկերի գնահատումն ու վերլուծությունն է, այդ թվում՝ ընկերության ցուցանիշների ամփոփ գնահատումը (ՔԱՌԱՄԵԼՍ): Վերջինս ենթադրում է ընկերության ակտիվների որակի, կապիտալի համարժեքության, վերաապահովագրության ոլորտի, ակտուարական հաշվարկների ու պահուստների, եկամտաբերության, իրացվելիության, շուկայական ռիսկերի նկատմամբ զգայունության, կառավարման որակի և ղեկավարության գործունեության գնահատում ու վերլուծություն: Նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ ՔԱՌԱՄԵԼՍ-ի գնահատականների կտրուկ շեղումների դեպքում վերահսկողի կողմից կատարվում է մանրակրկիտ վերլուծություն՝ շեղումների պատճառները բացահայտելու համար: Եռամսյակային հեռակա վերահսկողությունը ուղղված է ընկերության՝ շարունակական գործելու հնարավորության գնահատմանը:

Տարեկան հեռակա վերահսկողության նպատակը հաշվետու տարվա ընթացքում ընկերության տարեկան գործունեության և ֆինանսական կայունության վերլուծությունն է, որն ուղղված է ընկերության գործունեության զարգացման հեռանկարներին:

Ապահովագրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների՝ տեղերում ստուգումներն իրականացվում են համաձայն «ՀՀ տարածքում ապահովագրական գործունեություն իրականացնողների մոտ (տեղերում) ստուգումների իրականացման ձեռնարկի»: Տեղերում վերահսկողությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով՝ բուն ապահովագրություն (անդերրայթինգ), ակտիվների որակ, կապիտալ և եկամտաբերություն, կառավարում, վերաապահովագրություն, ապահովագրական ապրանքի իրացում, այլ ոլորտներ (ապահովադիրների շահերի պաշտպանություն, շուկայական վարվելակերպի կանոնների պահպանում, համակարգչային և տեղեկատվական համակարգեր, իրավական խնդիրներ, Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում):

Ակտիվների որակի ստուգման համատեքստում բացահայտվում է ակտիվների կառուցվածքը՝ շեշտը դնելով դեբիտորական պարտավորությունների, ներդրումների և ապահովագրական պորտֆելի որակի ու կառավարման մակարդակի գնահատման վրա: Պարտավորությունների և կապիտալի ստուգման ժամանակ բացահայտվում են ընկերության պարտավորությունների, մասնավորապես՝ պահուստների և հատուցումների, վերաապահովագրության պորտֆելի կառուցվածքը, կենտրոնացումները: Եկամտաբերության ստուգման ընթացքում գնահատվում են ընկերության եկամուտների կառուցվածքը, շահույթի մակարդակը և միտումները:

Տեղերում ստուգումներն ընդգրկում են նաև ընկերության այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են՝ վերաապահովագրությունը, ապահովագրական վկայագրերը, հատուցումները, իրացվելիությունը, կառավարումը, ՓԼ / ԱՖ ոլորտը, շուկայական վարքագծի վերահսկողությունը, որոնց արդյունքում տրվում է ընկերության ընդհանուր գնահատականը:

Ընկերության ընդհանուր գնահատման արդյունքում վերահսկողը պատկերացում է կազմում ընկերության ներկա ֆինանսական վիճակի և հեռանկարների վերաբերյալ՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ ներքին հսկողու-

թյան համակարգը, ներքին քաղաքականությունների և ընթացակարգերի առկայությունը և որակը, ՀՀ օրենքների և/կամ այլ իրավական նորմերի խախտումները, ընկերության կառավարման որակը, բանկի կապիտալի համարժեքությունը, դասակարգված ակտիվների ծավալը և այլն:

Ստուգման արդյունքների հիման վրա կազմվում է ընկերության ստուգման հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են իրականացված ստուգման ուղղությունները, շրջանակը, ընկերության բացահայտված խնդիրները, ռիսկերը, ֆինանսական վիճակը, հիմնական տնտեսական նորմատիվները, ինչպես նաև ստուգման վերաբերյալ ներկայացվում են եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ:

Ներդրումային ընկերությունների տեղերում և հեռակա վերահսկողության հիմնական նպատակն է կանխատեսել և նվազեցնել ներդրումային ընկերությունների կողմից հնարավոր չարաշահումների իրականացումը, ինչպես նաև բացահայտել բոլոր այն խնդիրները, որոնք կարող են ապագայում ազդել ներդրումային ընկերության ֆինանսական կայունության, ինչպես նաև հաճախորդների նկատմամբ ընկերության պարտավորությունները կատարելու ունակության վրա:

Ներդրումային ընկերությունների տեղերում ստուգումներն իրականացվում են «Ներդրումային ընկերություններում ստուգումների իրականացման ձեռնարկի», ինչպես նաև վերջինիս անբաժանելի մաս կազմող «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի ստուգումների իրականացման ձեռնարկի» համաձայն, որոնցով սահմանվում են տեղերում ստուգումներին նախապատրաստվելու, բուն ստուգման գործընթացները (ստուգման ուղղությունները), ինչպես նաև ստուգման արդյունքների ամփոփումը:

Տեղերում վերահսկողությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- **Ակտիվներ**

Մանրամասն նկարագրվում են ներդրումային ընկերության ֆինանսական ներդրումների, հիմնական միջոցների, դրամական միջոցների, այլ ակտիվների և տեխնիկական պահուստներին և վճարվելիք հատուցումներին համարժեք ակտիվների ստուգման, ինչպես նաև վերլուծությունների արդյունքում բացահայտված խախտումները, խնդիրներն ու թերությունները, դրանց առաջացման պատճառները և ազդեցությունը ներդրումային ընկերության վիճակի վրա:

- **Պարտավորություններ**

Նկարագրվում են հաշվեկշռում արտացոլվող պարտավորությունների բոլոր հաշիվների ստուգման, ինչպես նաև վերլուծությունների արդյունքում բացահայտված խախտումները, խնդիրներն ու թերությունները, դրանց առաջացման պատճառները և ազդեցությունը ներդրումային ընկերության վիճակի վրա:

- **Կապիտալ և եկամտաբերություն**

Նշվում են կապիտալի և շահութաբաժինների, եկամուտների և ծախսերի ստուգման, ինչպես նաև վերլուծությունների արդյունքում բացահայտված խախտումները, խնդիրներն ու թերությունները, դրանց առաջացման պատճառները և ազդեցությունը ներդրումային ընկերության վիճակի վրա:

- **Կառավարում**

Նկարագրվում են կորպորատիվ կառավարման համակարգի, ռիսկերի կառավարման համակարգի և արտաքին աուդիտի ստուգման, ինչպես նաև վերլուծությունների արդյունքում բացահայտված խախտումները, խնդիրներն ու թերությունները, դրանց առաջացման պատճառները և ազդեցությունը ներդրումային ընկերության վիճակի վրա:

- **Գործարար վարվելակերպ**

Նկարագրվում են մատուցվող ծառայությունների, հաճախորդների սպասարկման պատշաճության, բողոքների և վեճերի լուծման, ինչպես նաև գովազդի և հրապարակվող այլ տեղեկությունների ստուգման, ինչպես նաև վերլուծությու-

ների արդյունքում բացահայտված խախտումները, խնդիրներն ու թերությունները, դրանց առաջացման պատճառները և ազդեցությունը ներդրումային ընկերության վիճակի վրա:

- **Այլ ոլորտներ**

Նկարագրվում են ներդրումային ընկերության կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգման, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրականացման ուղղությամբ կատարված ստուգման, ինչպես նաև վերլուծությունների արդյունքում բացահայտված խախտումները, խնդիրներն ու թերությունները, դրանց առաջացման պատճառները և ազդեցությունը ներդրումային ընկերության վիճակի վրա:

Ստուգման արդյունքների հիման վրա կազմվում է ներդրումային ընկերության ստուգման հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են իրականացված ստուգման ուղղությունները, շրջանակը, բացահայտված խնդիրները, ռիսկերը, ներդրումային ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև ստուգման վերաբերյալ ներկայացվում են եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ: Հաշվետվության մեջ ներառվում է նաև ներդրումային ընկերության գործունեության առանձին ուղղություններին տրված գնահատականների ամփոփ մատրիցը:

Կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի նկատմամբ տեղերում և հեռակա վերահսկողության հիմնական նպատակը օրենքով այս անձանց վերապահված գործառույթների արդյունավետ իրականացման, այդ գործառույթների իրականացման ընթացքում օրենքի և դրան համապատասխան ընդունված իրավական ակտերով սահմանված պահանջների խախտումների բացահայտումը և հետագայում կանխարգելումն է: Արժեթղթերի շուկայի այս մասնակիցների վերահսկողությունն ուղղված է նաև նրանց գործունեության և ֆինանսական վիճակի վերլուծությանը՝ շուկայում նրանց մատուցած ծառայությունների հուսալիության և պատշաճ իրականացման հնարավորության ապահովման նպատակով:

Կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի տեղերում վերահսկողությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- Կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեությունը կարգավորող օրենքների, կանոնների և իրավական այլ ակտերի պահանջներին դրանց գործունեության համապատասխանության ստուգում:
- Կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի (այդ թվում՝ վերահսկող ծառայության) կողմից Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվություններում և այլ տեղեկություններում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում:
- Կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի ֆինանսական վիճակի վերլուծություն:
- Կենտրոնական բանկի կողմից Կարգավորվող շուկայի օպերատորին և Կենտրոնական դեպոզիտարիային տրված հանձնարարականների ու առաջարկությունների կատարման ընթացքի և արդյունքների ստուգում:
- Կարգավորվող շուկայի օպերատորին և Կենտրոնական դեպոզիտարիային թույլատրված այլ գործունեության շրջանակներում իրականացրած գործունեությունը կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի պահանջներին այս մասնակիցների գործունեության համապատասխանության ստուգում:

Ստուգման արդյունքների հիման վրա կազմվում է կարգավորվող շուկայի օպերատորի (Կենտրոնական դեպոզիտարիայի) ստուգման հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են իրականացված ստուգման ուղղությունները, շրջանակը,

բացահայտված խնդիրները, ռիսկերը, ֆինանսական վիճակը, ինչպես նաև ստուգման վերաբերյալ ներկայացվում են եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ:

Արժեթղթերի հրապարակային վաճառքի առաջարկությամբ հանդես եկող ընկերությունների և հաշվետու թողարկողների նկատմամբ (այսուհետ՝ թողարկող) վերահսկողության հիմնական նպատակն է արժեթղթերում ներդրողների համար ապահովել այդ արժեթղթերի և դրանց թողարկողների վերաբերյալ ժամանակին, արժանահավատ և օրենսդրությամբ սահմանված շրջանակներում ամբողջական տեղեկատվություն, բացահայտել և կանխարգելել ինսայդերների կողմից ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումը, բոլոր այն խնդիրները, որոնք կարող են ապագայում ազդել թողարկողի արժեթղթերի արդար գնագոյացման և ներդրողների նկատմամբ ընկերության պարտավորությունները կատարելու հնարավորության վրա:

Թողարկող ընկերություններում հեռակա վերահսկողությունն իրականացվում է ընթացիկ վերահսկողության միջոցով, որը ենթադրում է ազդագրերի և առևտրի ազդագրերի, միջանկյալ հաշվետվությունների, էական փաստերի, ներքին տեղեկատվության ուսումնասիրություն և հնարավոր խնդիրների բացահայտում և կանխարգելում:

Թողարկող ընկերություններում տեղերում վերահսկողությունն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի և Արժեթղթերի շուկայի օրենսդրության պահանջների հիման վրա, որոնցով սահմանվում է տեղերում ստուգումների նախապատրաստման, իրականացման և արդյունքների ամփոփման գործընթացը:

Թողարկող ընկերություններում տեղերում ստուգումներն իրականացվում են հետևյալ հիմնական ուղղություններով.

- Թողարկողի կողմից ներկայացված ազդագրերում և առևտրի ազդագրերում, միջանկյալ հաշվետվություններում էական փաստերի, ներքին տեղեկատվության վերաբերյալ կազմված հաշվետվությունների, ինչպես նաև թողարկողի կողմից հրապարակված այլ տեղեկատվության ամբողջականության և արժանահավատության ստուգում.
- Կենտրոնական բանկի կողմից թողարկողին տրված հանձնարարականների ու առաջարկությունների կատարման ընթացքի և արդյունքների ստուգում:

Ստուգման արդյունքների հիման վրա կազմվում է թողարկող ընկերության ստուգման հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են իրականացված ստուգման ուղղությունները, շրջանակը, բացահայտված խնդիրները, թողարկողի ֆինանսական վիճակը, ինչպես նաև ստուգման վերաբերյալ ներկայացվում են եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ:

Վարկային կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, գրավատների, արտարժույթի փոխանակման կետերի հեռակա վերահսկողությունն իրականացվում է բանկերի հեռակա վերահսկողության տրամաբանությամբ: Հեռակա վերահսկողության իրականացման համար հիմք են հանդիսանում այս կազմակերպությունների կողմից ԿԲ ներկայացված հաշվետվությունները: Գրավատներում, փոխանակման կետերում տեղերում վերստուգումներն իրականացվում են հիմնականում օրենսդրության պահանջներին այս կազմակերպությունների գործունեության համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Շուկայական վարվելակերպի կանոնների պահպանման վերահսկողության նպատակով ստուգվում է բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների կողմից հրապարակվող տեղեկատվությունը: Մասնավորապես, պարբերաբար ուսումնասիրվում է վերոնշյալ կազմակերպությունների ինտերնետային կայքերում հրապարակվող տեղեկատվության և թերթերում հրապարակվող հաշվետվությու-

ների համապատասխանությունը «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ով սահմանված պահանջներին:

Ընդհանուր առմամբ, ստուգումների ծրագիրը հաստատում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը: Յուրաքանչյուր ստուգման ավարտից հետո վերստուգող խմբի կողմից պատրաստվում է ստուգման հաշվետվություն և ներկայացվում է Կենտրոնական բանկի խորհրդին:

Հավելված 2. ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը դրանց մասնաճյուղերը

	Առևտրային բանկեր	Մասնաճյուղեր	
		31.12.2008	31.12.2009
1	ՎՏԲ - Հայաստան բանկ	78	74
2	Արդշինինվեստբանկ	55	55
3	Հայէկոնոմբանկ	46	35
4	Արցախ բանկ	14	17
5	Կոնվերս բանկ	25	25
6	ԱԿԲԱ - Կրեդիտ Ագրիկոլ բանկ	30	35
7	Յունիբանկ	30	34
8	Անելիք բանկ	10	10
9	Առէկսիմբանկ - Գազպրոմբանկի խումբ	12	15
10	Ինեկո բանկ	8	9
11	էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստան	9	7
12	Պրոմեթեյ բանկ	4	4
13	Ամերիա բանկ	1	3
14	Զարգացման հայկական բանկ	2	1
15	Հայբիզնեսբանկ	18	22
16	Մելլաթ բանկ	-	-
17	Կասկադ բանկ	2	2
18	Բիբլոս Բանկ Արմենիա	3	3
19	ԲՏԱ բանկ	5	5
20	Արարատ բանկ	25	27
21	Արմսվիսբանկ	-	-
22	ՊրոԿրեդիտ բանկ	4	8
Ընդամենը		381	391

Հավելված 3. ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշներ

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշներ	Արժույթ	31.12.07	31.12.08	Փոփոխությունը 31.12.08-31.12.09	31.03.09	Փոփոխությունը 31.03.09-31.12.08	30.06.09	Փոփոխությունը 30.06.09-31.03.09
Կանխիկ դրամական միջոցներ	Դ	24257482	28450288	17.3%	21789877	-23.4%	22576626	3.6%
	Ա	14834047	13176321	-11.2%	30748463	133.4%	36695562	19.3%
Թղթակցային հաշիվներ ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ	Դ	37055489	38086828	2.8%	39192580	2.9%	32630246	-16.7%
	Ա	38421252	65913580	71.6%	119041949	80.6%	123540945	3.8%
Թղթակցային հաշիվներ բանկերում և այլ պահանջներ բանկերի նկատմամբ	Դ	6761399	8656500	28.0%	2702372	-68.8%	6345649	134.8%
	Ա	56700017	86581202	52.7%	113200541	30.7%	131118333	15.8%
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Դ	8059228	6587006	-18.3%	6421061	-2.5%	8229754	28.2%
	Ա	1859946	1527217	-17.9%	1427405	-6.5%	1529592	7.2%
Պետական արժեթղթեր		112190196	81107632	-27.7%	75663285	-6.7%	69754965	-7.8%
Պարտավորություններ ռեպո համաձ. ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոպով ձեռք բերված արտարժույթի գծով	Դ	-17126389	-5073975	-70.4%	-4713840	-7.1%	-13405538	184.4%
	Ա	-2458329	-2336293	-5.0%	-1565123	-33.0%	-4535236	189.8%
Ռեպո համաձայնագրեր (առանց միջբանկային ռեպոների)	Դ	859588	713847	-17.0%	17898	-97.5%	3618470	20117.2%
	Ա	675841	318411	-52.9%	0	-100.0%	3356007	100.0%
Վարկեր իրավաբանական անձանց	Դ	79265242	120666055	52.2%	99027745	-17.9%	87791004	-11.3%
	Ա	113159142	168984403	49.3%	218254108	29.2%	220949156	1.2%
Վարկեր ֆիզիկական անձանց	Դ	158273388	240194442	51.8%	220408418	-8.2%	196548660	-10.8%
	Ա	47981879	68169327	42.1%	85467617	25.4%	86753797	1.5%
Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին	Դ	5032022	14138116	181.0%	11733666	-17.0%	10954270	-6.6%
	Ա	5019836	4637469	-7.6%	5913096	27.5%	6024667	1.9%
Ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստներ		-7701615	-11932425	54.9%	-14668342	22.9%	-18819163	28.3%
Հաշվարկված ստացվելիք տոկոսներ		4577615	6094732	33.1%	6993654	14.7%	7296641	4.3%
Հիմնական միջոցներ		42534713	51773338	21.7%	51797901	0.0%	53052307	2.4%
Այլ արժեթղթեր		2705543	3393287	25.4%	3935806	16.0%	4928680	25.2%
Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկային լիզինգի և ֆակտորինգի)		7928440	9785213	23.4%	7462153	-23.7%	5702554	-23.6%
Այլ ակտիվներ		23593307	24084979	2.1%	27624390	14.7%	35051172	26.9%
Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ		**764459279**	**1023697500**	**33.9%**	**1127876680**	**10.2%**	**1117689120**	**-0.9%**

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշներ	Արժույթ	30.09.09	Փոփոխությունը 30.09.09-30.06.09	31.12.09	Փոփոխությունը 31.12.09-30.09.09	2009 տարեկան	Փոփոխությունը 31.12.09-31.12.08	
Կանխիկ դրամական միջոցներ	Դ	27348674	21.1%	37996090	38.9%	37996090	9545802	33.6%
	Ա	34407879	-6.2%	26677242	-22.5%	26677242	13500921	102.5%
Թղթակցային հաշիվներ ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ	Դ	39444882	20.9%	44128365	11.9%	44128365	6041537	15.9%
	Ա	147213229	19.2%	148624060	1.0%	148624060	82710480	125.5%
Թղթակցային հաշիվներ բանկերում և այլ պահանջներ բանկերի նկատմամբ	Դ	11083130	74.7%	7917917	-28.6%	7917917	-738583	-8.5%
	Ա	124899202	-4.7%	141790353	13.5%	141790353	55209151	63.8%
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Դ	11463376	39.3%	14513224	26.6%	14513224	7926218	120.3%
	Ա	2163634	41.5%	2085087	-3.6%	2085087	557870	36.5%
Պետական արժեթղթեր		101402093	45.4%	109191067	7.7%	109341848	28234216	34.8%
Պարտավորություններ ռեպո համաձ. ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոպով ձեռք բերված արտարժույթի գծով	Դ	-35831311	167.3%	-33429477	-6.7%	-33429477	-28355502	558.8%
	Ա	-9996688	120.4%	-12586654	25.9%	-12586654	-10250361	438.7%
Ռեպո համաձայնագրեր (առանց միջբանկային ռեպոների)	Դ	10240114	183.0%	11494620	12.3%	11494620	10780773	1510.2%
	Ա	9627720	186.9%	9485661	-1.5%	9485661	9167250	2879.1%
Վարկեր իրավաբանական անձանց	Դ	100364899	14.3%	123864354	23.4%	123864354	3198299	2.7%
	Ա	256214956	16.0%	272064880	6.2%	272064880	103080477	61.0%
Վարկեր ֆիզիկական անձանց	Դ	187123341	-4.8%	194193234	3.8%	194193234	-46001208	-19.2%
	Ա	94570591	9.0%	91713712	-3.0%	91713712	23544385	34.5%
Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին	Դ	11910322	8.7%	13222181	11.0%	13222181	-915935	-6.5%
	Ա	7541666	25.2%	8307450	10.2%	8307450	3669981	79.1%
Ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստներ		-22806406	21.2%	-18406948	-19.3%	-18406868	-6474443	54.3%
Հաշվարկված ստացվելիք տոկոսներ		7978844	9.3%	9032156	13.2%	9032156	2937424	48.2%
Հիմնական միջոցներ		55604873	4.8%	61279249	10.2%	61279248	9505910	18.4%
Այլ արժեթղթեր		8804576	78.6%	4330676	-50.8%	4179895	786608	23.2%
Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկային լիզինգի և ֆակտորինգի)		5533258	-3.0%	7239913	30.8%	7239913	-2545300	-26.0%
Այլ ակտիվներ		44176123	26.0%	51235076	16.0%	51078314	26993335	112.1%
Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ		**1230482977**	**10.1%**	**1325963488**	**7.8%**	**1325806805**	**302109305**	**29.5%**

Հավելված 3 *(շարունակություն)*

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշներ		Արժույթ	31.12.07	31.12.08	Փոփոխությունը 31.12.08-31.12.09	31.03.09	Փոփոխությունը 31.03.09-31.12.08	30.06.09	Փոփոխությունը 30.06.09-31.03.09
Բանկերի թղթակցային հաշիվները		Դ	1709227	1777354	4.0%	5623015	216.4%	795417	-85.9%
		Ա	5505148	3645044	-33.8%	4394140	20.6%	4349009	-1.0%
Այլ պարտավորություններ բանկերի (ներառյալ ԿԲ) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		Դ	41211501	101174369	145.5%	88943486	-12.1%	72170354	-18.9%
		Ա	92057261	170590537	85.3%	195762995	14.8%	182870976	-6.6%
Ցպահանջ պարտավորություններ իրավաբանական անձանց նկատմամբ		Դ	97267404	70036918	-28.0%	66542436	-5.0%	64020812	-3.8%
		Ա	44602379	54907210	23.1%	82033374	49.4%	74551798	-9.1%
Ցպահանջ պարտավորություններ ֆիզիկական անձանց նկատմամբ		Դ	35469848	31074703	-12.4%	21215738	-31.7%	24977256	17.7%
		Ա	32473339	30797457	-5.2%	42897341	39.3%	46641842	8.7%
Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ		Դ	36549690	45796099	25.3%	20240188	-55.8%	18715155	-7.5%
		Ա	22069048	43045053	95.0%	95618214	122.1%	102569676	7.3%
Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ		Դ	61367321	71561027	16.6%	35921598	-49.8%	35434686	-1.4%
		Ա	68714780	102242248	48.8%	166065563	62.4%	168036372	1.2%
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ			19303041	16222730	-16.0%	21155358	30.4%	28760999	36.0%
Հաշվարկված վճարվելիք տոկոսներ			4237650	6621563	56.3%	8370959	26.4%	8371383	0.0%
Այլ պարտավորություններ			30344818	38783344	27.8%	34206749	-11.8%	35688140	4.3%
Հաշվեկշռային ընդհանուր պարտավորություններ			**592882455**	**788275656**	**33.0%**	**888991154**	**12.8%**	**867953875**	**-2.4%**
Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ			116486544	152490167	30.9%	155490167	2.0%	167540167	7.7%
Գլխավոր պահուստ			5801681	6458310	11.3%	6495881	0.6%	8208307	26.4%
Բանկի կողմից հետգնված սեփական բաժնետոմսեր			0	0	-	0	-100.0%	0	0.0%
Չբաշխված շահույթ (վնաս)	Ընթացիկ ժամանակաշրջանի		17998558	27743274	54.1%	-319887	-101.2%	-241983	-24.4%
	Նախորդ ժամանակաշրջանի		20694114	37191188	79.7%	65157669	75.2%	63121958	-3.1%
Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ			**171576824**	**235421844**	**37.2%**	**238885526**	**1.5%**	**249735245**	**4.5%**
Ստացված գրավ			978720939	1489089838	52.1%	1517759658	1.9%	1501853163	-1.0%
այդ թվում՝ պետ.արժեթղթեր			2951772	1160216	-60.7%	1581373	36.3%	345373	-78.2%
Ստացված երաշխավորություն			208570426	419398584	101.1%	490628784	17.0%	526425686	7.3%
Հաշվեկշռից դուրս գրված	վարկեր		7212476	7678839	6.5%	9823409	27.9%	11468970	16.8%
	դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ		2838404	2488080	-12.3%	2831545	13.8%	2816547	-0.5%
	տոկոսներ		3263987	3206455	-1.8%	3699209	15.4%	4018368	8.6%
Տրամադրված երաշխավորություններ			20799014	26349471	26.7%	27278463	3.5%	31901072	16.9%
Տրամադրված գրավներ	ընդամենը		6625523	2975955	-55.1%	3582186	20.4%	3533437	-1.4%
	այդ թվում՝ պետական արժեթղթեր		2580053	114495	-95.6%	0	-100.0%	0	0.0%

Դ - ՀՀ դրամ *Ա – Արտարժույթ*

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշներ		Արժույթ	30.09.09	Փոփոխությունը 30.09.09–30.06.09	31.12.09	Փոփոխությունը 31.12.09–30.09.09	2009 տարեվերջ	Փոփոխությունը 31.12.09–31.12.08	
Բանկերի թղթակցային հաշիվները		Դ	350275	-56.0%	2175587	521.1%	2175587	398233	22.4%
		Ա	2240346	-48.5%	4355481	94.4%	4355481	710437	19.5%
Այլ պարտավորություններ բանկերի (ներառյալ ԿԲ) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		Դ	82546198	14.4%	97314211	17.9%	97314211	-3860158	-3.8%
		Ա	175827350	-3.9%	201302878	14.5%	201302878	30712341	18.0%
Ցպահանջ պարտավորություններ իրավաբանական անձանց նկատմամբ		Դ	77612197	21.2%	72248369	-6.9%	72248369	2211451	3.2%
